ԴՐՕՇԱԿ

ISSN 2579-2954

Հայ Յեղափոխական Դաշնակցության Պաշտոնաթերթ

(**75**-րդ տարի) **Թիվ-2** (1648) Փետրվար 2021

Բովանդակություն

«Դրօշակ» ամսաթերթ
Հայ Յեղափոխական Դաշնակցության
պաշտոնաթերթ
Հիմնադիր՝ «ՀՅԴ պատմութեան թանգարան
հիմնադրամ»
Երևան, Միեր Մկրտչյան փ. 12/1
Հեռ. (+374) 10-52-18-90
Էլ. հասցե՝ droshak@arf.am
Կայք՝ hhttps://www.droshak.am
Գլխավոր խմբագիր՝ Արտաշես Շահբազյան
Խմբագրական խորհուրդ

1- Առաջնորդող

Կործանարար ընթացքը կասեցնել ցանկացած գնով (էջ 1-3)

2- Հարցազրույց

Հարցազրույց ՀՅԴ Բյուրոյի անդամ Արսեն Համբարձումյանի հետ
Ծրագրված, հետևողական աշխատանքի պարագայում է հնարավոր ունենալ երաշխավորված հաջողություններ (էջ 4-6)

3- Քաղաքական

Հրանտ Մելիք-Շահնազարյան
Հայաստանի նոր ուղենիշները (էջ 7-8)

4- Տարածաշրջանային

Վահե Սարգսյան
«Տրանսպորտային ապաշրջափակման» առասպելը կամ Այսրկովկասից ՀՀ-ի լիակատար «վտարումը» (էջ 9-11)

5- Աշխարհաքաղաքական

Վահրամ Էմմիեան
Ամերիկեան դիւանագիտութեան վերաշխուժացումն ու Արցախի հարցին մէջ դերակատարութեան վերականգնումը (էջ 12-14)

6- Ժառանգություն

Էդուարդ Յովհաննիսեան
Զանգւածների ապստամբութիւնը (էջ 15-16)

7- Տեսակետ

Վիգէն Աբրահամեան
Պետական միտքի տագնապը (էջ 17-22)

8- Պատմության լուսարձակ

Վարդան Պետրոսյան
Փետրվարյան անկրկնելի պոռթկումը (էջ 23-28)

Անի Մելքոնյան
Փետրվարյան ապստամբության անհայտ հերոսը. Տիգրան Ծամիուր (Ամսեյան) (էջ 29-30)

Աւօ Գաթրճեան
Փոլատ-Այրիի պատժական արշաւանքի գաղափարական խորհուրդը(էջ 31-35)

9- Ընկերական Զրույցներ

Վրէժ-Արմէն
Պիտանին եւ «անպիտանին» (էջ 36)

Կործանարար ընթացքը կասեցնել ցանկացած գնով

2020 թվականի ավարտին Նիկոլ Փաշինյանը հայտարարեց արտահերթ խորհրդարանական ընտրություններ անցկացնելու մասին, այս հարցով նախաձեռնեց արհեստական քննարկումներ մարդ-կուսակցությունների հետ, զուգահեռաբար ծավալեց համապատասխան քարոզչություն: Մոտավորապես ամիսուկես անց նա իբրև թե իր գլխավորած ուժի հետ հարցը քննարկելուց հետո հայտարարեց, որ արտահերթ ընտրություններ տեղի չեն ունենա: Միաժամանակ օդում կախված մնաց այն վարկածը, թե անհրաժեշտության պարագայում (այսպես ասած՝ հասարակական պահանջի դեպքում) վերադարձ կլինի նույն օրակարգին:

Նախ պետք է արձանագրել, որ պետական-քաղաքական գործընթացները վարչապետի համար մնում են ձեռնածության առարկա՝ պահի ներքաղաքական խնդիրներ լուծելու համար: Ընդ որում, նույն ժամանակ բացարձակ անտարբերություն է դրսևորվում թե՛ Արցախի ներկայի ու ապագայի, թե՛ քայլ-քայլ Հայաստանի հաշվին սահմաններն առաջ տվող թշնամու գործողությունների, թե՛ նահատակված ու գերի զինվորների ճակատագրի և թե՛ Հայաստանի ու Արցախի առջև ծառացած կենսական այլ խնդիրների հարցում:

Ինչևէ, վերադառնանք արտահերթ ընտրությունների հարցին:

Նախորդ տարվա դեկտեմբերին Փաշինյանի հրաժարականի պահանջի ալիքը հասավ զարգացման գագաթնակետին, և ակնհայտորեն այս հանգամանքը ստիպեց իշխանությունը կորցնելուց սարսափող բախտախնդիր ղեկավարին հրապարակ նետելու մի գաղափար, որը պետք է շեղեր իրադարձությունների ընթացքը, ձգձգեր հանգուցալուծումների ժամանակը, ինչպես և համընդհանուր մերժման դատապարտված ղեկավարին օժտեր ներքաղաքական դաշտ վերադառնալու քաղաքական, բարոյական լեգիտիմությամբ: Արտահերթ ընտրությունների գաղափարը Փաշինյանի վերջին խաղաթուղթն է հանձնվելուց առաջ, որովհետև պարունակում է մեծ ռիսկեր իր, ինչպես և իր անպատասխանատու թիմի հետագա ճակատագրի համար, և նա մեծ հրճվանքով պիտի հրաժարվեր դրանից, եթե հնարավոր լիներ դեռևս գրպանում պահել այդ վերջին փամփուշտը: Ի՞նչ իրողություններ ի հայտ եկան հայտարարված նախաձեռնությունից ետքայլ անելու համար: Որոշ մեկնաբանների կարծիքով՝ այս հարցում մեծ դեր է խաղացել Ռոբերտ Քոչարյանի հայտարարությունը գալիք ընտրություններին մասնակցելու վերաբերյալ: Անկախ այն բանից, թե սոցիալական ցանցերով ու անձնական օգտագործման լրատվամիջոցներով շրջանառվող վարկանիշային ինչպիսի ցուցանիշներ կնկարվեն հեղինակազրկված ղեկավարի համար, ակնհայտ է, որ ընտրությունների պարագայում նա չի կարող առաջնային տեղի հավակնել, և իր գլխավորած ուժը հնարավորություն չի ունենալու գոնե դաշինքներ կազմելով ապահովելու խորհրդարանական մեծամասնություն: Իհարկե, կաշին փրկելու համար Փաշինյանը չի խորշի կոպիտ ընտրախախտումների դիմելուց, սակայն որքան էլ իր կամքին հլու լինեն քվեաթերթիկներ հաշվողները, վերջիններիս հնարավորությունները նույնպես սահմանափակ են, քանի որ ամբողջ Հայաստանով մեկ դժվար է լինելու հաշվարկ անել տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների և ընտրական հանձնաժողովների վրա, որոնք պատրաստակամ կլինեն Նիկոլ Փաշինյանի օգտին կեղծարարություններ թույլ տալ: Ակնառու փաստ է, որ Փաշինյանն ու իր թիմը կորցրել են ռեալ իշխանությունը երկրում, և ապօրինություններ գործելու նրանց պարտադրանքին քչերը կենթարկվեն: Վարչաքաղաքական առումով խակ, արտաքին կասկածելի ազդեցությունների ենթակա և բարոյապես անընդունելի թիմակիցները, որոնք սահուն կերպով իշխանության աթոռներին հայտնվեցին հենց միայն «հեղափոխության» առաջնորդի հետ քայլելու շնորհիվ, այլևս միայն դեպի զրոյացում են ձգելու իրենց թիմի և առաջնորդի՝ անկում ապրող վարկանիշը: Այս հարցին մանրամասնորեն անդրադարձանք, որովհետև չենք կասկածում, որ Նիկոլ Փաշինյանը ընտրությունների վերջին փրկօղակին կվերադառնա, երբ հրաժարականի պահանջով ճնշումը դառնա այլևս անհաղթահարելի:

Ինչպես, սակայն, ասվում ու գրվում է անդադար, մեկ օր ավելի իշխանության ղեկի մոտ Նիկոլ Փաշինյանի մնալը հայրենիքին բերում է նորանոր կորուստներ ու ցավագին անակնկալներ, որոնց հանրագումարը կարող է անշրջելի դարձնել մեր պետականության կործանումը: Իշխանավորների կողմից պարբերաբար ձեռնարկվող գործողություններն ու հայտարարությունները ամրապնդում են կասկածը, որ Արցախի հանձնումը պարզապես պատերազմական գործողությունների հետևանք չէր, այլ շատ ավելի մեծ

ու մասշտաբային դավադրության մեկ արարը:

2021 թվականի փետրվարի 10-ին՝ Ազգային ժողով-կառավարություն հարց ու պատասխանի ժամանակ, ՀՀ արտաքին գործերի նախարար Արա Այվազյանը մասնավորապես հայտարարեց. «Թուրքիան միջազգային հանրության ճնշման ներքո հետզհետե պետք է վերադառնա բնականոն գործընթացի, և նախ և առաջ խոսքը այն մասին է, որ այլևս պատճառ չկա Հայաստանի հանդեպ կիրառելու շրջափակում: Ինչպես գիտեք, շրջափակումը և սահմանների փակվելը թուրքական կողմը պայմանավորում էր Արցախում ստատուս-քվոյով, որը փոխվել է ուժի կիրառման միջոցով, և այլևս Թուրքիան որևէ պատճառ չունի սահմանը փակ պահելու Հայաստանի ուղղությամբ: Այս պահի դրությամբ որևէ գործընթաց տեղի չի ունենում, բայց Հայաստանը և մեր դիվանագիտությունը գործուն ջանքեր են գործադրելու, որ մեր անմիջական շրջապատը դառնա նպաստավոր մթնոլորտ Հայաստանի անվտանգության ամրապնդման համար: Կրկնում եմ, որ անվտանգության մթնոլորտն իր մեջ պարունակում է շատ տարրեր»: Ասվածից ակնհայտորեն հետևում է, որ Հայաստանի իշխանությունների համար վերջին պատերազմի հետևանքով Արցախի հարցում ստեղծված իրավիճակն ընդունելի իրողություն է, որը նաև նպաստավոր հող է ստեղծել, որպեսզի Թուրքիան վերացնի Հայաստանի շրջափակումը, և մեր շրջապատում հաստատվի «նպաստավոր մթնոլորտ»: Այդ «նպաստավոր մթնոլորտ»-ի համար, սակայն, Լևոն Տեր-Պետրոսյանի ժամանակներից Թուրքիան հայկական կողմին ներկայացրել է բազմաթիվ այլ նախապայմաններ ևս, որոնց համաձայնել չհամարձակվեցին անգամ կոմունիստները իրենց կառավարման տասնամյակներին: Ինչպես տեսնում ենք, սակայն, Նիկոլ Փաշինյանն ազգային ու բարոյական կաշկանդվածություն չունի, և հավանականությունը մեծ է, որ կարող է ստորագրել Արցախի ու Հայաստանի համար ճակատագրական ցանկացած փաստաթուղթ: Նա, ըստ էության, այդ հայրենադավ գործընթացի մեջ է դեռևս պատերազմական շրջանից, և նույն սցենարի առանձին դրվագները կարելի է համարել և՛ Շուշիի ու Արցախի չգրավված տարածքների հանձնումը, և՛ Մեղրիով Թուրքիային ճանապարհ տալու համաձայնությունը, և՛ Զանգեզուրի հայկական պատկանելությունը վտանգող զարգացումները, և՛ ամեն օր ի հայտ եկող նոր իրողությունները, որոնք միտված են վերացնելու Արցախի ինքնուրույնությունն ու փոխկապվածությունը Հայաստանի հետ՝ քայլ առ քայլ փոխարինելով այն ադրբեջանական ենթակայությամբ:

Իրեն հատուկ խարդավալից գործելակերպի համաձայն՝ Հայաստանի իշխանությունը հասանելի աղբյուրներով հայ հանրության շրջանում փորձում է տարածել այն մտայնությունը, թե այսօր Արցախի շուրջ տեղի ունեցող շատ գործընթացների թելադրողը Ռուսաստանն է, մասնավորապես տարածաշրջանում

ՀՀ ԱԳ նախարար Արա Այվազյան

ունեցած իր ռազմուժի լծակի շնորհիվ:

Սույն թվականի փետրվարի 9-ին ՌԴ առաջին կարգի պետական խորհրդական, «Ռեգնում» լրատվական գործակալության գլխավոր խմբագիր Մռդեստ Կոլերովը «Ֆեյսբուք»-ի իր էջում գրառում է կատարել այն մասին, որ Արցախի ԱԳՆ-ն կարող է լուծարվել Ադրբեջանի պահանջով և Փաշինյանի համաձայնությամբ, իսկ Արցախի արտաքին քաղաքականությամբ զբաղվելու է անձամբ Արայիկ Հարությունյանը, և այս հարցում Ռուսաստանի տեսակետը ոչ ոք չի հարցնում: Զարգացնելով այս թեման՝ այնուհետև «168 ժամ»-ին տված հարցազրույցում նա ուշադրություն է հրավիրել այն հանգամանքի վրա, որ Երևանը լուռ է: Հարցին՝ կմն ուղիղ բանակցություններ հայկական կողմերի և Ադրբեջանի միջև՝ առանց ՌԴ մասնակցության, նա պատասխանել է. «Իհարկե, իրենք իրենց քայլերի մեծ մասն անում են առանց Ռուսաստանի: Դա ակնհայտ է: Ոչ միայն սխալվում է, այլև անբարեխղճորեն սխալվում է նա, ով ասում է, որ Ռուսաստանը ներկայումս լիարժեքորեն ղեկավարում է իրավիճակը Ղարաբաղում և Հայաստանում: Իսկ Ռոբերտ Քոչարյանի հայտարարությունը, որ Փաշինյանը Հայաստանը դաշնակցից վերածել է Ռուսաստանի պրոտեկտորատի, իհարկե, մաքուր պոլեմիկա է: Ավելին կասեմ, որ Փաշինյանի Հայաստանը ոչ միայն պրոտեկտորատ չէ, այլև Ռուսաստանի դաշնակիցը չէ: Այսպես ավելի ճիշտ կլինի ասել: Ենթադրում եմ, որ Փաշինյանի և ադրբեջանցիների միջև շփումները շարունակվում են: Իմ կարծիքով՝ դրանք սկսվել են մինչ պատերազմը: Ես ցանկանում եմ ուշադրություն հրավիրել այն հանգամանքի վրա, որ իմ գրառման առանցքն ու հաղորդագրության իմաստն այն է, որ Ռուսաստանին նրանք չեն տեղեկացրել, և որ այդ հարցի ինքնին քննարկումը տեղի է ունենում առանց ՌԴ-ի մասնակցության. սա գլխավորն է, ինչ ես ցանկանում եմ ասել: Մի շարք նիկոլականներ փորձեցին համոզել ուղիղ հակառակը, որ Ռուսաստանն է դա փորձում անել, ինչը, իհարկե, այդպես չէ»: Ակնարկին, թե պատերազմից հետո տպավորություն է, որ ինչ-որ բան տեղի է ունենում առանց ՌԴ մասնակցության, նա պատասխանել է. «Դրանք պարզապես բառեր են: Օրինակ՝ հայտնի դեպքը, որ վերադարձրել են ֆրանսիացի

լրագրողներին. իսկ ո՞վ նրանց չի տվել մանդատ, ո՞վ չի տվել թույլտվություն՝ Ղարաբաղ մեկնելու համար: Երևանցիները չեն տվել, ինչ կապ ունեն այստեղ ռուսները. ռուսները նայում են փաստաթղթերին. կա՞մ փաստաթուղթ, չկա՞մ փաստաթուղթ, ո՞վ չի տվել նրանց փաստաթղթեր, Երևանում չեն տվել: Եվ... Ակնհայտ է, չէ՞»:

Պրն Կոլերովի ասածներից մեզ համար, իհարկե, ամենակարևորն այն պնդումն է, որ Հայաստանի ու Ադրբեջանի ղեկավարությունների միջև ընթանում են բանակցություններ, և, իհարկե, այդ մասին տեղյակ չէ նաև հայ ժողովուրդը: Այսինքն՝ նրա թիկունքում գաղտնաբար խաղ են անում նրա ճակատագրի հետ, և թե ինչպիսի հետևանքներով հղի խաղ, ամեն հաջորդ օր առավել ակնհայտ է դառնում: Կարելի է ենթադրել, որ ինչ-ինչ շփումներ կան նաև Թուրքիայի ղեկավարության հետ, ինչի մասին մտածելու հիմք են տալիս նաև Հայաստանի արտգործնախարարի վերը բերված մտքերը: Ինչ վերաբերում է բանակցությունների գաղտնիությանը նաև ռուսական կողմի համար, ապա սա տեղավորվում է թուրք-ադրբեջանական տանդեմի, ինչպես և արևմտյան այն ուժերի ցանկությունների շրջանակում, որոնք շահագրգռված են տարածաշրջանից Ռուսաստանի դուրս մղմամբ: Այս նպատակի վրա մեծ գրավ է դրված, և պատահական չէ, որ նույն արևմտյան ուժերն այսօր էլ իրենց պատրաստակամությունն են հայտնում՝ աջակցելու ներկա իշխանություններին «Հայաստանի հետագա բարեփոխումների հարցում», այն պարագայում, երբ ավտորիտար Հայաստանում տեղի է ունենում պետականության կազմալուծում՝ կենսագործունեության բոլոր ոլորտների քայքայմանը զուգընթաց:

Ինչ վերաբերում է ռուսական վերոբերյալ աղբյուրին, ապա Մոդեստ Կոլերովը այն գործիչներից է, ովքեր դատողություններ են անում բնավ ոչ իրենց ենթադրությունների հիման վրա: Այնուամենայնիվ, մեր ունեցած մտահոգությունների արդարացիության մեջ համոզվելու համար բավարար են նաև սեփական աղբյուրները, որոնք պարբերաբար նորանոր փաստեր են հանում ջրի երես: Ավելին՝ իր սև գործը ամբողջացնելու համար Նիկոլ Փաշինյանը կարող է ոչ միայն Արցախի ճակատագիրը ամբողջապես Ադրբեջանի տնօրինությանը հանձնելու, Հայաստան-Ադրբեջան և Հայաստան-Թուրքիա սահմանները ճանաչելու փաստաթուղթ ստորագրել, այլև վերանայել ռուսական ռազմական ուժերի՝ Հայաստանում գտնվելու պայմանագիրը և Հայաստանի սահմանը լրիվ բացել Թուրքիայի առջև, այն Թուրքիայի, որի նկատմամբ հատուկ սեր են տածում շատ իմքայլականներ, և որը ընդամենը ամիսներ առաջ ադրբեջանցիների հետ իրականացրեց արցախցիների ցեղասպանությունը:

Ինչ վերաբերում է Նիկոլ Փաշինյանի անձին, ապա նա հայտնվել է այն մոլագարի վիճակում, ով, ծանր ոճրագործությունից հետո սթափվելով, հասկանում է, թե ինչ պատասխանատվություն է իրեն սպասվում, և դրանից խուսափելու համար դիմում է նորանոր, հանցագործությունների: Այս ճանապարհին նրա համար գրոշի արժեք չունեն ոչ թիմակիցները, ոչ ուժային կառույցների՝ խամաճիկների վերածված ղեկավարները, ոչ Հայաստանն ու Արցախը: Փաշինյանն այսօր մեր երկրի ու հայ ժողովրդի թիվ մեկ թշնամին է, ով ամեն ինչ տանում է կործանման: Նման դեպքում հայ ժողովրդի օրինական իրավունքն է այս կործանարար ընթացքը կասեցնել ցանկացած գնով: ■

Ծրագրված, հետևողական աշխատանքի պարագայում է հնարավոր ունենալ երաշխավորված հաջողություններ

Հարցազրույց ՀՅԴ Բյուրոյի անդամ Արսեն Համբարձումյանի հետ

Դրոշակ - Ընկեր Արսեն, վերջին շաբաթները Հայաստանի ներքաղաքական մթնոլորտի առումով կարելի է համարել համեմատաբար խաղաղ ժամանակահատված: Ոմանք շտապեցին եզրակացնել, թե Հայրենիքի փրկության շարժումը մարել է: Սրանից էլ հետևություն է արվում, որ շարժման պահանջները, այսպես ասած, համաժողովրդական պահանջարկ չէին վայելում: Ինչ կասեք այս մասին, ինչպես կգնահատեք ներկա իրավիճակը և ինչ կարծիք ունեք առաջիկա զարգացումների վերաբերյալ:

Այդ խաղաղությունը շատ հարաբերական է: Իրականում վարչախմբի հեռացմանն ուղղված պայքարը շարունակվում է, պարզապես տակտիկական որոշ վերանայումների խնդիր կա: Պայքարը համաժողովրդական շարժման վերածելու համար որոշակի փոփոխությունների անհրաժեշտություն կա թե՛ գործիքակազմի, թե՛ ընդգրկման և աշխարհագրության առումով: Ամեն դեպքում վճռականության պակաս չկա: Ակտիվ պայքարի մեջ ներգրավված մարդկանց թվով դատողություններ անել իշխող վարչախմբի հեռացման հանրային պահանջի կամ պայքարի համաժողովրդական լինել-չլինելու մասին այս պարագայում ճիշտ չէ: Գուցե շատերն ակնկալում էին, որ հնարավոր է շատ արագ հասնել իշխանափոխության, սակայն դա չպետք է հիասթափության առիթ հանդիսանա: Սա քաղաքական սպրինտ չէ, այլ մարաթոն, և պայքարը շարունակվելու է այդ տրամաբանությամբ: Սկսված պայքարը թեև դեռ չի պսակվել վերջնական հաջողությամբ, սակայն իշխող վարչախմբի մահը օբյեկտիվորեն այլընտրանք չունի: Որքան ձգվի հոգեվարքը, այդքան ցավոտ կլինի մահը: Իրավական, քաղաքական, բարոյական պատասխանատվությունն անխուսափելի է: Այն, որ իշխանությունները մերժված են, ըստ էության, փաստարկման կարիք չունի: Կառավարության և Ազգային ժողովի նիստերը, ամենատարբեր քննարկումներն ու հանդիպումներն ընդամենը ֆարս են: Վարչախումբն այլևս լուրջ չի ընկալվում, այն լրիվ հեղինակազրկված է և օրեցօր սպառում է լեգիտիմության վերջին փշրանքները: Անշուշտ, խիստ ցանկալի է, եթե չասենք՝ անհրաժեշտություն է, որ օրվա իշխանությունները հնարավորինս արագ հեռանան, սակայն կարևոր է, որ դա տեղի ունենա քաղաքական ճանապարհով և հնարավորինս անցնցում: Դժբախտաբար, իշխանության ձևավորման սահմանադրական իրավակարգավորումները կաշկանդումներ և որոշակի դժվարություններ են ստեղծում: Սակայն գործող Սահմանադրության շրջանակներում ևս խնդիրն անիրագործելի չէ: Հաջողության հասնելու առումով կարևոր է, որ հանրային դժգոհության ալիքը զուգակցվի ճիշտ և բազմավեկտոր քաղաքական աշխատանքի հետ:

-Արդեն հայտարարվել է, որ Հայրենիքի փրկության շարժումը հաջորդ հանրահավաքը նշանակել է փետրվարի 20-ին:Կարելի՞ է ենթադրել, որ սրանով ընթացք կստանա շարժման նոր փուլը: Ինչ կարծիք ունեք պայքարի հետագա ընթացքի վերաբերյալ, որքանո՞վ է կենսական այդ գործունեությունը, և ինչ ակնկալիքներ պիտի ունենալ ու ինչի՞ ձգտել:

Որոշակի խորհուրդ կա հենց փետրվարի 20-ին՝ Արցախի վերամիավորման համար սկսված պայքարի տարեդարձի օրը հանրահավաքը կազմակերպելու առումով: 33 տարի տևած պայքարն իմաստազրկելու, արյան, տառապանքների, զոհողությունների գնով ձեռք բերված մեր հաղթանակն առ ոչինչ դարձնելու այս ընթացքը պետք է կասեցվի: Մեր նոր պետականության, ազգային զարթոնքի խորհրդանիշ Արցախը ծանրագույն հարված է ստացել, բայց մեզ պարտադրվող զիջումներին համակերպվելու իրավունք չունենք: Գոյաբանական սպառնալիքի դեմ հանդիման ենք, մեր լինելիության, մեր արժանապատվության, մեր ապագայի հարցն է օրակարգում: Այս պայմաններում ազգային, գիտակից բոլոր ուժերի գերխնդիրը մեր պետականության, հայրենիքի փրկությունն է: Չհաջողելու իրավունք չունենք: Բայց արտաքին թշնամուն դիմակայելու համար նախ պետք է ասպարեզից հեռացնել ներքին թշնամուն: Դժբախտաբար, մենք այսօր ունենք մի իշխանություն, որը սպասարկում է թուրք-

ադրբեջանական տանդեմի շահերը: Եվ պայքարը իշխանություն-ընդդիմություն հարթության մեջ չէ. սա դասական իմաստով քաղաքական պայքար չէ, այլ պայքար է հանուն հայրենիքի փրկության: Այս գիտակցումը արմատավորելու, այս գիտակցությամբ պայքարը շարունակելու հարց ունենք: Պետք է հստակ արձանագրվի, որ դավաճան, ապիկար իշխանության հեռացումը ոչ միայն հանրային, այլև համազգային պահանջ է: Բողոքի յուրաքանչյուր քայլ, գործողություն պետք է մոտեցնի օրվա իշխանությունների հեռացման օրը: Վարչապետի պաշտոնը զբաղեցնող անձը և նրա սպասարկուները պետք է անդրադառնան, որ իրենք մերժված են ու անցանկալի:

-Գործող վարչապետը խոսել է իր և իր ղեկավարած իշխանության գործունեության վեցամսյա ժամանակահատվածի անհրաժեշտության մասին: Գուցե իսկապես ճիշտ ճանապարհը իշխանությանը հնարավորություն ընձեռելն է, որ երկրի համար ճակատագրական այս օրերին հանգիստ աշխատի՝ նույնիսկ զանց առնելով ժամանակային սահմանափակումները: Այս իշխանությունն ունա՞կ է լուծելու մեր ներկայի ու ապագայի համար կենսական նշանակություն ունեցող ազգային, քաղաքական, տնտեսական և այլ բնույթի խնդիրները:

Այս իշխանությունները խնդիր լուծող չեն, այլ խնդիրներ ստեղծող: Օրվա իշխանությունների հետ ոչ միայն չի կարելի որևէ հույս կապել, այլև նրանց գոյության յուրաքանչյուր ժամը հղի է նոր վտանգներով, ձախողումներով և անհաջողություններով: Ձինադադարին հաջորդած ժամանակահատվածի գործունեությունը ևս դա է վկայում. խաղաղ պայմաններում մի քանի տասնյակ գերիներ, մարտական նոր կորուստներ, խնդրահարույց սահմանագծումներ, անհետ կորած զինծառայողների որոնողական աշխատանքների ոչ պատշաճ կազմակերպում, չվերադարձված գերիներ, կորսված նոր տարածքներ ու բնակավայրեր, անգործություն սահմանամերձ դարձած բնակավայրերի անվտանգության ապահովման առումով, դավադիր պայմանավորվածություններ, դավաճանական հանձնառություններ, գաղտնի ստորագրված փաստաթղթեր: Մի խոսքով՝ կատարյալ անճարակություն և հանցավոր գործունեություն:

-Վարչապետը կարծես փորձում է օրակարգեր թելադրելու նախաձեռնությունն իր ձեռքում պահել, և այդ շրջանակում շրջանառվող առաջնային հարցերից մեկը վերաբերում է արտահերթ խորհրդարանական ընտրություններին: Ինչ կարծիք ունեք վարչապետի կողմից հրապարակ նետված այս գաղափարի վերաբերյալ:

Վարչապետի պաշտոնը զբաղեցնող անձի կողմից

օրակարգ թելադրելու փորձերը դատապարտված են: Քաղաքական պայմանավորվածությամբ արտահերթ ընտրություններ անցկացնելու պատրաստակամության, իսկ ապա նաև դրանից հրաժարվելու մանիպուլյացիաները իշխանության գոյությունը երկարաձգելու սին փորձեր են: Կարծիք ու տեսակետ փոխելը, կեղծելը, սուտ խոսելը օրվա իշխանությունների մոտ անուղղելի պաթոլոգիա է:

Ինչ վերաբերում է արտահերթ ընտրություններին, ապա հարկ է նկատի ունենալ, որ այդ մասին ի սկզբանե բարձրաձայնել է հենց ընդդիմությունը: Ընդ որում, այդ պահանջը ձևակերպվել է դեռ պատերազմից առաջ: Նոր որակի իշխանության ձևավորումը Հայաստանում անհրաժեշտություն է, և դա հնարավոր է միայն ազատ, արդար ու մրցակցային ընտրությունների միջոցով: Սակայն վստահելի ու թափանցիկ խորհրդարանական ընտրություններ անցկացնելու համար անհրաժեշտ է ապահովել համապատասխան պայմաններ, ինչն օրվա իշխանությունները չեն կարող անել, որովհետև քաղաքական և իրավական պատասխանատվության անխուսափելիության վախը նրանց մղելու է ապօրինությունների: Ուստի որևէ պարագայում գործող վարչապետի գլխավորությամբ ընտրությունների անցկացման ցանկացած փորձ ի սկզբանե կասկածի տակ է դնելու ընտրությունների լեգիտիմությունը և հղի է ապակայունացման ու ներքաղաքական բախումների վտանգներով: Բացի այդ՝ այս պայմաններում արագ ընտրությունները բովանդակային առումով այդպիսին չեն լինի. դա կլինի քվեարկություն, բայց ոչ ընտրություն: Ելքը անցումային կառավարության ձևավորումն է, և այս առումով ընդդիմությունն առաջ է քաշել վարչապետի թեկնածության վերաբերյալ երկու կարևոր սկզբունք. առաջին՝ վարչապետը չպետք է ընտրություններին մասնակից դառնա, և երկրորդ՝ անցումային կառավարության վարչապետի թեկնածուն պետք է ունենա կառավարման անհրաժեշտ փոր-

ձառություն: Այլ կերպ ասած՝ կոնկրետ ինչ-որ մեկի իշխանության բերելու խնդիր դրված չէ. այս փուլում անհրաժեշտ է կայունացնել վիճակը, լուծել երկրի առջև ծառացած հումանիտար, սոցիալ-տնտեսական և հետպատերազմական իրավիճակով պայմանավորված ներքին ու արտաքին հրատապ խնդիրները: Ընտրությունների կարելի է գնալ դրանից հետո: Սա է ընդդիմության պատկերացրած հանգուցալուծման ճանապարհային քարտեզը: Բայց սա չի նշանակում, որ այլ սցենարները բացառված են: Ընտրությամբ թե առանց ընտրության չարիքի իշխանությունը պետք է հեռանա և որքան արագ ու անցնցում, այնքան լավ:

-Գաղտնիք չէ, որ այսօրվա ընդդիմադիր շարժման ակտիվ դերակատար ուժերից մեկը Դաշնակցությունն է: Գաղտնիք չէ նաև, որ պատերազմի առաջին իսկ օրվանից Դաշնակցությունը նախաձեռնել է մարտական, քաղաքական-դիվանագիտական, բարեգործական և այլ բնույթի աշխատանքներ: Գործունեության ինչ ուղղություններ են ներկայումս առաջնային Դաշնակցության համար, ինչ աշխատանքներ են իրականացվում հատկապես բոլորիս առավել հուզող Արցախի ու Հայաստանի ճակատագրերի հետ կապված:

Ստեղծված օրհասական պայմաններում իբրև համահայկական, գաղափարական, կազմակերպված ուժ՝ Դաշնակցությունը հսկայական անելիք ունի: Հատկապես ծանր իրավիճակներում Դաշնակցությունը դառնում է ավելի պահանջված: Պատերազմի առաջին օրվանից, կարելի է ասել՝ առաջին ժամից, Դաշնակցությունը կազմակերպված իր գործն է արել թե՛ ռազմաճակատում, թե՛ թիկունքում: Ցավոք, չենք տեսել, չենք զգացել նույնպիսի ջանք պետության կողմից: Մեզ հասու բոլոր հնարավոր ձևերով և եղանակներով փորձել ենք պատկան մարմիններին մղել շտկելու իրավիճակը, կանխելու վերահաս աղետը, բայց ապարդյուն:

Մեր գնահատմամբ՝ նոյեմբերի 9-ի տխրահռչակ, ըստ էության կապիտուլյացիոն զինադադարով ոչ թե ավարտվել է ամեն ինչ, այլ սկսվել է: Աշխարհաքաղաքական, տարածաշրջանային, ներազգային առումներով մենք միանգամայն նոր իրողությունների ու մարտահրավերների առջև ենք կանգնած: Ունեցել ենք մարդկային, նյութական, տարածքային և տնտեսական ահռելի կորուստներ: Անչափելի է նաև բարոյական կորուստը. վիրավորված է հայ մարդու արժանապատվությունը, սասանված է մեր ինքնավստահությունը: Հսկայական անելիք կա և գերջանքեր գործադրելու անհրաժեշտություն: Մեր պետականաշինության գործում նոր սկիզբ դնելու հարց ունենք, և դա պետք է անել ճիշտ քայլերով. այլևս նոր սխալների, փորձությունների ոչ ժամանակ և ոչ էլ ռեսուրս ունենք: Դաշնակցության համար Արցախի հարցը շարունակում է մնալ Հայ դատի բաղկացուցիչ մաս, հայոց անկախ պետականությունը՝ գերագույն արժեք: Այս հասկացողությամբ և նոր պայմանների թելադրանքով Դաշնակցությունն իր քույր կառույցների և համակիրների միջոցով քաղաքական, դիվանագիտական, կազմակերպական, հումանիտար ուղղություններով լծված է ամենօրյա աշխատանքի: Մենք հավատացած ենք, որ ծրագրված, հետևողական, ճիշտ աշխատանքի պարագայում է միայն հնարավոր ունենալ երաշխավորված հաջողություններ: ■

Հայաստանի նոր ուղենիշները

Հրանտ Մելիք-Շահնազարյան
Քաղաքագետ, «Ոսկանապատ» վերլուծական կենտրոնի ղեկավար

Չնայած Արցախյան երկրորդ պատերազմի ավարտից ավելի քան երեք ամիս է անցել, հայկական պետությունները շարունակում են ամեն օր նոր կորուստներ կրել: Այս իրողությունն այնքան էլ հասկանալի չէ ժողովրդի համար: Մարդիկ կարծում էին, որ նոյեմբերի 10-ի տխրահռչակ եռակողմ հայտարարությունը, որքան էլ այն անբարենպաստ լիներ հայկական կողմի համար, այնուամենայնիվ պետք է որոշակիորեն կայունացներ իրավիճակը Հայաստանի և Արցախի սահմաններում: Բայց ժամանակը ցույց տվեց, որ Արցախի տարածքի բացարձակ մեծ մասը առանց որևէ փամփուշտի զավթելուց հետո թուրք-ադրբեջանական դաշինքը հայացքն ուղղեց դեպի Հայաստանի պետական սահման և սկսեց տարածքներ գրավել նաև Սյունիքի մարզում: Բացի այդ՝ շարունակեցին չլուծված մնալ ռազմագերիների, անհետ կորածների, անտուն մնացածների և հետպատերազմյան բազում այլ հարցեր: Ու թեև այս ամենը չափազանց կարևոր նշանակություն ունի ցանկացած հասարակության համար, այնուամենայնիվ պետք է փաստել, որ պատերազմի ամենակարևոր հետևանքները միանգամայն այլ հարթության մեջ են և առանձնահատուկ մոտեցում են պահանջում:

Խոսքն առաջին հերթին վերաբերում է մեր տարածաշրջանի աշխարհաքաղաքականության փոփոխությանը: Այժմ արդեն ակնհայտ է, որ անվտանգության և հավասարակշռության նախկին մեխանիզմները, որոնք գործում էին Հարավային Կովկասում, այլևս կենսունակ չեն: Պատերազմը փոխեց ամեն ինչ. Թուրքիան դարձավ տարածաշրջանի ռազմաքաղաքական զարգացումների ակտիվ մասնակից, ռուսական զորքերը հայտնվեցին Արցախում, հսկայական տարածքների կորստից բացի՝ հայկական կողմը կորցրեց նաև տարածաշրջանում անվտանգության գործոն լինելու չափազանց կարևոր հնարավորությունը, Իրանը բախվեց նոր մարտահրավերների և այլն, և այլն: Սրանք իրողություններ են, որոնք դեռ երկար ժամանակ լարվածության մեջ կպահեն մեր տարածաշրջանը: Ուժերի տեղի ունեցող վերադասավորումները, բնականաբար, հարթ չեն ընթանում և նորանոր հակամարտությունների, անգամ պատերազմների մեծ ռիսկեր են ստեղծում: Ընդ որում, այդ ռիսկերի նվազեցմանն ուղղված որևէ մեխանիզմ այս պահին դեռևս չի գործում: Ավելին՝ Հարավային Կովկասում աշխարհաքաղաքական շահ հետապնդող այլ երկրների, օրինակ՝ ԱՄՆ-ի, Չինաստանի կամ Ֆրանսիայի հետզհետե ակտիվացումն ավելի անհասկանալի է դարձնում ապագայի տեսլականները: Ուստի անհրաժեշտ է, որ Հայաստանը օր առաջ անվտանգության և արտաքին

քաղաքականության նոր ռազմավարություն մշակի և իր հետագա բոլոր քայլերը տեղավորի այդ նոր ծրագրի տրամաբանության սահմաններում: Նման ռազմավարություն մշակելիս հայկական կողմը որպես ելակետ պետք է ունենա այն գիտակցումը, որ առկա իրավիճակը թե՛ քաղաքական, թե՛ տնտեսական և թե՛ ռազմական առումներով մեզ համար կենսական լրջագույն սպառնալիքներ է պարունակում: Վերջին գործոնը՝ ռազմականը՝ առավել ևս, մանավանդ, եթե հաշվի առնենք այն փաստը, որ Արցախի բնակչությունը, ըստ էության, պատանդի կարգավիճակում է հայտնվել թուրք-ադրբեջանական գործոնի ձեռքում: Այո՛, այնտեղ կան ռուսական խաղաղապահ զորքեր, բայց հասկանալի է, որ Արցախի համար դա անվտանգության բավարար երաշխիք չէ, և անհրաժեշտ են լրացուցիչ լուծումներ, որոնք պետք է հիմնված լինեն Պաշտպանության բանակի վերակազմավորման ու Արցախի որոշ տարածքների դեսկուպացիայի անհրաժեշտության վրա: Երկուսն էլ օրհասական խնդիրներ են, որոնց լուծման ձգձգումը օր օրի ավելի է բարդացնում մեր դրությունը տարածաշրջանում:

Երկրորդ կարևոր խնդիրը, որ ծառացած է մեր պետության առջև, սուբյեկտայնության վերականգնումն է: Արցախյան երկրորդ պատերազմից առաջ ես առիթներ ունեցել եմ խոսելու այն մասին, որ Նիկոլի ապիկար իշխանության գործողությունների հետևանքով Հայաստանը կորցրել է իր սուբյեկտայնությունը: Մեր պետության ու ժողովրդի ճակատագրին վերաբերող հարցերը քննարկվում էին առանց հայկական կողմի մասնակցության: Դա առավել ակներև դարձավ այն պահից, երբ Թուրքիան ինքն իրեն ղարաբաղյան հակամարտության կողմ հռչակեց և սկսեց Արցախի հարցը քննարկել Ռուսաստանի, ԱՄՆ-ի և եվրոպական երկրների հետ: Իսկ հայ-ադրբեջանական սահմանին տեղի ունեցած հուլիսյան իրադարձություններից հետո Հայաստանն ընդհանրապես դուրս մնաց տարածաշրջանային

քաղաքական զարգացումներին մասնակցությունից: Այն ժամանակ մենք բոլորս դարձանք չափազանց վտանգավոր մի իրողության ականատես, երբ Հարավային Կովկասում շահ հետապնդող բոլոր երկրների ղեկավարները սկսեցին միմյանց հետ խոսել հուլիսյան լարվածության մասին: Բոլորը՝ իրար հետ, և ոչ ոք՝ Նիկոլի հետ: Հայաստանի վարչապետը որևէ երկրի ղեկավարի հետ հուլիսյան լարվածության մասին խոսելու ոչ մի հնարավորություն չի ունեցել…

Արցախյան երկրորդ պատերազմից հետո իրավիճակն այդ առումով էլ ավելի վատացավ. հիմա արդեն Թուրքիան և Ադրբեջանն են որոշում, թե Հայաստանի սահմաններն ինչ տեսք պիտի ունենան, ճանապարհային և տնտեսական ինչպիսի ենթակառուցվածքներ պետք է ունենա մեր երկիրը և նմանատիպ այլ հարցեր՝ լավագույն դեպքում իրենց որոշումները համաձայնեցնելով Ռուսաստանի հետ: Հայաստանի կարծիքը որևէ մեկը, ցավոք, հաշվի չի առնում: Եվ դա խնդիր է, որը պետք է շատ արագ լուծվի:

Երրորդ՝ Հայաստանը պետք է կրկին որոշակի գործառույթներ ու պատասխանատվություն ստանձնի տարածաշրջանի ռազմաքաղաքական զարգացումներում: Մինչ 2020 թ. պատերազմը մեր պետությունն առնվազն երկու նման գործառույթ էր իրականացնում. առաջին՝ ուժերի հավասարակշռություն պահպանելով Ադրբեջանի հետ՝ նա պատերազմների և ռազմական գործողությունների կանխման կարևոր դեր ուներ ողջ տարածաշրջանի համար և երկրորդ՝ զսպում էր Թուրքիայի ներխուժումը Հարավային Կովկաս: Այժմ այս ամենն այլևս չկա, իսկ Հայաստանն էլ կայունություն, կանխատեսելիություն և անվտանգություն ապահովող երկրից վերածվել է անվտանգություն սպառող պետության: Պարզ է, որ իր այդ կարգավիճակով հայկական պետությունն այլ երկրների հետ հարաբերություններում որևէ այլ հավակնություն, քան նրանց ձեռքում գործիք լինելն է, չի կարող ունենալ: Իսկ դա, մեղմ ասած, անընդունելի իրողություն է, որը, սպառնալիքներից բացի, որևէ այլ հեռանկար հայ ժողովրդին չի կարող խոստանալ:

Հայկական պետությունների առջև ծառացած կարևորագույն խնդիրների թվում է նաև արտաքին քաղաքականության առաջնահերթությունների մշակումը: Հասկանալի է, որ հետպատերազմյան իրողությունները միանգամայն այլ լուծումներ և մոտեցումներ են պահանջում մեր դիվանագետներից: Բայց, կարծում եմ, արտաքին քաղաքականության ոլորտում ամենակարևորը լինելու է սկզբունքայնությունը: Աշխարհը պետք է հստակ իմանա, թե ինչ արժեքներ է դավանում Հայաստանի Հանրապետությունը, ինչ շահերի համար է պատրաստ պայքարել, աշխարհաքաղաքական և նույնիսկ քաղաքակրթական ինչ ընտրություն է կատարել հայկական պետությունը: Միայն այդ պարագայում Հայաստանը կարող է վստահելի գործընկերոջ և դաշնակցի համբավ ձեռք բերել՝ ծառայեցնելով այդ ամենը մեր երկրի անվտանգության և զարգացման խնդիրներին:

Եվ վերջապես վերջինն ու թերևս ամենակարևորը միասնականության ոգին է: Ցավոք, այս առումով մեր ժողովուրդն այսօր խոր ճգնաժամի մեջ է: Պատերազմն ավելի խորացրեց այդ ճգնաժամը՝ բոլորիս թե՛ որպես հանրություն, թե՛ որպես ժողովուրդ և թե՛ որպես պետություն կանգնեցնելով ոչնչացման շեմին: Հայ մարդը պարտավոր է վերագտնել ինքն իրեն, նոր նպատակներ դնել իր առջև և անշեղորեն ընթանալ այն առաքելության ուղիով, որն ի բնե դրված է մեր ժողովրդի առջև: Սա ազգային անվտանգության կարևորագույն խնդիր է, որը պահանջում է համազգային համախմբում և պետական բոլոր կարողությունների ներդրում: Հակառակ պարագայում անլուծելի կմնան նաև մինչ այս պահը ներկայացված բոլոր հարցերը:

Իհարկե, այս բոլոր խնդիրները պետք է երկար քննարկել, հաշվարկել, ծանրութեթև անել: Եվ չնայած Հայաստանը ճգնաժամային դրության մեջ է, այնուամենայնիվ, մենք պետք է հստակ գիտակցենք, որ արտաքին քաղաքականության և ազգային անվտանգության նոր ռազմավարության մշակման գործը չի կարելի ձգձգել: Փառք Աստծո, մեր անցյալը, իր ձեռքբերումներով ու կորուստներով հանդերձ, ինքնին արդեն շատ հարցերի պատասխաններ է հուշում: Նույնը և մեր հավատքը, արժեհամակարգը և այլն: Մնում է հրաժարվել բոլոր այն մեխանիզմներից, որոնք տարիներ շարունակ ներդրվել են մեր ժողովրդի մեջ՝ մեզ իսկ ավելի կառավարելի դարձնելու նպատակով: Կեղծ արժեքներ, որոնք մատուցվել են որպես ժամանակակից աշխարհի ձեռքբերումներ…

«Տրանսպորտային ապաշրջափակման» առասպելը կամ Այսրկովկասից ՀՀ-ի լիակատար «վտարումը»

Վահե Սարգսյան
Պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտաշխատող

ՀՀ-ի, ՌԴ-ի և Ադրբեջանի ղեկավարների՝ 2020 թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության 9-րդ կետի *(տարածաշրջանում տնտեսական և տրանսպորտային բոլոր կապերի ապաշրջափակում ու ՀՀ տարածքով տրանսպորտային կապ Ադրբեջանի արևմտյան շրջանների և Նախիջևանի միջև)* և 2021 թ. հունվարի 11-ին Մոսկվայում ստորագրված կրկին եռակողմ հայտարարության *(նշյալ կետի իրականացման նպատակով փոխվարչապետերների համատեղ նախագահությամբ եռակողմ աշխատանքային խումբ ստեղծելու մասին)* համաձայն՝ Այսրկովկասում կտրուկ փոխվում է իրադրությունը: Մոսկվայի հանդիպումից հետո ռուսական «Коммерсантъ»-ը, անդրադառնալով հանդիպման արդյունքներին, հրապարակեց տրանսպորտային նոր հաղորդուղու ստորև ներկայացվող քարտեզը:

О ЧЕМ ДОГОВОРИЛИСЬ АЗЕРБАЙДЖАН И АРМЕНИЯ

Քարտեզից պարզորոշ է, որ եռակողմ հայտարարության 9-րդ կետի առաջին նախադասությունը («Տարածաշրջանում տնտեսական և տրանսպորտային բոլոր կապերն ապաշրջափակվում են») տարածվում է միայն Երևան-Ջուլֆա (Ջուղա)-Հորադիզ-Բաքու-Դերբենդ, Իգդիր-Ջուլֆա (Ջուղա)-Հորադիզ-Բաքու-Դերբենդ երկաթուղային և ավտոմոբիլային, ինչպես նաև Իգդիր-Ջուլֆա (Ջուղա)-Հորադիզ-Բաքու ավտոմոբիլային հաղորդուղիների վրա: Ի դեպ, Նախիջևանի Շարուր քաղաքի կայարանից մինչև Թուրքիայի Իգդիր քաղաք երկաթուղի երբևէ չի անցել, և այն պլանավորվում է կառուցել առաջիկայում:

Հասարակությանը ստերով և կեղծիքներով մոլորեցնելու մեջ իրենց վարպետությամբ աչքի ընկած ՀՀ իշխանությունները, բնականաբար, «տրանսպորտային ապաշրջափակումը» ներկայացնում են որպես բարեկեցիկ կյանքի ու տնտեսական վերելքի գրավական՝ **կամ դիտավորյալ թաքցնելով, կամ չհասկանալով «ապաշրջափակման» իրական նպատակներն ու կործանարար հետևանքները:**

Իհարկե, Ադրբեջանի և ՀՀ-ի հարավով հաղորդուղիների վերաբացմանը առաջնայնություն տալը բացատրվում է հայտարարության 9-րդ կետով նախատեսված դրույթներով, սակայն նույն կետի առաջին նախադասության ձևակերպումից **(«Տարածաշրջանում տնտեսական և տրանսպորտային բոլոր կապերն ապաշրջափակվում են»)** հարց է առաջանում՝ **ինչու ընդհանրապես չի խոսվում, օրինակ, Երևան-Իջևան-Աղստև-Եվլախ-Բաքու-Դերբենդ երկաթուղու վերաբացման մասին:** Այս հաղորդուղու վերագործարկման ծախսերը, ի դեպ, անհամեմատ ավելի քիչ են, քանի որ վերագործարկման ենթակա Հրազդան-Դիլիջան-Իջևան-Ղազախ հատվածն անհամեմատ կարճ է և ավելի քիչ է վնասված (Ադրբեջանի երկաթուղային քարտեզներում նշված է, որ երկաթուղու Աղստև-Ղազախ-ՀՀ սահման հատվածը գործող է կամ էլեկտրաֆիկացված), քան հարավային ուղղության Հորադիզ-Ջուլֆա (Ջուղա) և Շարուր-Երևան հատվածները, որտեղ, տարբեր հաշվարկներով, անհրաժեշտ է շուրջ 400-500 մլն դոլարի ներդրում:

Ադրբեջանի երկաթուղու սխեման՝ 2018 թ. դրությամբ (ըստ ադրբեջանական տեղեկագրերի)

Պարզորոշ է՝ վերակառուցվող և կառուցվող հաղորդուղիները «ապաշրջափակվում են» միայն այն ուղղություններով, որոնք բխում են Թուրքիայի և Ադրբեջանի աշխարհաքաղաքական շահերից, և այստեղ տեղին կլինի նշել, որ վերաբացվող հաղորդուղիներով փոխադրվելու են ոչ թե բեռներ կամ մարդիկ, այլ թուրք-ադրբեջանական մեծապետական շահերը:

Կանխատեսումները, որ Ադրբեջանն ամենածիծաղելի պատրվակներով խոչընդոտելու է նշված հաղորդուղիով հայկական կողմի բեռնափոխադրումների իրականացումը, իսկ հայ ուղևորները պարզապես խուսափելու են

ադրբեջանական կայարաններով անցնելով ՌԴ մեկնելուց, միանգամայն փաստարկված են: Ադրբեջանի՝ եռակողմ հայտարարությունների ստորագրումից հետո Արցախի ու ՀՀ-ի հանդեպ ցուցաբերած ծայրահեղ թշնամական (նախկին) վարքագիծն ու քայլերը, Ի. Ալիևի՝ սպառնալիքներով ու շանտաժներով լի ելույթները հազիվ թե այլ կերպ մեկնաբանվեն:

Պատմությունը կրկնվում է ճշգրիտ կերպով: Ինչ նկատի ունենք: Թուրքիան Ադրբեջանի հետ ցամաքային հաղորդուղիով միանալու համար պայքարել է տասնամյակներ շարունակ: 1993 թվականից (Քարվաճառի ազատագրումից) ի վեր նա փակեց Գյումրի-Կարս երկաթուղին և ՀՀ-Թուրքիա սահմանը: Տասնամյակներ շարունակ փակ պահելով այն և տնտեսական մեծ վնաս պատճառելով ՀՀ-ին՝ փոխարենը խոշոր միջոցների ներդրմամբ կառուցվեց Հայաստանը շրջանցող Կարս-Ախալքալաք-Բաքու (ԿԱԲ) երկաթուղին (ի դեպ, այս երկաթուղու կառուցման մոլի ջատագովներից էր «Օրագիր» թերթի խմբագիր, այժմ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը, ով իր թերթի էջերում ժամանակին ցինիկաբար մեղադրել է ջավախահայությանը ԿԱԲ երկաթուղային նախագծին դեմ հանդես գալու համար):

27 տարի անց Քարվաճառը հանձնվեց Ադրբեջանին, սակայն Գյումրի-Կարս երկաթուղին չվերագործարկվեց: Եվ այն երբեք չի վերագործարկվի, և ՀՀ-ն կշարունակի դուրս մնալ շրջափակման խորխորատներում, քանի որ Թուրքիայի իրական նպատակը ոչ այնքան Քարվաճառը հետ ստանալն էր, որքան ՀՀ-ի շրջափակումը: Ավելին՝ Թուրքիային և Ադրբեջանին հաջողվեց վերստին և ևս մեկ ուղղությամբ շրջափակել Հայաստանը. Կարս-Գյումրի-Արմավիր-Երասխ-Շարուր-Նախիջևան երկաթգծի վերագործարկման փոխարեն շուտով կկառուցվի Իգդիր-Շարուր երկաթգիծը, և Թուրքիան, առանց ՀՀ-ից կախում ունենալու, ցամաքով կանցնի դեպի Ադրբեջան (Նախիջևան և Բաքու), Իրան (Ջուլֆա կայարանից) և Ռուսաստան (Բաքվից դեպի Դերբենդ): Մեղրիի հատվածում ՀՀ-ն որևէ ազդեցություն չի կարող ունենալ թուրք-ադրբեջանական հաղորդակցության վրա, քանի որ՝ 1. տրանսպորտային հաղորդակցության հսկողությունն իրականացնելու են ՌԴ ԱԴԾ սահմանապահ ծառայության մարմինները, 2. արևելյան հատվածի անվտանգության դիմաց՝ ՀՀ-ն Ադրբեջանի ձեռքում «պատանդ է հանձնել» Արցախի բեկորները, Սյունիքի և ՀՀ արևելյան սահմանների ռազմավարական կարևորագույն այլ դիրքեր:

Շարուր (Նախիջևան)-Իգդիր երկաթուղին, որի կառուցման մասին 2012 թ. հայտարարել էր նաև վարչապետ Ռ. Էրդողանը, Թուրքիան դիտարկում է որպես Բաքու-Ախալքալաք-Կարս երկաթուղու շարունակությունը հանդիսացող Կարս-Իգդիր-Նախիջևան (ԿԻՆ) երկաթուղային խոշոր նախագծի մի մասը: ԿԻՆ երկաթուղային նախագիծը քննարկվել է մշտապես՝ Կարս-Ախալքալաք-Բաքու նախագծի իրականացմանը զուգահեռ: Թուրքիայի տրանսպորտի, նավագնացության և հաղորդակցության նախարար Ահմեդ Արսլանը 2017 թ. հայտարարել էր, որ ԿԻՆ-ի միջոցով Թուրքիան ոչ միայն դուրս կգա պարսկական շուկա, այլև կկապվի Պակիստանի, Հնդկաստանի և Չինաստանի հարավի հետ: 224 կմ երկարությամբ ԿԻՆ երկաթուղու նախագծի վրա աշխատանքները, ըստ նույն նախարարի՝ 2018 թ. մեկ այլ հայտարարության, մեկնարկելու էին 2018 թ. վերջ-2019 թ. սկիզբ ժամանակահատվածում:

Միանգամայն սպասելի էր, որ Թուրքիայի և Ադրբեջանի համար նոր և խիստ ցանկալի իրողությունների պայմաններում հրատապ կարգով կրկին օրակարգ էր բերվելու ԿԻՆ երկաթուղային նախագիծը: Նոյեմբերի 9-10-ի եռակողմ հայտարարությունից տառացիորեն երկու օր անց՝ նոյեմբերի 12-ին, Թուրքիայի տրանսպորտի և ենթակառուցվածքների նախարար Ադիլ Քարաիսմայիլօղլին հայտարարեց, որ Թուրքիան ծրագրում է երկաթուղի կառուցել դեպի Նախիջևան: Այդ երկաթուղին կառուցելու որոշումը, Քարաիսմայիլօղլու խոսքերով, կայացվել է տարածաշրջանում վերջին իրադարձություններից հետո:



Հպանցիկ հայացք նետելով Այսրկովկասի արդեն գործող և նախանշված նոր ուղիներին՝ կարող ենք փաստել, որ մի կողմից՝ Հրազդան-Դիլիջան-Իջևան-Ղազախ-Աղստև-Եվլախ-Բաքու և Գյումրի-Կարս երկաթուղիների չվերագործարկմամբ, մյուս կողմից՝ ԿԻՆ նախագծի շուտափույթ իրականացմամբ և դրա շարունակությունը հանդիսացող Նախիջևան-Իրան և Նախիջևան-Մեղրի-Հորադիզ-Բաքու-Դերբենդ երկաթուղային հաղորդակցուղիների շուտափույթ վերակառուցմամբ Թուրքիան հավելյալ անգամ շրջափակում է Հայաստանի Հանրապետությունը՝ այն վերածելով երկաթուղիներով շրջափակված յուրօրինակ կղզու:

«Տարածաշրջանում տնտեսական և տրանսպորտային բոլոր կապերի ապաշրջափակումը»՝ պայմանավորված վերջին իրողություններով, ոչ այլ ինչ է, քան ՀՀ-ի և Արցախի մնացյալ բեկորների լիակատար շրջափակում: Այս ամենի հետևանքով ՀՀ-ն՝ որպես պետություն, վերջնականապես կդադարի Այսրկովկասում գործոն լինելուց, ձեռք կբերի «վտարվածի» կամ «մեկուսացվածի» (ռուս.՝ «изгой») կարգավիճակ, և աշխարհը կընդունի իր բոլոր հետաքրքրությունները նրա հանդեպ:

Ամերիկեան դիւանագիտութեան վերաշխուժացումն ու Արցախի հարցին մէջ դերակատարութեան վերականգնումը

Վահրամ Էմմիեան
«Ազդակ» օրաթերթի միջազգային լուրերու խմբագիր

27 սեպտեմբեր 2020ին շղթայազերծուած թուրք-ատրպէճանական յարձակումն ու ատոր ուղղակի հետևանքը եղող Հայաստանի վարչապետին, Ռուսիոյ ու Ատրպէյճանի նախագահներուն՝ 9 նոյեմբերին ստորագրած եռակողմ յայտարարութիւնը ծանր հարուած էին ԵԱՀԿ Մինսքի խմբակի ձևաչափին ու անոր հեղինակութեան: Իրողութիւն մը, որ կարելի դարձաւ Մինսքի խմբակի եռանախագահութեան անդամներէն Միացեալ Նահանգներու՝ իրենց ներքին լուրջ խնդիրներով՝ նախագահական ընտրութեան ու ներքաղաքական լարուած մթնոլորտով զբաղած ըլլալնուն հետևանքով ստեղծուած բացին պատճառով:

Այժմ կացութիւնը փոխուած է. Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Անթընի Պլինքընը 27 յունուարին յայտարարեց. «Ամերիկեան դիւանագիտութիւնը պիտի վերաշխուժացնենք՝ ամրապնդելու համար աշխարհի վրայ մեր շահերն ու արժէքները»: Պայտընը իր կարգին 4 փետրուարին՝ արտաքին քաղաքականութեան վերաբերեալ իր առաջին ճառին ընթացքին, յայտարարեց. «Ամերիկան կը վերադառնայ արտաքին քաղաքականութեան կեդրոն»: Այս ծիրին մէջ Հայաստանն ու հայութիւնը առաւելաբար հետաքրքրող հարցը կը վերաբերի այդ «վերադարձ»ին, Ռուսիա-Միացեալ Նահանգներ, Թուրքիա-Միացեալ Նահանգներ յարաբերութիւններուն ու վերջինիս՝ Թուրքիա-Ռուսիա յարաբերութեան վրայ ունենալիք հաւանական ազդեցութեան: Պայտընը իր երկրին արտաքին գործոց նախարարութեան մէջ իր 4 փետրուարի ճառին ընթացքին խոստացաւ վերականգնել դաշնակիցներու հետ յարաբերութիւնները. Թուրքիան այդ դաշնակիցներէն մէկն է: Թուրք-ամերիկեան յարաբերութիւններու բարելաւումը ժխտական կերպով պիտի ազդէ ռուս-թրքական մերձեցման վրայ, պիտի խանգարէ, արգելակէ կամ առնուազն սանձէ զայն, իսկ ՆԱԹՕի անդամ երկու երկիրներուն միջև յարաբերութիւններու վատթարացումն ու լարուածութիւնը կը խթանէ այդ մերձեցումը, այսինքն՝ Հայաստանի և հայութեան ռազմավարական գլխաւոր դաշնակիցին ու թշնամիին միջև սիրաբանութեան ամրապնդումը, որ, պատմական նախադէպեր յիշեցնելով, բնականաբար չի կրնար չմտահոգել մեզ:

Ուաշինկթընն-Անգարա յարաբերութիւններուն մէջ կան լուրջ խնդիրներ: Իրողութիւն մը, որ Պլինքընը մղեց իր՝ Ծերակոյտին մէջ իր թեկնածութեան հաստատման յատկացուած ունկնդրութեան նիստին ընթացքին հանրապետական ծերակուտական Լինտսի Կրահամի՝ Անգարայի կողմէ ռուսական «Էս-400» հակաօդային պաշտպանութեան համակարգերու գնման մասին հարցումին պատասխանին մէջ ըսելու. «Մեր երկիրի այսպէս կոչուած ռազմավարական գործընկերը իրականութեան մէջ կանգնած է Ռուսիոյ՝ մեր ռազմավարական մեծագոյն մրցակիցներէն մէկուն

կողքին. ատիկա անընդունելի է»: Միւս կողմէ՝ Պայտընի՝ «Էրտողանը պէտք է տապալել» նախընտրական յայտարարութեան կողքին նշանակալից էր քրտական ղեկավարութեամբ Սուրիոյ ժողովրդավարական ուժերու ստեղծման մէջ անմիջական մասնակցութիւն ունեցած, Սուրիոյ մէջ քիւրտերուն աջակցող Պրեթ Մաքկըրքի՝ Միացեալ Նահանգներու Ազգային անվտանգութեան խորհուրդի Միջին Արևելքի և Հիւսիսային Ափրիկէի համակարգողի պաշտօնին նշանակումը, որ, բնականաբար, անմիջապէս թրքական կողմին դժգոհութիւնը յառաջացուց: Աւելին՝ ամերիկեան «Փոլիթիքօ» թերթը հաղորդեց, որ նախագահ Պայտընի ու իր Ազգային անվտանգութեան խումբին կարծիքով՝ Միացեալ Նահանգներուն առջև ծառացած անվտանգութեան մեծագոյն մարտահրաւէրները Չինաստանի և Ռուսիոյ հետ Միացեալ Նահանգներու մրցակցութենէն պիտի բխին, ուստի և ներուժն ու կարելիութիւնները կը վերադասաւորուին, և այդ ծիրին մէջ Միջին Արևելքի թղթածրարը պիտի յանձնուի Մաքկըրքի և անոր օգնական Պարպարա Լիի:

Երկու երկիրներուն միջև «Էս-400»ի և Հիւսիսային Սուրիոյ հարցերուն կողքին գոյութիւն ունին բազմաթիւ այլ խնդիրներ, ինչպէս՝ Թուրքիոյ կողմէ Յունաստանի և Կիպրոսի դէմ քայլերը, Լիպիոյ հարցն ու Իսրայէլի հետ անոր լարուած յարաբերութիւնները: «Հարցն այն է, որ Թուրքիան բազմաթիւ առումներով դաշնակից է, սակայն չի գործեր այնպէս, ինչպէս դաշնակիցը պէտք է գործէ: Եւ ասիկա շատ-շատ կարևոր մարտահրաւէր է մեզի համար: Եւ մենք այդ հարցին մէջ շատ յստակ դիրքորոշում ունինք»,- վերոնշեալ ունկնդրութեան ընթացքին հաւաստեց Պլինքընը, այլ խօսքով՝ թուրք-ամերիկեան յարաբերութիւններու վիճակը կախեալ պիտի ըլլայ այդ հարցերու լուծումէն և ընդհանրապէս Անգարայի վարուելակերպի փոփոխութենէն:

Ուաշինկթընի և Անգարայի միջև վերջերս ստեղծուեցաւ յաւելեալ հարց մը. Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Մևլութ Չաւուշօղլու 29 յունուարին իր իրանցի պաշտօնակից Մոհամէտ Ճաւատ Զարիֆի հետ Պոլսոյ մէջ հանդիպումէն ետք, խօսելով արցախեան

կացութեան մասին, յայտարարեց. «Մենք պէտք է խթանենք զինադադարի դրութիւնը: Այսպիսով՝ մենք կը նախատեսենք այս ուղղութեամբ համագործակցիլ «3+3» (Ռուսիա, Իրան և Թուրքիա+Հայաստան, Ատրպէյճան և Վրաստան) ձևաչափով»: Խօսքը «Վեցեակի հարթակ»ի մասին է, որուն հաւանական ստեղծման մասին 10 դեկտեմբեր 2020ին Պաքուի մէջ թրքական ուժերու մասնակցութեամբ զինուորական շքերթէն ետք՝ մամլոյ ասուլիսի ընթացքին, յայտարարած էր Թուրքիոյ նախագահ Ռեճեպ Թայիփ Էրտողան:

Մենք մեզ կը գտնենք երկու հակադիր ու իրերամերժ ուղղութիւններու՝ ԵԱՀԿ Մինսքի խմբակի ձևաչափը վերաշխուժացնելու ամերիկեան-ֆրանսական ջանքերուն և Արցախի հարցը մէկ այլ ձևաչափով լուծելու թուրք-իրանեան ջանքերուն դէմ յանդիման: Փաստօրէն, ԵԱՀԿ Մինսքի խմբակի ձևաչափէն տասնամեակներով դուրս մնացած Անգարան և Թեհրանը միասնաբար ջանք կը թափեն նոր ձևաչափի մը ստեղծմամբ Ուաշինկթընն ու Փարիզը դուրս մղել ղարաբաղեան հիմնահարցի կարգաւորման հոլովոյթէն: Անոնք այդ փորձը կը կատարեն՝ քաջալերուած 9 նոյեմբերին ԵԱՀԿ Մինսքի խմբակի ձևաչափէն դուրս գոյացած Ռուսիա-Հայաստան-Ատրպէյճան եռակողմ յայտարարութեան նախադէպէն:

Ուշագրաւ է, որ թրքական «3+3» տարբերակին ողնասիւնը ամերիկեան պատժամիջոցներու ենթակայ երկիրներ Ռուսիան, Թուրքիան և Իրանն են, իրողութիւն մը, որ կու գայ այդ երկիրներուն հետ գոյութիւն ունեցող բազմաթիւ խնդիրներու դիմակայման նախապատրաստուող ամերիկեան վարչակազմին մօտ՝ աւելի ևս շեշտելու թրքական «3+3» ձևաչափին հակաամերիկեան բնոյթը, ինչպէս նաև յստակեցնելու, թէ Պլինքընն ծերակուտական Մարէի հարցումին գրաւոր պատասխանին մէջ ո՛ր երկիրներուն կ՚ակնարկէր, երբ կ՚ըսէր, որ Միացեալ Նահանգներու՝ Մինսքի խմբակի ձևաչափով ներգրաւուածութեան աշխուժացումն ու դիւանագիտական լրացուցիչ աշխատանքը «երրորդ կողմերու հետագայ միջամտութիւնը կանխարգիլելու համար» են (այդ «երրորդ կողմեր»ը Թուրքիան և Իրանն են):

Ուշագրաւ է նաև այն իրողութիւնը, որ միջազգայնօրէն ճանչցուած Մինսքի խմբակի ձևաչափին, 9 նոյեմբերի եռակողմ յայտարարութեան ձևաչափին ու նոր կազմուելիք «վեցեակ»ին հասարակ յայտարարը Ռուսիան է, որուն արտաքին գործոց նախարարը 18 յունուարին՝ մամլոյ ասուլիսի մը ընթացքին, յայտարարեց, որ Արցախի վերջնական կարգավիճակին շուրջ Երևանի և Պաքուի միջև տարակարծութիւններ կան, և այդ պատճառով ալ երեք երկիրներուն՝ Հայաստանի, Ռուսիոյ և Ատրպէյճանի ղեկավարները որոշած են այդ հարցը հետագային լուծել: Ան, ուշադրութեան արժանի նշում մը կատարելով, աւելցուց, որ այդ հարցով պէտք է զբաղին նաև ԵԱՀԿ Մինսքի խմբակի համանախագահները, ինչ որ կը վկայէ այդ ձևաչափին գոյութեան նկատմամբ ռուսական հանդուրժողականութեան մասին:

Երեք ձևաչափերուն անդամակցութիւնը Մոսկուային կը շնորհէ անոնց ճակատագիրը ճշդելու կարողութիւն, դիւանագիտական ճկունութիւն ու ընտրանքներու բազմազանութիւն: Ռուսիոյ նախընտրածը, բնականաբար, «9 նոյեմբեր»ի ձևաչափն է, ուր ան

մենակատար է: Մոսկուան ակամայ կը հանդուրժէ ԵԱՀԿ Մինսքի խմբակի ձևաչափը՝ նկատի ունենալով վերջինիս՝ միջազգային լիազօրութեան տէր ըլլալու իրողութիւնը, սակայն մինչև օրս հրապարակաւ արտայայտուած չէ թրքական ձևաչափին մասին. ան կամ պիտի մերժէ զայն, կամ ալ զայն օգտագործէ իբրև լծակ՝ Մինսքի խմբակի ձևաչափը հակակշռելու, և գոյացումը արտօնէ գործնական նկատառումներով՝ հարկ ըլլալու պարագային մետասաներորդ պահուն ռուս-ամերիկեան բանակցութիւններու մէջ թրքական ձևաչափը իբրև մանրուք օգտագործելու և փոխզիջումի մը ծիրին մէջ անկէ հրաժարելու համար:

Ինչ կը վերաբերի Ռուսիոյ հետ յարաբերութեան, ապա Պաղ պատերազմեան փորձառութեան տէր Պայտընի հակառուս կեցուածքները և Ուքրանիոյ մէջ գունաւոր յեղաշրջումին աջակցած Վիքթորիա Նիւլընտի՝ արտաքին գործոց նախարարի քաղաքական հարցերով տեղակալի պաշտօնին նշանակումը, ռուս ընդդիմադիր գործիչ Ալեքսէյ Նաւալնիի հարցով ամերիկեան դիրքորոշումը կու գան ուրուագծելու իր «ռազմավարական մեծագոյն մրցակիցներէն» Մոսկուայի հետ Ուաշինկթընի յարաբերութիւններուն ոչ դրական հեռանկարը: Ռուսիոյ նախագահի բանբեր Տմիթրի Փեսքով ի զուր չէր, որ դեկտեմբեր 2020ի վերջաւորութեան յայտնեց, թէ Քրեմլինը Պայտընի՝ իշխանութեան հասնելէն ետք ռուս-ամերիկեան յարաբերութիւններուն մէջ «դրական ոչինչ» կը նախատեսէ: Ռուսիոյ արտաքին գործոց փոխնախարար Սերկէյ Ռիապքով իր կարգին «Ինթերֆաքս»ին հետ հարցազրոյցի ընթացքին ըսաւ, որ ռուսական կողմը ամերիկեան նոր վարչակազմէն որևէ լաւ բան չի սպասեր, որովհետև Պայտընն ու անոր խմբակը «իրենց ասպարէզը հիմնած են ռուսոֆոպիայի վրայ»՝ նախատեսելով, որ յարաբերութիւնները «վատէն աւելի վատ» պիտի ուղղուին:

Պլինքընի նշած «ամերիկեան դիւանագիտութիւնը վերաշխուժացնելու» ծիրին մէջ նշանակալից էր 24 յունուարին Միացեալ Նահանգներու նախագահ Ճօ Պայտընի՝ Ֆրանսայի նախագահ Էմմանուէլ Մաքրոնի հետ հեռաձայնային հաղորդակցութիւնը, որուն Պայտընն ձեռնարկած էր, որպէսզի, ինչպէս Սպիտակ տունը նշեց, «արտայայտէ մեր հնագոյն դաշնակիցին հետ երկկողմանի կապերը ամրապնդելու ցանկութիւնը»: Երկու ղեկավարները համաձայնեցան սերտ գործակցութեան անհրաժեշտութեան շուրջ, ինչպէս նաև միասնաբար աշխատելու արտաքին քաղաքականութեան հասարակաց առաջնահերթութիւններու, որոնց շարքին՝

Ռուսիոյ և Միջին Արևելքի շուրջ:

Մաքրոն դարձաւ Եւրոպական միութեան անդամ առաջին պետութեան նախագահը, որուն հետ Պայտընն Սպիտակ տուն մուտք գործելէ ետք հաղորդակցութիւն ունեցաւ: Էլիզէի պալատը նշեց, որ այդ իրողութիւնը «երկու նախագահներուն միջև սերտ գործակցութեան փափաքի ցուցանիշ է»:

Երեք օր ետք՝ չորեքշաբթի՝ 27 յունուարին, երկու երկիրներու արտաքին գործոց նախարարներուն՝ Անթընի Պլինքընի և Ժան-Իվ լը Տրիանի միջև տեղի ունեցաւ հեռաձայնային հաղորդակցութիւն մը, որուն ընթացքին ամերիկեան դիւանագիտութեան պետը արտայայտեց «Ֆրանսայի՝ մեր հնագոյն դաշնակիցին ու այլ գործընկերներուն հետ» աշխատելու իր երկրին փափաքը: Միացեալ Նահանգներու նախագահն ու դիւանագիտութեան պետը, Ֆրանսան «մեր հնագոյն դաշնակիցը» կոչելով, կը վերյիշեցնէին Մեծն Բրիտանիայէն Միացեալ Նահանգներու անկախութեան պատերազմին (19 ապրիլ 1775էն 3 սեպտեմբեր 1783) մէջ Ֆրանսայի ունեցած մեծ ներդրումը՝ շեշտելու համար Փարիզի հետ սերտօրէն գործակցելու իրենց փափաքն ու ատոր անկեղծութիւնը:

Այսպիսով՝ ուրուագծուեցաւ Ուաշինկթըն-Փարիզ գործակցութիւն մը, որ, բնականաբար, այլ հարցերու կողքին իր ազդեցութիւնը պիտի ունենայ նաև Արցախի պարագային: Ռուսիոյ հետ ԵԱՀԿ Մինսքի խմբակի եռակողմ համանախագահութեան անդամ այս երկու երկիրները 9 նոյեմբերին դուրս մնացին ղարաբաղեան հիմնահարցին առնչուած, ռուսական ինքնագլուխ միջնորդութեամբ ձեռք բերուած յայտարարութեան մը շուրջ համաձայնութենէն: Մոսկուան բաւարարուեցաւ Մինսքի խմբակի եռանախագահութեան իր գործընկերները կատարուած իրողութենէն տեղեակ պահելով, իրողութիւն մը, որ, բնականաբար, դժգոհ կը ձգէ իրենց արտաքին քաղաքականութեան առաջնահերթ խնդիրներէն եղող Ռուսիոյ հարցով սերտ գործակցութեան շուրջ համաձայնութիւն գոյացուցած Ուաշինկթընն ու Փարիզը և զանոնք պիտի մղէ «սրբագրելու» ստեղծուած «անախորժ կացութիւնը»:

Ռուսիոյ մէջ Միացեալ Նահանգներու դեսպան Ճան Սալիվըն 29 յունուարին յստակ դարձուց, որ իր երկրին նպատակը ԵԱՀԿ Մինսքի խմբակի ձևաչափի լիարժէք վերականգնումն է, երբ յայտնեց. «Միացեալ Նահանգները կը համագործակցի Ռուսիոյ կառավարութեան և այս պարագային նաև Ֆրանսայի կառավարութեան հետ՝ իբրև Մինսքի խմբակի համանախագահ, և մենք կ'ուզենք շարունակել այս հարցերուն շուրջ մեր համագործակցութիւնը»:

Ամերիկեան դիւանագիտութեան պետ Պլինքընն մէկ օր ետք սկսաւ այդ ուղղութեամբ աշխատանք՝ գործնական վկայութիւնը տալով իր երկրին «Մինսքի խմբակի ձևաչափով ներգրաւուածութեան աշխուժացման և դիւանագիտական լրացուցիչ աշխատանք»ի նկատմամբ վճռականութեան: Ան 29 յունուարին զրուցեց Շուէտի արտաքին գործոց նախարար, ԵԱՀԿ գործող նախագահ Ան Լիտէի հետ՝ այլ հարցերու կողքին քննարկելով Հայաստանի և Ատրպէյճանի միջև երկարատև ու կայուն քաղաքական լուծման հասնելու նպատակով ԵԱՀԿ Մինսքի խմբակի համանախագահներու աշխատանքները յառաջ մղելու ջանքերը: Ան իր խօսքին մէջ նշեց, որ իր երկիրը կ'աջակցի ԵԱՀԿի մէջ Շուէտի նախագահութեան և անոր կեդրոնացումը ԵԱՀԿի՝ տարածաշրջանին մէջ ձգձգուող հակամարտութիւններուն մէջ յառաջընթացի արձանագրման:

Արցախի հիմնահարցի լուծման մէջ ամերիկեան դերակատարութեան վերականգնումով այդ հարցին մէջ 9 նոյեմբերի եռակողմ յայտարարութենէն առաջ գոյութիւն ունեցած հաւասարակշռութիւնը առնուազն մասամբ պիտի վերականգնի: Ուաշինկթընն Փարիզի և անոր ետին կանգնող Եւրոպական միութեան օժանդակութեամբ պիտի փորձէ վերջ տալ կամ առնուազն հակակշռելով սանձել ռուսական «մենակատարութիւն»ը, ինչպէս նաև կրնայ սանձել թրքական յարձակողականութիւնը:

Միացեալ Նահանգներ կ'ուզէ ԵԱՀԿ Մինսքի խմբակի ձևաչափի վերականգնումը, սակայն այդ մէկը չի նշանակեր, թէ կ'ուզէ նաև Արցախի Հանրապետութեան տարածքային ամբողջականութեան վերականգնումը: Ատրպէյճանական «Մինվալ» կայքը 27 յունուարին հաղորդեց, որ Ատրպէյճանի մէջ Միացեալ Նահանգներու դեսպան Ըրլ Լիցընպըրկը երկրի տնտեսութեան նախարար Միխայիլ Ճապարովի հետ հանդիպման ընթացքին ընդգծած է, որ ամերիկեան ընկերութիւնները պատրաստ են մասնակցելու Լեռնային Ղարաբաղի՝ Ատրպէյճանի վերահսկողութեան տակ անցած (այսինքն՝ բռնագրաւուած) տարածքներու վերականգնման գործընթացին: Դեսպանին համաձայն՝ ամերիկեան ընկերութիւնները հետաքրքրուած են ջրային պաշարներու կառավարման, ճանապարհային և այլ ենթակառոյցներու ստեղծման հարցերով: Այլ խօսքով՝ թէև Մինսքի խմբակը կը գործէր Արցախեան առաջին պատերազմէն ետք ստեղծուած՝ հայկական կողմին նպաստաւոր սթաթուս քուոյի պայմաններուն մէջ, Ուաշինկթընն, 9 նոյեմբերի եռակողմ յայտարարութեամբ ստեղծուած իրողութեան լոյսին տակ, ինչպէս նաև իր տնտեսական շահերէն մղուած, պիտի նախընտրէ Մինսքի խմբակի աշխատանքը վերականգնել հայկական կողմին ոչ նպաստաւոր սթաթուս քուո անթէ պելլումի՝ յետպատերազմեան սթաթուս քուոյի առարկայական պայմաններուն մէջ:

Ինչ կը վերաբերի Արցախի կարգավիճակի շուրջ բանակցութիւններուն, ապա ամերիկեան վարչակազմը այդ հարցի վերաբերեալ իր դիրքորոշումը մինչև այս պահս հրապարակած չէ, սակայն կարելի է նախատեսել, որ ատիկա մնայ անփոփոխ և Եւրոպական միութեան արտաքին քաղաքականութեան բարձրագոյն յանձնակատար Ճոզեփ Պորելի՝ բանակցութիւնները ԵԱՀԿ Մինսքի խմբակի ծիրին մէջ վերսկսելու անհրաժեշտութեան մասին 19 նոյեմբերի յայտարարութեան համահունչ:

Միացեալ Նահանգներու դիւանագիտութեան վերաշխուժացման իբրև արդիւնքԱրցախի հարցին մէջ անոր դերակատարութեան վերականգնման ազդեցութիւնը որոշ առումներով պիտի ըլլայ դրական, ուստի և ողջունելի, սակայն նաև պիտի ամրապնդէ 44-օրեայ պատերազմ[redacted] հետևանքով գետնի վրայ ստեղծուած պատկերը:

Զանգւածների ապստամբութիւնը

Էդուարդ Յովհաննիսեան

Այն պատմական երեւոյթը, որը Խոսէ Օրտեգա Գասետը անւանում էր «զանգւածների ապստամբութիւն», շատ աւելի հեշտ է նկարագրել, քան վերլուծութեան ենթարկել, որովհետեւ վերլուծութիւնը սեփական մօտեցում է պահանջում, իսկ ես այդ մօտեցումը չունեմ: Նկարագրենք այդ երեւոյթը ճիշտ այնպէս, ինչպէս կէս դար առաջ արեց Գասետը:

«Այսօր մեր քաղաքները լեցուն են մարդկանցով,- գրում է նա,- տները՝ բնակիչներով, հիւրանոցները՝ հիւրերով, գնացքները՝ ուղեւորներով, սրճարանները՝ յաճախորդներով, այգիները՝ սիրահարւածներով, թանգարանները՝ զբօսաշրջիկներով, յայտնի բժիշկների ընդունարանները՝ հիւանդներով, թատրոնները՝ հանդիսատեսով, հանգստեան տները՝ հանգստացողներով: Այն, ինչ շատ հեշտ էր նախկինում, այսինքն՝ տեղ գտնելը, այսօր խնդրոյ առարկայ է:

Մենք տեսնում ենք, որ ամբոխը գրաւել եւ օգտւում է քաղաքակրթութեան բոլոր բարիքներից ու տարածութիւններից: Զանգւածները տեսանելի են դարձել, եւ մենք տեսնում ենք, թէ ինչպէս գրաւել են այն տեղերը, որոնք նախկինում գրաւում էին միայն ընտրեալները: Ժողովուրդը բեմ է բարձրացել եւ խաղում է գլխաւոր դերակատարների դերերը: Այլեւս հերոսները չկան, կան միայն երգչախմբեր»:

Անշուշտ, այս երեւոյթը, ժողովրդավարութեան ու ընկերվարութեան տեսանկիւնից, դրական երեւոյթ է եւ ցոյց է տալիս, որ տեղի է ունենում զանգւածների առաջադիմութիւն, որ սկսւել է մշակոյթների, սեռերի, դասակարգերի հաւասարեցման ընթացքը, եւ որ ընդհանուր առմամբ բարձրանում է դարաշրջանի մակարդակը:

Բայց այս երեւոյթը բերեց իր հետ նաեւ բացասական կողմեր: Բանն այն է, որ զանգւածների՝

բեմ բարձրանալը տեղի ունեցաւ ոչ թէ արժանիքների, այլ իրաւունքների համար: Երբ զանգւածները լցեցին թանգարանները եւ համերգների սրահները, այդ կատարւեց ոչ միայն նրա համար ու նրա հաշւին, որ զարգացաւ մարդկանց գեղարւեստական ճաշակը, այլեւ մեծ մասամբ նրա համար, որ նրանք այդ սրահները մտնելու իրաւունք ստացան:

Ինչպէս վկայում են շատ ամերիկացի հասարակագէտներ, մասնաւորապէս Ռասելը, Ալենը եւ ուրիշներ, ժամանակակից մարդը արւեստի բնագաւառում չափազանց տկար է, որովհետեւ, ասում են նրանք, կարեւոր չէ, թէ քանի միլիոն մարդ է այցելում ցուցահանդէսներ, կարեւորը այն է, թէ քանիսն են տեսնում գեղարւեստական ստեղծագործութեան էութիւնը: Կարեւոր չէ, թէ ինչ է մեր աչքերի առջեւ, կարեւոր է, թէ արդեօք մենք կարողացել ենք թափանցել մեր աչքերի առջեւ տեղի ունեցող երեւոյթի իմաստի մէջ:

Երբ զանգւածը իրաւունք ստացաւ խօսելու, քննադատելու եւ, վերջին հաշւով, որոշելու ստեղծագործութեան յաջողութիւնը եւ արժէքը, նկարիչները, գրողները եւ երաժիշտները սկսեցին յարմարւել զանգւածին ու հրաժարւեցին գրել ու նկարել այն, ինչ, իրենց կարծիքով, «ժողովուրդը չի հասկանայ»: Նախկինում այդպէս չէր, որովհետեւ նկարիչը գիտէր, որ նկարում է ոչ թէ ժողովրդի, այլ իր նման մասնագէտների համար: Այժմ արւեստագէտի յարմարւողականութիւնը փոքր-ինչ գցեց արւեստի որակը:

Սակայն այդ երեւոյթը մեծ մտահոգութիւն չէր պատճառում, քանի դեռ գտնւում էր արւեստի բնագաւառում: Եւ, բացի դրանից, արւեստի ժողովրդականացումը այնքան կարեւոր է, որ կարելի էր այն կատարել արւեստի որակի հաշւին:

Սակայն, երբ այս նոյն մթնոլորտը ստեղծւեց

ազգային եւ քաղաքական գործունէութեան ասպարէզում, մտահոգութիւնը եւ վտանգը շատ աւելի շօշափելի դարձան: Եթէ նախկինում քաղաքական գործունէութիւնը, այսինքն՝ ազգերի ու ժողովուրդների ճակատագիրը, գտնւում էր յատուկ կրթութիւն, փորձ, կարողութիւն ու պատասխանատուութիւն ունեցող մարդկանց ձեռքում, ապա «զանգւածների ապստամբութիւնը» խլեց այդ մարդկանցից ու կազմակերպութիւններից ղեկավարելու եւ ազգային ճակատագիրը որոշելու մենաշնորհը եւ յանձնեց այն զանգւածին:

Հրապարակ բարձրացան բազմաթիւ անձեր, կազմակերպութիւններ, միութիւններ, համագումարներ, նախաձեռնողներ, խմբեր, կարծիքներ ու տեսակէտներ, որոնք, անշուշտ, իրաւունք ունէին խօսելու, բայց ոչ գործելու, որովհետեւ նրանցից շատերը իրենց գիտելիքների, փորձի, ազնւութեան ու պատասխանատուութեան իմաստով բացարձակ տկար էին:

Զանգւածների թափանցումը հասարակական կեանքի մէջ յատկապէս ծանր նստեց պետութիւններից զուրկ ազգերի եւ ժողովուրդների վրայ, որոնք զանգւածներից իրենց հաստատութիւնները պաշտպանելու ոչ մէկ միջոց չունէին: Եւ ահա եկեղեցական վարչութիւնների, ակումբների, միութիւնների ու այլ կազմակերպութիւնների մէջ մտան մարդիկ, որոնց ազնւութիւնը ազգի նկատմամբ շատ կասկածելի էր:

Բայց ինչ արած, ձայների մեծամասնութիւնը տալիս է ոչ միայն խօսելու, այլեւ գործելու իրաւունք: Հոգ չէ, թէ երբեմն ձայների այդ մեծամասնութիւնը ստեղծւում է նարդի խաղալու, օղի խմելու կամ էլ համայնավարութիւնը գովելու հողի վրայ:

Ազատութիւնը ազատութիւն է, եւ նոր յեղափոխականները եւ գաղափարախօսները իջան հրապարակ: Ստեղծուեց այն նոյն կացութիւնը, որը դրանից առաջ ստեղծուել էր արեւեստի բնագաւառում: Կառավարութիւններ, կազմակերպութիւններ, գաղափարախօսներ, քաղաքական ու փիլիսոփայական աշխատութիւնների հեղինակներ սկսեցին յարմարուել փողոց դուրս եկած յեղափոխականներին ու ցուցարարներին, որոնք երբեմն տգէտ էին, երբեմն՝ կաշառուած, իսկ երբեմն էլ՝ պարզապէս երեխաներ:

Զանգւածների ճնշման տակ ամերիկացիները դուրս եկան Վիեթնամից, իսկ խեղճ վիեթնամցիները նաւակներով ծովը թափուեցին՝ փախչելով իշխանութեան գլուխ անցած դաժան համայնավարներից:

Զանգւածների ճնշման տակ յանկարծ ընկերվարականներ դարձան ցմփոր բուրժուաները, իսկ մեզանից շատերը, յարմարուելով զանգւածների՝ «խաղաղ» մնալու ցանկութեանը, գրեթէ վերջ տուեցին «Փետրուար 18» տօնելուն, իսկ «Մայիս 28»ը այնպէս են տօնում, որ հասկանալի չէ, թէ սա Սարդարապատի՞ ճակատամարտն է, թէ՞ անկախ Հայաստանի ստեղծումը:

Մի խօսքով՝ ազգային կեանքի մէջ փոխուեց ղեկավարների ու զանգւածների փոխյարաբերութիւնը:

Եւ ահա այս մթնոլորտում մենք պէտք է մղենք Հայ դատի պայքարը՝ առանց յարմարուելու եւ ճշմարտութիւնները թագցնելու: ■

«Դրօշակ», 1981 թ.

Պետական միտքի տագնապը

Վիգէն Աբրահամեան
«Հորիզոն» թերթի անգլերեն, Ֆրանսերեն հավելվածների և «Հորիզոն գրական» հավելվածի խմբագիր

Վերջին ամիսներուն հայութեան ամբողջ ուշադրութիւնը սևեռուած էր քառասնօրեայ պատերազմի վրայ: Մեծով-փոքրով կը փորձենք հասկնալ կատարուածը, կը քննարկենք պարտութեան պատճառները: Եւ քանի որ առարկայական տեղեկութիւնները տակաւին սակաւ են ու խիստ պակասաւոր, ազգովին կը գտնուինք աշխարհի ամենահին առածի նկարագրած վիճակին մէջ: Խումբ մը կոյրեր կը փորձեն հասկնալ իրենց առջևի արգելքը՝ զայն շօշափելով. մին կը զգուշացնէ, թէ օձ է, միւսը կը պնդէ, թէ պատ է, իսկ երրորդ մը երդումպատառ կ'ըլլայ, թէ պարան է: Մինչդեռ իրենց առջև ունէին... փիղ մը, որուն կնճիթը շօշափողին կը թուար, թէ օձ է, փորին դէմ առնողը կը պնդէր, թէ պատ է, իսկ պոչը բռնողը, պարանէն բացի, այլ բացատրութիւն չէր ընդունիր:

Պարտութեան՝ հրապարակի վրայ շրջանառուող այլևայլ պատճառները ճիշտ այս կոյրերուն վիճակն են. ամեն մարդ կը փորձէ իր տեսածին, աւելի յաճախ՝ լսածին վրայ հիմնուելով պատճառ մը գտնել և փորձել եզրակացութեան մը յանգիլ: Մարդ չի կրնար առանց բացատրութիւն մը ունենալու հանգիստ քնանալ. կրօններու գոյութիւնն այդ իսկ կարիքէն բխած է: Իսկ երբ փորձենք այդ մնացեալ տեղեկութիւնները դասաւորել և հասարակ յայտարարներու ճամբով ընդհանրացումներ գտնել, պիտի նկատենք, որ անոնց մեծ մասը կը վերաբերի ղեկավարման համակարգին: Մնացեալը լափալիսեան ճշմարտութիւններ են, որոնցմէ մէկ-երկուքը թուարկենք ու անցնինք:

— Թշնամին թուային առաւելութիւն ունէր: Նորութիւն չէ: Հայոց պատմութեան բազմահազարամեայ ընթացքին ընդհանրապէս այդ եղած է իրողութիւնը, որ բնաւ պատճառ չէ հանդիսացած, որ մենք չկարենանք յաղթել:

— Թշնամին արհեստագիտական առաւելութիւններ ունէր, յատկապէս օդային հսկողութեան և հրետանային հեռահարութեան բնագաւառներուն մէջ: Այդ առաւելութիւնները նոյնպէս անակնկալ չէին: Թշնամիին զինատեսակները գաղտնիք չէին այդ բնագաւառին հետևողներուն համար, իսկ անօդաչու թռչող սարքերու յարաճուն դերակատարութիւնն երբէք զարմանալի պէտք չէ ըլլար վերջին տարիներուն մեզմէ ոչ շատ հեռու՝ Սուրիոյ և Լիպիոյ ռազմական գործողութիւններուն հետևողներուն համար: Նոյնիսկ մինչև Լիպիա և Սուրիա երթալու պէտք չկար: Եթէ 2016թ. քառօրեայ պատերազմը առարկայականօրէն վերլուծուած ըլլար, փոխանակ անպայման թիզուկէս հողի զիջման մասին ամբոխավարական քննարկումներ բեմադրելով ուժ մսխելու, պէտք էր բոլոր կարողութիւնները յատկացնել մեր բանակի ամբողջ կարգը, սարքը և շարժուձևը անօդաչուներով յագեցած մարտադաշտի

պայմաններուն համապատասխանեցնելու աշխատանքին:

Եւ մասամբ նորին:

Երբ պատահական մարդը կը նստի ղեկին

Որ ղեկավարման համակարգն անդամալուծուած էր, կասկած չկայ: Նոյնիսկ այդ քիչ, կցկտուր տեղեկութիւնները, որ ցարդ ստացած ենք, յստակօրէն կը մատնանշեն այդ իրողութիւնը: Ղեկավարման ամբողջ համակարգը իր բոլոր երեսներով՝ ռազմական, քաղաքական, տեղեկատուական, թիկունքային և այլն, փաստօրէն, կը գտնուէր միակ կէտէ մը կառավարուելու պարտադրանքին տակ՝ վերջին տարիներուն սաստկացած՝ իշխանութեան յարաճուն անձնաւորեցման պատճառով, և այդ կէտն է, որ չգործեց, և յոյս ալ չկայ, որ երբևիցէ կրնայ գործել: Շատեր բարեացակամօրէն կը փորձեն Փաշինեանին և իր անմիջական շրջապատին վերագրել սադայէլական կարողութիւններ, սակայն պատկերը շատ աւելի պարզ է. այդ շրջապատին մէջ չկար ոևէ մէկը, որ ունէր մտաւոր և հոգեկան կարողութիւնը՝ պատերազմ վարելու, և, ինչպէս ժողովուրդը կ'ըսէ, գաւաթ մը ջուրի մէջ խեղդուեցան:

Պատերազմն այն իրավիճակն է, ուր պէտք է արտակարգ միջոցներու դիմել: Եւ ինքնըստինքեան կը ստեղծուի կացութիւն մը, որ պատերազմի կառավարումը կը կեդրոնացնէ գլխաւոր կէտի մը շուրջ: Այդ կէտի անձնաւորեցումը, փաստօրէն, համազօր է ազգի ամբողջ գրաւը այդ մէկ անձին վրայ դնելուն, որ, ինչպէս բոլոր գրաւները, յղի է ձախողութեան մեծ հաւանականութեամբ:

Խորհրդարանական պետութիւններուն համար, որ կը յաւակնինք ըլլալ, պատերազմը յաճախ կը պարտադրէ համախոհական կառավարութիւններու առաջացումը, որպէսզի կարելի ըլլայ երկրի

ամբողջական ներուժը սևեռել մէկ նպատակակէտի: Լաւագոյն օրինակը տուաւ Բրիտանիան, որ Բ աշխարհամարտի գրեթէ ողջ տևողութեան (10 մայիս 1940-էն մինչև 23 մայիս 1945) ունեցաւ միակ համաձայնական կառավարութիւն մը՝ Ուինսթըն Չերչիլի գլխաւորութեամբ, և միայն յաղթանակի ապահովումէն ետք է, որ մտածուեցաւ վերադառնալու քաղաքական սովորական առօրեային:

Հայաստանի պարագային համազգային զօրաշարժն այդպէս ալ մնաց անկազմակերպ նոյնիսկ քարոզչական մեքենայի ծայրայեղ գեղարուեստականացած աշխատանքի պայմաններուն մէջ (ականջդ կանչէ Արծրուն Յովհաննիսեան): Երրորդ շաբաթէն իսկ անզէն աչքով տեսանելի էր, որ պատկերն այդքան ալ փայլուն չէ: Փաշինեանի տխրահոչակ ստորագրութենէն աւելի քան 10 օր առաջ (հակառակ քօղարկուած ու բացայայտ սպառնալիքներուն, թէ ռազմական դրութեան պայմաններուն մէջ կարելի չէ կառավարութիւն քննադատել) Վազգէն Մանուկեան ստիպուեցաւ պաշտօնապէս յայտարարութեամբ հանդէս գալ և բացէ ի բաց պահանջել, որ.

«1. այս կառավարութիւնը պէտք է հրաժարական տայ՝ բանակին յանձնելով ողջ իշխանութիւնը, ընդ որում՝ դա պէտք է անի կամաւոր, առանց ցնցումների, որոնք կարող են կործանարար լինել,

2. բանակը, իր ձեռքը վերցնելով ողջ իշխանութիւնը, պէտք է կազմի միասնական պաշտպանութեան կոմիտէ Արցախի հետ միասին՝ կազմակերպելով պատերազմական ներկայ իրավիճակին անհրաժեշտ միջոցառումները, ապահովելով վստահութիւն և գնալով բանակցութիւնների շահագրգիռ պետութիւնների, միջազգային կառոյցների հետ»:

Իհարկէ, Փաշինեանին պէտք չէր որևէ խրատ, խորհուրդ կամ առաջարկ, որ զինք զրկէր իր սիրելի աթոռէն: Իսկ 30 տարուայ ընթացքին կառուցուած պետականութեան ճարտարապետները չէին նախատեսած նման՝ պետութեան գլխաւորի անկարողութեան, ապիկարութեան կամ խելագարութեան (ընտրեցէ՛ք, որը կ՚ուզէք) պարագային գործադրելի միջոցառումներ: Յոյսը դրուած էր անորոշ մարդոց, այսինքն՝ խորհրդարանական մեծամասնութեան բարի կամեցողութեան վրայ:

Գրեթէ մէկուկէս դար առաջ՝ 1872-ին, ֆրանսացի աշխարհագրագէտ և գրող Ժիլ Վեռն իր «Աշխարհի շուրջ 80 օրէն» հանրածանօթ վէպին մէջ կը գրէր. «Dans ce singulier pays, où les hommes ne sont certainement pas à la hauteur des institutions, tout se fait "carrément", les villes, les maisons et les sottises» («Այս իւրայատուկ երկրին մէջ, ուր մարդիկ վստահօրէն պետական կառոյցներու մակարդակին չեն, ամէն ինչ կը կատարուի քառակուսիաբար, քաղաքները, տունները և յիմարութիւնները»): Ան նկատի չունէր Հայաստանը, իհարկէ, այլ Ամերիկայի Միացեալ Նահանգները, ուր ամէն բան, ըստ հանճարեղ ֆրանսացիին, քառակուսի է, նոյնիսկ յիմարութիւնները քառակուսի են: Բոլորս ապրեցանք ԱՄՆ վերջին քառամեակի ողբերգակատակերգական բեմադրութիւնները՝ բարձրագոյն մակարդակին, սակայն Ամերիկան դիմացաւ, և խեղկատակին վնասները նուազագոյն մակարդակի մնացին, որովհետև կառոյցները նախատեսած էին նման կարելիութիւն, նախատեսած էին, որ մարդիկ իրենց մակարդակին պիտի չըլլան:

Մենք չյաջողեցանք մեր պետականութեան տալ այն յատկութիւնները, որ նոյնիսկ մանկական խաղալիք սարքողը ստիպուած է իր արտադրանքին տալ. զայն կառուցել այնպէս, որ եթէ ան անցնի խելագարի մը ձեռքը, ո՛չ խելագարը, ո՛չ ալ իր շրջապատը վնաս կրեն: Այդ մասին յատուկ յղացք մըն ալ կայ անգլերէնով՝ «foolproofing»: Մենք չկրցանք մեր պետականութիւնն անոր ղեկին պատահական բախտախնդիրի մը յայտնուելու վնասներէն զերծ պահել:

Կրնայի՞նք արդեօք: Անշուշտ կրնայինք, պարզապէս կամք և մանաւանդ վտանգի գիտակցութիւն էր պէտք, որ չունեցանք: 3 տասնամեակ երկարած մեր «պետականաշինական» փորձերը՝ սահմանադրական 3 հանրաքուէներով շեշտադրուած, յանգեցան այսօրուան քաոսին:

Յետադարձ փոքրիկ ակնարկ մը

Հայաստանի վերանկախացումը 1991 թուականին, ցաւօք, իր հետ չկրցաւ բերել այն հիմնական բեկումը, որ պիտի յառաջացնէր իսկապէս հայկական պետականութիւն մը: Վերանկախացման յաջորդող 3 տասնամեակները հայ քաղաքացիական հասարակութեան ձևաւորման համար պարզապէս շարունակութիւնն եղան նախորդող տասնամեակներուն՝ խորհրդային հասարակարգին, որ իր հերթին շարունակութիւնն էր ցարականին (միջանկեալ անկախութեան երկու տարիները, հակառակ իրենց բեղմնաւորութեան, շատ կարճ էին որևէ փոփոխութեան արմատաւորման համար) և անկէ առաջ ալ՝ պարսկականին:

Հայաստանի և Արցախի Հանրապետութիւններու այսօրուան տարածքներուն վրայ մեր արդի պատմութեան ընթացքին միշտ տիրած էին

կայսրութեան ծայրամասի իրավիճակը և անոր համապատասխան հոգեվիճակը: Կայսրութեան մը ծայրամասը կը կառավարուի կեդրոնէն առաքուած և, որպէս կանոն, ամենաանպէտք տարրերով, որոնք իրենց պաշտօնավարման կը նային որպէս ժամանակաւոր աքսորի: Կայսրութեան ծայրամասերուն արգիլուած է վիճիլ ինչպէ՞ս ընելու մասին: Հարցերուն՝ ըստ էութեան քննարկումն ու եզրայանգումը մենաշնորհն է կեդրոնին, որուն վճիռները աստուածային օրէնք են ծայրամասերուն համար: Ծայրամասին կը մնայ միայն վիճիլ կառավարիչի անձին շուրջ, այն ալ՝ կէսբերան. Մարկոսը լաւն է, Կիրակոսը՝ վատը... Պասկևիչը խելօք էր, Գոլիցինը խենթ էր, Խանճեանը այսպէս էր, Քոչինեանը՝ այնպէս, Յարութիւնեանը՝ սանկ, Դեմիրճեանը՝ նանկ, և այսպէս անվերջ՝ մինչև Լևոն, Ռոպերթ, Սերժ, Նիկոլ և մասամբ նորին:

Հակառակ հատուկենտ պահանջներու՝ անկախ Հայաստանի առաջին գործը չեղաւ Սահմանադիր ժողովի մը հրաւիրումը, որ պիտի գումարուէր պետական առօրեայէն անջատ, պիտի համախմբէր ազգի մտաւորական ներուժը, պիտի գումարուէր ամիսներով և մշակէր Հայաստանի Հանրապետութեան համար ամենայարմար պետական կառոյցը, որ կարենար նաև բնակչութեան քաղաքական մշակոյթը դուրս բերել իր ծայրամասային հոգեվիճակէն:

Լաւ կը յիշեմ, որ Սահմանադիր ժողովի, նոյնիսկ սահմանադրութեան մը մասին որևէ ակնարկութիւն ՀՀԾ-ականներու և յատկապէս Լևոն Տէր-Պետրոսեանի կողմէ կ՚արժանանար ամենահեգնական դատողութիւններուն: Օրինակներ կը թուարկուէին սահմանադրութիւն չունեցող պետականութիւններու. Իսրայէլ, Մեծն Բրիտանիա և այլն, անշուշտ, առանց բացատրելու, որ անոնք ունէին ոչ թէ սոսկ սահմանադրութիւններ, այլ սահմանադրական օրէնքներու հսկայական փաթէթներ՝ սկսեալ 1215-ի Magna Carta-էն: Սակայն, երբ կանաչ լոյսը ստացուեցաւ (ստացողները լաւ գիտեն, թէ ուրկէ), հապճեպ կազմուեցաւ ոչ թէ Սահմանադիր ժողովի հրաւէր, այլ Գերագոյն խորհուրդի յանձնաժողով մը, որ սուսիկ-փուսիկ պիտի մշակէր նոր սահմանադրութեան նախագիծ մը... Բնաւ զարմանալի չէր, որ հանրաքուէի դրուած սահմանադրական նախագիծը համարեայ կրկնօրինակն էր այն 13 այլ սահմանադրութիւններուն, որոնցմով և նոյն հապճեպութեամբ օժտուեցան խորհրդային նախկին հանրապետութիւնները:

70 տարի շարունակ Հայաստան կառավարուած էր խորհուրդներով՝ գիւղխորհուրդ, քաղխորհուրդ, շրջխորհուրդ, հանրապետական խորհուրդ («գերագոյն» պիտակով) և այլն՝ բոլորն առնուած Կոմկուսի զսպաշապիկին մէջ՝ խորհրդային սահմանադրութեան տխրահռչակ 6-րդ յօդուածով պարտադրուած: 1990 մարտ 14-ին այդ յօդուածն էապէս կը կրճատուի, և նոյն տարուան մայիսին ընտրուած Հայաստանի 12-րդ գումարման Գերագոյն

խորհուրդը, փաստօրէն, 1920-էն ի վեր առաջին խորհրդարանն էր, որ բազմակուսակցականութեան պայմաններուն մէջ կ՚ընտրուէր:

Տրամաբանական պիտի ըլլար, որ անկախ Հայաստանի պետականութիւնը փորձէր գոնէ սկզբնական շրջանին համար պահել «ապա-կոմկուսացուած» խորհուրդներու՝ ըստ էութեան ժողովրդավարական համակարգը, որուն քիչ թէ շատ սովոր էր բնակչութիւնը, և անոր արդէն իսկ առկայ հիմքին վրայ կատարել պետական պարտականութիւններու և լիազօրութիւններու վերաբաշխումը՝ Խորհրդային Միութեան փլուզման պատճառով կեդրոնին վերապահուած լիազօրութիւններն ալ վերաբաշխելով արդէն իսկ առկայ եռաստիճան համակարգի տարբեր մակարդակներուն:

Ճիշդ է, Կոմկուսի միահեծանութեան օրերէն ժառանգուած խորհուրդներուն կազմերը նախատեսուած չէին լուրջ աշխատանք կատարելու համար, որովհետև բուն որոշումները տասնամեակներ շարունակ առնուած էին պետական մեքենային զուգահեռ, կուսակցական մեքենային կողմէ, և այդ կազմերու հիմնական փոփոխութիւնը և անոնց վերաճումը իսկական պետական կառոյցներու մէկ-երկու ազատ ընտրութեան խնդիր էր, այսինքն՝ շուրջ մէկ տասնամեակի վրայ երկարող գործընթաց մը: Սակայն ՀՀԾ-ով մարմնաւորուած խմբակն այլ ծրագիրներ ունէր: Նախ՝ 1991-ին, առանց Սահմանադրութիւն մշակելու, պարզապէս Գերագոյն խորհուրդի օրէնքով մը էապէս փոխեցին պետականութեան ամբողջ կառուցուածքը՝ նախագահական աթոռ մը գամելով պետութեան գագաթին (Կոմկուսի զսպաշապիկը փոխարինելով նախագահականով), ապա՝ այդ նոր աթոռին շուրջ հիւսուեցաւ նոր Սահմանադրութիւն մը, որ, ինչպէս ըսինք, կրկնօրինակն էր նախկին խորհրդային հանրապետութիւններու «նոր» սահմանադրութիւններուն: Եւ, փաստօրէն, Հայաստանի քաղաքական մշակոյթը շարունակեց ապրիլ կայսրութեան ծայրամասի իր կեանքով, «Մարկո՞սը, թէ՞ Կիրակոսը» անիմաստ ու

ամլացուցիչ բանավէճով, որ այսօր ալ կը շարունակուի «նախկիններու» և «քայլածներու» հերթական քաշքշուկով և, ըստ երևոյթին, պիտի շարունակուի՝ այս անգամ, հաւանաբար, «քայլածներու» և «նստածներու» միջև: Չկրցանք, ցաւօք, կայսրութիւններէն ժառանգած «ո՞վ ընէ» հարցումը փոխարինել «ի՞նչ ընել» և «ինչպէ՞ս ընել» հարցումներով:

2018-ին միակ հարցը, որ լուծուեցաւ, Սերժի մը փոխարինումն էր Նիկոլով: Ոչ մէկ նախընտրական ծրագիր, ոչ մէկ աշխարհայեացք, ոչ մէկ ծրագրային բանավէճ: Օրինակ՝ այսօրուան իշխանութիւնները գրիչի մէկ հարուածով Հայաստանի հարկային համակարգը բազմաստիճանէն վերածեցին միաստիճանի՝ պետական համակարգին վրայէն վերցնելով անոր՝ Սահմանադրութեան առաջին իսկ յօդուածով սահմանուած «սոցիալական» բնոյթը (յօդուած 1. Հայաստանի Հանրապետութիւնն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրաւական պետութիւն է): Թող ոևէ մէկը փորձէ յիշել, թէ այսօրուան խորհրդարանական մեծամասնութեան նախընտրական ծրագրի ո՞ր մէկ անկիւնը գրուած էր հարկային այդ խոստումը, իսկ առողջ ժողովրդավարութեան առաջին պայմանն է, որ գործադիր իշխանութիւնը հետևի իր իսկ նախընտրական ծրագրին և կատարէ անոր խոստումները: Իր իշխանութիւնը բացարձակ չէ, ինչքան ալ բացարձակ ըլլայ իր մեծամասնութիւնը: Ան իր ընտրական ծրագրէն դուրս իրագործումներ չի կրնար կատարել, այլ պէտք է դարձեալ դիմէ իր ընտրողներուն և նոր լիազօրութիւն խնդրէ, եթէ կարիքը տեսնուի՝ շեղելու նախընտրական ծրագրէն:

Էշը ցեխէն հանելու միայն մէկ ձև կայ — ապակեդրոնացում

Ինչպէ՞ս դուրս գալ այս ոլորապտոյտէն: Ինչպէ՞ս ընել, որ հայ քաղաքական դաշտին վրայ այլևս տեղի չունենայ սոսկ դէմքերու պատկերամարտ, այլ ծաւալին իսկական բանավէճեր այս կամ այն ծրագրին շուրջ՝ մեծ թէ փոքր, որ միակ ճանապարհն է՝ առաջքն առնելու այսօրուան նորոյթին՝ «ամբոխատիրական» իշխանութիւններուն: Ինչպէ՞ս վերցնել կայսրութիւններուն, Կոմկուսի 70 տարուան և անոր յաջորդած երեսնամեայ սեղմիրանին վարչահրամայական քարացած մտայնութեան կաշկանդումները հայ հասարակութեան քաղաքական մշակոյթէն, որուն հին ու նոր վնասներուն ամէնօրեայ ականատեսն ու կրողն ենք:

Վերադասի անառարկելիութեան մշակոյթի վերացումը միակ միջոցն է՝ դուրս գալու ներկայ ամլացնող, ջլատիչ մթնոլորտէն, իսկ այդ ընելու համար միայն մէկ ձև կայ՝ հաստատել ծայրայեղ ապակեդրոնացեալ համակարգ մը, ուր կեդրոնը պիտի ստիպուի զբաղիլ իր մի քանի լուրջ թղթածրարներով (պաշտպանութիւն, դրամաշրջանառութիւն, արտաքին գործեր և սահմաններ) և մի քանի այլ պարտականութիւններով, եթէ անոնց մասին ընդհանուր համախոհութիւն կազմուի՝ զանոնք կեդրոնին վերապահելու, և չկարողանայ քիթը խոթել այս կամ այն գիւղապետարանի հարցերուն մէջ: Եւ այդ ձևով կը լուծենք միաժամանակ մի քանի խնդիր:

— Կեդրոնի պարտականութիւնները սահմանափակ ըլլալով՝ կը դիւրանայ անոնց կատարման մասին յստակ պատկերացում ունենալ: Ապիկարութիւնն անմիջապէս կ՚երևայ՝ առանց այլ հարցերու և խնդիրներու կոյտերուն ետև թաքնուելու հնարաւորութեան:

— Կեդրոնը ստիպուած կ՚ըլլայ գործել ստորին մակարդակներուն հաշուետուութեան դամոկլեան սուրին տակ, որովհետև անոնք կրնան պարզապէս համաձայնիլ և իրմէ ետ վերցնել այս կամ այն լիազօրութիւնը, եթէ տեսնեն, որ ինք անկարող է այն կատարելու, հետևաբար «մեր դէմ խաղ չկայ»-ի իրավիճակներ չեն կրնար ամրանալ և ճահճացնել քաղաքական բեմը:

— Փտախտի դէմ պայքարը անհամեմատ աւելի կը հեշտանայ: Աշխարհի սկիզբէն ի վեր ամէն իշխանութիւն առնչուած է այդ պայքարին: Համմուրապիի օրէնքներն իսկ կը պարունակեն մի քանի նմոյշներ այդ մասին. առևտրական փոխանակումները գրաւոր ստացագիրներով կատարել, դատաւորը վտարել, եթէ իր որոշումն արձանագրելէն ետք զայն փոխէ (այսինքն՝ կաշառուի) և այլն: Անվերջ պայքար է, որ մարդկութիւնը մղած է և կը շարունակէ մղել: Ապակեդրոն համակարգերը, որպէս կանոն, նուազ ենթակայ են փտախտի ծայրայեղ դրսևորումներուն, ոչ թէ որովհետև այդ համակարգերը սուրբեր կը ղեկաւարեն, այլ պարզապէս մեղրի կարասները մեծ մասամբ կը մնան ամենաստորին՝ բնակավայրային (քաղաքապետական) մակարդակին, և համակարգն իր ամբողջութեամբ չի խեղդուիր միանուագ փտախտի ճահիճին մէջ: Մասնատուած փտախտին դէմ պայքարն անհամեմատ աւելի դիւրին է:

Ծայրայեղ ապակեդրոն համակարգը պիտի սկսի՝ բանաձևելով, թէ մեր պետականութեան հիմքն են համայնքները, որոնք օժտուած են պետականութեան բոլոր յատկանիշներով՝ լիազօրութիւններով և պարտականութիւններով, բացի անոնցմէ, որոնց մասին համախոհութիւն գոյացած է համայնքներուն միջև՝ անոնցմով լիազօրելու աւելի բարձր մակարդակի ատեանները, որոնք կազմուած պիտի ըլլան համայնքներուն կողմէ առաքուած պատգամաւոր (ներկայացուցիչ) երեսփոխաններու ժողովներէն կամ այդ ժողովներէն բխած մարմիններէն: Իշխանութեան վարէն վեր աստիճանական բարձրացումը հնարաւորութիւն կ՚ընծայէ նաև ստորադաս մակարդակի ատեաններուն ծայրայեղ պարագաներու համաձայնիլ և վար առնել վերադաս իշխանութիւնը, որովհետև անոր լիազօրութիւնները կը բխին իրենց մակարդակէն և ինչպէս որ տրուած են, այդպէս ալ ետ կ՚առնուին: Եւ մանաւանդ վարէն վեր բարձրացող իշխանութեան բուրգը կը բացառէ

իշխանութեան անդամալուծումը: Որևէ մակարդակի անդամալուծման (լուծարման) պարագային անոր լիազօրութիւններն ու պարտականութիւնները ինքնաբերաբար կը վերադառնան այն մակարդակին, ուրկէ բարձրացած են վեր:

Երկրորդ կարևոր սկզբունքը, որ պէտք է որդեգրել պետականութեան առողջացումն ապահովելու և պաշտօնի անձնաւորեցման արատը բուժելու համար, գործադիր իշխանութիւնը միշտ հաւաքական մարմիններու յանձնելն է: Որևէ պարագայի գործադիր պաշտօնի համար ընտրութիւն պէտք չէ կատարուի, այլ պէտք է ընտրուի մարմին, որ հաւաքաբար պատասխանատու կ'ըլլայ իր աշխատանքին համար և իր մէջ կը կատարէ աշխատանքի բաժանումը: Գիւղապետ չընտրուիր, այլ կ'ընտրուի գիւղապետական գործադիր մարմին՝ վարչութիւն, խորհուրդ և այլն (անուանումը ճաշակի հարց է), որ իր կազմէն կ'ընտրէ գիւղապետ, գանձապետ, քարտուղար և այլն:

Հոս պիտի առարկուի, անշուշտ, թէ ոևէ խմբակցութիւն, որ իշխանութեան պիտի հասնի, պիտի ունենայ իր առաջնորդը կամ պարագլուխը, ղեկավարը, ռահվիրան, «պոս»-ը, «խազէին»-ը և այլն (ընտրեցէ՛ք ձեր նախասիրած անուանումը), որ ինքնաբերաբար պիտի ստանձնէ այդ հաւաքական գործադիրի գլխաւոր պաշտօնը՝ փաստօրէն վերադառնալով անձնաւորեցուած դրութեան: Տարբերութիւնը շատ հիմնական է. երբ լիազօրութիւնները հաւաքական են, հաւաքականութիւնը՝ աշխատանքային խումբը, իր մէջ կրնայ արագ վերադասաւորումներ կատարել և գործերը բաժնել ըստ յարմարութեան՝ փոխանակ սպասելու յաջորդ ընտրութիւններուն: Իսկ եթէ անձն ընտրուած է յատուկ այդ պաշտօնին համար, անկարելի է առանց մեծ ցնցումներու զինք փոխարինել նոյն խմբակէն աւելի յարմար անձով: Աթոռին կցեալ լիազօրութիւնները միշտ ալ ունին վտանգը՝ անարժանի մը կողմէ աթոռի գրաւման: Բացարձակ միապետութիւններու մեծագոյն թերութիւնն է այս մէկը. ամենայաջող գահակալին կրնայ յաջորդել լիակատար ապիկար մը, որ կը ժառանգէ աթոռը և իսկական պատուհաս կը դառնայ, կամ միապետն ինք կրնայ այլևայլ պատճառներով կորսնցնել իր ունակութիւնները:

Եթէ հանրապետական և համայնքային իշխանութիւններուն միջև պատեհ համարուի աւելցնել այլ օղակ մը կամ մակարդակ մը, ըլլայ տարածքային թէ ոլորտային, ան պէտք է առաջացուի ստորադաս համայնքային իշխանութիւններու կողմէ, որոնք իրենց ունեցած լիազօրութիւններէն և պարտաւորութիւններէն յատակօրէն նկարագրուած մաս մը կը դնեն այդ նոր մակարդակին՝ իրենց ներկայացուցիչներուն կողմէ գոյացած ժողովին ուսերուն, որ կ'ընտրէ համապատասխան գործադիր մարմինը և հաշիւ կը պահանջէ անկէ, ոչ թէ «ի վերուստ» կ'որոշուի իշխանութեան կառոյց մը, որ հաշուետու է միայն զինք նշանակողին և հետևաբար

միայն անոր շահերը պիտի պաշտպանէ: Ինչպէս շատ գեղեցիկ ձևով կը բանաձևէր հայ պետականութեան նախատիպար Ազգային սահմանադրութիւնը 1860-ին. «Վարչութիւնը ազգային ըլլալու համար պէտք է ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ըլլայ»:

Սահմանադրութիւն՝ երկու մասով

Հայկական պետականութեան Սահմանադրութիւնը չի կրնար ըլլալ միակտուր, միանուագ, ինչպէս կը փորձենք ընել տասնամեակներէ ի վեր և ամեն քայլափոխի զայն վերանայելու մասին կը մտածենք: Սահմանադրութիւնը հիմնական օրէնք է և, որպէս այդպիսին, պէտք է գրուած ըլլայ ամենաընդարձակ կարկինով, սահմանէ սկզբունքները, օգտագործէ ամենաընդհանրական բառամթերքը (հասու միջին կրթութեան տէր ոևէ ազգայինի) և մանրամասնութիւնները ձգէ իրմէ բխած զանազան օրէնսդրութիւններու, կանոնադրութիւններու, որոնք, ըլլալով աշխատանքային, առօրէական բնոյթի, կրնան շատ աւելի դիւրաւ վերանայուիլ և յարմարեցուիլ կեանքի յարափոփոխ պայմաններուն: Իսկ Սահմանադրութիւնը կը մնայ առօրեայէն բարձր, որպէս վերջնական աղբիւր՝ օրէնքներու ճիշտն ու սխալը իրարմէ տարբերակող: Հաւանաբար, շատեր համաձայն չըլլան Սահմանադրութիւնն այդ աստիճան բարձր պատուանդանի մը վրայ դնելուն: Իրենց համար գուցէ սահմանադրութիւն և կանոնադրութիւն հոմանիշներ են: Աւելորդ շփոթի տեղիք չտալու համար առաջնային օրէնքը կրնանք կոչել Հայոց հիմնական օրէնք, իսկ իւրաքանչիւր համայնք, համայնքներու երեսփոխաններով կազմուած ատեանները, ինչպէս նաև այդ ատեաններու ընտրած պատգամաւորներէն կազմուած աւելի վերադաս ատեանները կ'ունենան իրենց կանոնագրութիւնները, կանոնադրութիւնները, սահմանադրութիւնները և այլն (անուանումները ճաշակի հարց են)՝ Հիմնական օրէնքի սահմանումներէն բխած:

Հիմնական օրէնքը պէտք է ճշդէ համայնքներու

գոյացման մի քանի սկզբունքները, բանաձևէ, որ հայութեան կազմակերպ կեանքի բոլոր պարտաւորութիւնները, իրաւունքներն ու լիազօրութիւնները կը պատկանին համայնքին, բացառութեամբ անոնց, որ նոյն համայնքին կողմէ ընտրուած երեսփոխաններուն տրուած լիազօրութիւններով գոյացած այլ ատեանի մը բարձրացուած են, ճշտէ այդ պարտաւորութիւնները, իրաւունքներն ու լիազօրութիւններն այլ ատեանի բարձրացնելու և անկէ ետ վերցնելու, այդ ատեանները գոյացնելու կամ լուծարելու ձևերը, ինչպէս նաև ատեաններուն միջև հաւասարակշիռ վէճերը հարթելու մեքենականութիւնները՝ սկզբունքային կէտերով: Հիմնական օրէնքը պէտք է մանաւանդ ճշտէ համայնքին՝ որպէս պետականութեան հիմնաքարի կազմակերպուածութեան ամենատարրական կէտերը, սահմանէ համայնքը, անոր սահմանագծման, կազմակերպուածութեան չափանիշները, անդամակցութեան, անդամներու հաշուառման, քուէարկութեամբ գործադիր մարմին ընտրելու և անկէ հաշիւ պահանջելու սկզբունքները, նաև անոր իրաւունքը՝ երեսփոխանական աստիճանակարգումով մասնակցելու համայնքներու հաւաքական կեանքին:

Հայոց հիմնական օրէնքը պէտք չէ ըլլայ իրաւաբանական խրթին ու երկարապատում փաստաթուղթ մը: Ան պէտք է հասանելի և հասկնալի ըլլայ միջին կրթութեան հայուն համար, գուցէ նաև ուսուցանուի դպրոցական վերին կարգերու մակարդակին: Իրաւաբանական խրթինութիւնները թող մնան սահմանադրական երկրորդ՝ իրաքանչիւր ատեանի կանոնադրութիւններուն և սահմանադրութիւններուն:

Այս հիմնական օրէնքը պիտի ծառայէ որպէս մեկնակէտ՝ աշխարհով մէկ սփռուած հայ համայնքներու կազմակերպման, որուն անդրադարձած էի նախորդ գրութեամբ:

Սահմանադիր ժողովը որպէս նոր մեկնակէտ

Նախորդ յօդուածս («Դրօշակ», սեպտեմբեր 2020) կ'աւարտէի հետևեալ տողերով. «Վերոնշեալ համահայկական ապակեդրոն կառոյցէն առաջին օգտուողը պիտի ըլլան մեր ազատ և անկախ տարածքները՝ Հայաստանն ու Արցախը, որովհետև նման կառոյցի որդեգրումը պիտի պարտադրէ մեր 2 պետականութիւններուն հիմնական վերանորոգումը՝ անցեալէն ժառանգուած կեդրոնաձիգ դրուածքները փոխարինելով ծայրայեղ ապակեդրոն կառոյցներով և քաղաքական դաշտէն վերջնականապէս արտաքսելով քայքայիչ «ոմ»-ի բանավէճերը և զանոնք փոխարինելով հիմնարար «ինչ»-ի ու «ինչպէ՞ս»-ի հարցադրումներով և բանավէճերով»: Դժբախտաբար, ինչպէս կ'ըսեն, ուրբաթը շաբաթէն շուտ եկաւ, և բոլորս ճաշակեցինք «ոմ»-ի բանավէճին տխուր վերջաբանը:

Պիտի կարենանք այս ձախողութեան դասերը քաղել, լուծումները բանաձևել և գործադրութեան դնել: Հայաստանի և Արցախի պետականութիւնները գոյութենական մարտահրաւէրներու առջև են և առաջին հերթին պէտք է լուծեն իրենց անմիջական, կարճաժամկէտ խնդիրները: Բայց պէտք չէ աչքաթող ընենք երկարաժամկէտ խնդիրը՝ պետականութեան ապահովագրումը բախտախնդիրներու վնասներէն: Հետևաբար պէտք է գործել 2 հանգրուանով:

— Հայաստանի ներկայ քաղաքական տագնապի լուծումը, որ անպայման պիտի անցնի ծայրայեղ միջոցառումներով. ներկայ դրուածքով, երբ խորհրդարանը, փաստօրէն, գիտակցութիւնը չունի իր պարտականութիւններուն ու պարտաւորութիւններուն և ինքն իր մէջ չի գտներ ուժը՝ գործադիր դէմքերը փոխելու, իսկ գործադիրը չունի տարրական գիտակցութիւնը, որ պարտուածը նախ և առաջ կը քաշուի հրապարակէն, որովհետև պարտութիւնը ջաղացքի քարի նման կապուած է իր անունին և իրեն ու իր խմբակին կ'արգիլէ որևէ նախաձեռնութիւն յաջողցնել, անկարելի է գտնել օրինական բանալին այս հանգոյցին:

— Հայաստանի նոր Սահմանադրութեան մշակումը. նոր խորհրդարանին ընտրութեան զուգահեռ՝ պէտք է անպայման ընտրուի Սահմանադիր ժողով՝ 25-50 անդամներէ բաղկացած, որ պիտի մշակէ հիմնովին նոր Սահմանադրութիւն մը՝ ծայրայեղ ապակեդրոն Սահմանադրութիւն մը, որ նաև նկատի կ'առնէ մեր՝ աշխարհասփիւռ ազգ ըլլալու հանգամանքը:

Այն ատեն գուցէ հնարաւոր ըլլայ մեղմել բախտախնդիրին պատճառած վնասները և սկսիլ մտածել զանոնք դարմանելու մասին:

Փետրվարյան անկրկնելի պոռթկումը

Վարդան Պետրոսյան
ԵՊՀ ընդհանուր լեզվաբանության ամբիոնի վարիչ

1921 թ. Փետրվարյան համաժողովրդական ապստամբությանը հաջորդած հարյուր տարիների ընթացքում, մասնավորապես՝ մինչև նախորդ դարի կեսերը, երբ դեռևս ողջ էին ապստամբության առաջնորդներից ոմանք (Ս. Վրացյան, Բաշգառնեցի Մարտիրոս, Կ. Սասունի և ուրիշներ), և 1990-ից հետո, երբ հայ ժողովուրդը վերանվաճեց իր անկախությունը, այդ հիրավի նշանավոր, պատմական իրադարձության մասին հաճախ է գրվել, սակայն սխալված չենք լինի, եթե ասենք, որ մինչև օրս էլ այն մնում է ըստ արժանվույն չգնահատված: Մենք նկատի ունենք՝ պետականորեն տրվող գնահատականը, որը դեռևս չի հնչել Հայաստանի անկախ հանրապետության որևէ իշխանական վարչակազմի կողմից: Պատճառը քաղաքական է, ավելի շուտ՝ կուսակցական: Անկախ շարժառիթներից, այդպիսի վերաբերմունքը չի կարող արդարացված լինել: Ճիշտ է՝ ապստամբության ղեկավարները, որոշ բացառություններով, դաշնակցական հայտնի գործիչներ էին, և այդպես էլ պիտի լիներ, բայց ապստամբությունը կուսակցական չէր: Չնայած որ բոլշևիկ հեղկոմականներն իրենց գործած վայրագությունները փորձել են արդարացնել՝ պատճառաբանելով իբրև թե դաշնակցականներն իշխանությունը հանձնելու պահին արդեն իսկ այն վերանվաճելու որոշում են ունեցել, իրականում այդպիսի մեղադրանքն անհեթեթ է, որովհետև 1920-ի աշնանը հայ-թուրքական պատերազմում կրած ծանր պարտությունից հետո (ի դեպ՝ հիմնականում նույն բոլշևիկների՝ բանակում հակապետական ակտիվ քարոզչության պատճառով) ՀՅԴ-ի կողմից իշխանության համար պայքարելն այլևս անմտություն կլիներ, և դաշնակցական ղեկավարները դա շատ լավ էին գիտակցում: Ուստի պատահական չէր, որ ինչպես Դրոն՝ մինչև իր «պատվավոր» աքսորը, այնպես էլ վերջին կառավարության վարչապետ Ս. Վրացյանն ընդհուպ մինչև փետրվարի 10-ը դեմ են եղել հակաբոլշևիկյան որևէ նախաձեռնության: Վերջինս սկզբնական շրջանում այդպիսի փորձը նույնիսկ համարել էր «ավանտյուրա»[1]: Իսկապես էլ, մի իրավիճակում, երբ Ալեքսանդրապոլում նստած էր հաղթական թուրքական զորքը Կարաբեքիրի գլխավորությամբ, և չկար նրան դիմագրավող մարտունակ բանակ, իշխանությունը վերանվաճելու մասին միտքն անգամ արկածախնդրություն կլիներ: Փաստ է այն, որ չի եղել հակաբոլշևիկյան ապստամբություն կազմակերպելու ՀՅԴ որևէ մարմնի որոշում, որքան էլ որ բոլշևիկյան պատմագրությունը ջանացել է ցույց տալ հակառակը: Բացի այդ, որևէ շարժման բնույթը առաջին հերթին որոշվում է նրա մասնակիցների կազմով և թվաքանակով: Փետրվարյան ապստամբությանը մասնակցում էին ոչ միայն ժողովրդի լայն զանգվածներ Հայաստանի հատկապես կենտրոնական գավառներից, ուր ծավալվում էին

իրադարձությունները, այլև հասարակության տարբեր խավերի ներկայացուցիչներ՝ մտավորականներ, զինվորականներ և հատկապես գյուղացիությունը, որը կազմում էր Հայաստանի ազգաբնակչության գերակշռող մեծամասնությունը: Եվ որ ամենից կարևորն է՝ մասնակցում էին ինքնաբուխ կերպով: Ոչ մի կուսակցություն, որքան էլ նա ազդեցության լծակներ ունենա ժողովրդական զանգվածների վրա, չի կարող հակաիշխանական տրամադրություններ գրգռել լայն զանգվածների մոտ, եթե դրա համար չլինեն բավարար նախադրյալներ, այսինքն՝ եթե ժողովրդի մեծ մասը պատրաստ չլինի դրան[2]:

Իրավիճակն ապստամբության նախօրյակին

Հայաստանի առաջին հանրապետության իշխանությունները շուրջ երկուսուկես տարվա մաքառումներից հետո, հանուն հայ ժողովրդի ֆիզիկական անվտանգության, հարկադրված էին 1920 թ. դեկտեմբերի 2-ին իշխանությունը խաղաղ ճանապարհով, «առանց մի կաթիլ արեան»[3] զիջել Հյուսիսից՝ «խելագարված ամբոխների» շնչով Հայաստան ներխուժած բոլշևիզմին: Ս. Վրացյանի դիտարկմամբ, իշխանությունը բոլշևիկներին զիջելու սկզբնական շրջանում պարզ ժողովուրդը նույնիսկ լավ ընդունեց այդ փաստը, որովհետև բոլշևիկների կողմից իշխանությունը ստանձնելը նա ընկալեց իբրև հզոր Ռուսաստանի վերադարձ, որն առաջին հերթին նշանակում էր ֆիզիկական անվտանգություն և համեմատական բարեկեցություն: Ժողովուրդն առանձնապես ծանր չի տարել նույնիսկ հանրապետության քաղաքական և զինվորական ղեկավարության ձերբակալությունները[4]: Ա՛յն մարդկանց, որոնց կյանքի իմաստը եղել էր հանուն այդ նույն ժողովրդի անձնուրաց պայքարը ամենուրեք: Թեպետ Առաջին հանրապետության ղեկավարությունը լավատես չէր բոլշևիկների գործելակերպի առումով, որովհետև տեղյակ էր ինչպես Խորհրդային Ռուսաստանում, այնպես էլ հարևան Ադրբեջանում, ուր խորհրդային կարգեր հաստատվել էին ավելի վաղ՝ 1920 թ. ապրիլի 28-ին, նրանց վարած ներքին քաղաքականությունից, բայց

և այնպես հույսեր էր տածում, որ հայ բոլշևիկները հաշվի կառնեն հայ ժողովրդի կրած զրկանքները և նրան չեն մղի նոր փորձությունների: Սակայն մեկ-երկու շաբաթն էլ բավական էր հասկանալու համար, որ բոլշևիկների հետ կապված լավատեսական սպասումները միանգամայն անհիմն էին: Նրանք ոչ միայն մտադիր չէին հարգելու «Դրո-Տերտերյան և Լեգրան» պայմանագրի դրույթները, այլև ձգտում էին ֆիզիկական հաշվեհարդար տեսնել Առաջին հանրապետության ղեկավարների հետ, թալանել առանց այդ էլ նյութական խիստ կարիքներ ունեցող ազգաբնակչության ապրուստի միջոցները և որպես եղբայրական օգնություն՝ ուղարկել Խորհրդային Ադրբեջան՝ կարմիր բանակին: Պարզվում է, որ Առաջին հանրապետության ներկայացուցիչների հետ իշխանությունը հանձնելու համաձայնագրի ստորագրման օրը՝ դեկտեմբերի 2-ին, բոլշևիկների ներկայացուցիչ Բ. Լեգրանը, խախտելով նույն համաձայնագրի 5-րդ կետը, ըստ որի՝ Հեղկոմը պարտավորվում էր Առաջին հանրապետության քաղաքական ղեկավարությանը չհետապնդել անցյալի իր գործունեության համար, հրաման է տալիս ձերբակալել Հ. Օհանջանյանի կառավարության (Բյուրո-կառավարություն) անդամներին[5]: Պատճառը պարզ է. Բյուրո-կառավարությունը 1920 թ. ճնշել էր բոլշևիկների կազմակերպած մայիսյան հակապետական խռովությունները, որի ընթացքում զոհվել էին խռովության որոշ ղեկավարներ: Եվ ահա՝ առաջին իսկ քայլերից բոլշևիկները փորձում էին վրեժխնդիր լինել՝ հաշվի չառնելով նման քայլի հնարավոր հետևանքները:Ս. Վրացյանի վկայությամբ Հայաստանում ռուսական զորամասերի թվի աճին զուգընթաց բոլշևիկների գործողությունները դառնում էին ավելի ու ավելի հանդուգն և արհամարհական:Նա և իր կառավարության մի քանի անդամներ, այդ թվում՝ Դրոն, մնացել էին Երևանում իշխանությունը բոլշևիկներին փոխանցելու, ինչպես նաև վերջինների հետ համագործակցության միջոցով՝ ժողովրդին նրանց հնարավոր բռնաճնշումներից պաշտպանելու նպատակով: 1920-ի դեկտեմբերի վերջերից սկիզբ են առնում նախկին պետական և կուսակցական գործիչների, զինվորականների և մտավորականների ձերբակալությունները: 1921 թ. փետրվարի սկզբներին Երևանի, Էջմիածնի, Ղամարլուի, Ախտայի, Եղենովկայի և Նոր-Բայազետի բանտերում ձերբակալվածների թիվը հասնում էր 2200-ի, որը մի քանի անգամ գերազանցում էր այդ բանտերի համար նախատեսված առավելագույն թիվը[6]: Նոր բանտարկյալներին տեղավորելու համար բանտերից ազատ էին արձակում քրեական հանցագործներին և նրանց դարձնում իրենց գործակալները նախկին իշխանության ներկայացուցիչներին լրտեսելու գործում[7]: Քաղաքացիներից խլում էին իրենց բնակարանները և ամբողջ ընտանիքների, մասնավորապես՝ նախկին ղեկավարների ընտանիքներին, թողնում էին փողոցում կամ լավագույն դեպքում մի քանի ընտանիքի պարտադրում էին ապրել մի բնակարանում, հաճախ՝

Երևանի հայրուկ զորամասը. նստած, ձախից 4-րդը՝ Լ. Քալանթարյան, 5-րդը՝ խմբապետ Մարտիրոս

կիսախավար ու ցուրտ նկուղներում: Երևանի բոլոր աչքի ընկնող տները զբաղեցրել էին բոլշևիկյան Հեղկոմի անդամները: Փետրվարյան ապստամբության հաղթանակից հետո, երբ ՀՓԿ-ի ներկայացուցիչները ցուցակագրել են հեղկոմականների կողմից բռնագրավված տների գույքը, ամենից համեստը եղել է Աշոտ Հովհաննիսյանի[8] զբաղեցրած բնակարանը, որը, ի դեպ, բռնագրավել էին նախկին ռազմական նախարար Ռուբեն Տեր-Մինասյանի ընտանիքից՝ վերջինիս թողնելով փողոցում: Իշխանափոխության նախօրյակին ՀՅԴ ղեկավարության որոշման համաձայն Ռուբենը, խմբապետ Մարտիրոսի և մի քանի թիկնապահների ուղեկցությամբ, հեռացել էր Զանգեզուր: Նշված բնակարանում գրանցված գույքը հավաքվել էր տարբեր տեղերից և «ոչ մի համեմատութիւն չէր կարող լինել «Ռուբէն փաշայի» աղքատիկ կարգ ու սարքի հետ»[9]: Ռուս զինվորներին, փոխանակ տեղավորելու զորանոցներում, բաժանել էին քաղաքացիների տների վրա և բնականաբար նրանք ապրում էին վերջինների հաշվին: Եվ կարելի է միայն պատկերացնել, թե ինչերի էր ընդունակ խմիչքի հանդեպ թուլություն ունեցող, իր ընտանիքին կարոտող, բայց պարտադրաբար օտարության մեջ հայտնված ռուս զինվորը ավանդապահ հայ ընտանիքի հետ միևնույն հարկի տակ ապրելիս: Իհարկե, դա արվել էր ոչ թե այն պատճառով, որ զորանոցներում հնարավոր չէր տեղավորել այդ զինվորներին, այլ որպեսզի նրանց ներկայությունը յուրաքանչյուր տան մեջ ազգաբնակչությանը պահեր մշտական լարվածության և հնազանդության վիճակում: Ամենատարբեր կարգավիճակի բոլշևիկ ղեկավարները, որոնք պարբերաբար, իբրև թե պետական այս կամ այն կարիքի համար, կազմակերպում էին այսպես կոչված «թալշաբաթներ» (ժողովուրդն այդպես է անվանել նրանց բռնագրավումները), իրենք գիշերները լուսացնում էին ցոփ խնջույքներով: Եվ այդ ամենը նույն ժողովրդի աչքի առաջ, որի ունեցվածքի հաշվին կազմակերպվում էին գիշերային խրախճանքները[10]:

Այդ ամենին գումարվում էր Կարաբեքիր փաշայի գլխավորած թուրքական բանակի ներկայությունը Ալեքսանդրապոլում և շրջակա գյուղերում, որոնք ամենևին չէին շտապում հեռանալ զբաղեցրած

Հայրենիքի փրկության կոմիտեի սպայակույտը. ձախից աջ նստած՝ Գ. Մարգիսբեկյան, Կոտո Թարխանյան. կանգնած՝ Ն. Տեր-Ասրվածատրյան, Լ. Հարությունյան

տարածքներից, չնայած որ պարտավոր էին դա անել ըստ Ալեքսանդրապոլի պայմանագրի (2 դեկտեմբերի, 1920 թ.), իսկ Հեղկոմն էլ պարտավորվել էր զորքերի դուրսբերումը պահանջել իրենց դաշնակից Թուրքիայից, սակայն ոչ միայն գործնական քայլերի չէր դիմում այդ ուղղությամբ, այլև Չեկայի պետ Ավիս Նուրիջանյանը հաճախ սպառնում էր, որ ժողովրդի անհնազանդության դեպքում իրենք կդիմեն թուրքական բանակի օգնությանը: Թուրքական զորամասերի հսկողության տակ գտնվող բնակավայրերում պարբերաբար տեղի էին ունենում բնակչության ունեցվածքի թալան, սպանություններ ու բռնաբարություններ: Տղամարդկանց բռնի քշում էին Թուրքիայի խորքերը հարկադիր աշխատանքի: Բոլշևիկյան Հեղկոմը, փոխանակ զբաղվելու այդ կենսական նշանակության խնդիրներով, իր հերթին զբաղված էր սեփական ժողովրդի հարստահարությամբ: Որքան որ պետական ունեցվածքի նկատմամբ խնայող էին նախկին իշխանությունները, նույնքան շռայլ ու վատնող էին նորերը՝ բոլշևիկյան իշխանությունները: Պիտի խոստովանել, որ հատկապես սկզբնական շրջանում բոլշևիկները կարողանում էին ապահովել իրենց գործողությունների գաղտնիությունը և որպես կանոն՝ բնակչությանը անակնկալի բերել: Նրանք ճիշտ կողմնորոշվեցին նաև հնարավոր ռազմական հակազդեցությունը չեզոքացնելու գործում. նախ՝ 1921 թ. հունվարի 10-ին ռուսական զորահրամանատարության կողմից կազմակերպված «հրավերով» երկրից դուրս բերեցին Դրոյին՝ իր սպայակույտի հետ միասին, որից ամենից շատն էին զգուշանում, ապա հունվարի 24-ին կազմակերպեցին շուրջ 1500 սպաների զինաթափումն ու աքսորը՝ «ալեզարդ» սպարապետ Թ. Նազարբեկյանի գլխավորությամբ[11]: Իսկ մինչ այդ Բաքու էին աքսորել 70 սպաների՝ ըստ կարմիր բանակի ռազմական դրվածքի վերապատրաստվելու պատրվակով: Իհարկե, ինչպես Դրոն, այնպես էլ ուրիշները հասկանում էին, որ կազմակերպված հրավերը իրականում նշանակում էր աքսոր, և որ երկրից դուրս են գալիս անվերադարձ, բայց այդ զոհողությանը գնում էին բոլշևիկներին նոր գրգռությունների առիթ չտալու և ժողովրդին բռնաճնշումներից զերծ պահելու մտահոգությամբ: Այլապես, ինչպես նշել է Ս. Վրացյանը, Դրոն միայնակ ավելի մեծ ազդեցություն ուներ երկրում, քան Հեղկոմն՝ իր Չեկայով և ռուսական զորամասերով միասին վերցրած, և ցանկացած պահի կարող էր ետ վերցնել իշխանությունը[12]: Դրոյի ներկայությունը ժողովրդի համար հույս էր, որ անհրաժեշտ ժամին նա անպայման մի ելք կգտնի, իսկ մեկնումը համարժեք էր ողբերգության, որովհետև ժողովուրդը զրկվում էր իր վերջին հույսից: Ականատեսի վկայությամբ Երևանի գրեթե ողջ բնակչությունը, ճնշող լռությամբ փողոց դուրս եկած, հրաժեշտ էր տալիս Դրոյին, ինչպես որ վերջին ճանապարհ են ուղեկցում մեծ հանգուցյալին[13]:

Երևանի բանտում էին ժողովրդի քաղաքական և մշակութային էլիտայի ներկայացուցիչներից շատերը՝ նախկին վարչապետներ Հ. Քաջազնունին, Հ. Օհանջանյանը, Խորհրդարանի նախագահ Ա. Սահակյանը (Հայր Աբրահամ), անվանի գրող, Խորհրդարանի փոխնախագահ Լ. Շանթը, Կրթության նախարար, տաղանդավոր գրաքննադատ Ն. Աղբալյանը, արդարադատության նախարար Ռ. Դարբինյանը (Ա. Չիլինգարյան), խմբապետներ Համազասպը, Մակեդոնը, գնդ. Ղորղանյանը, Երևանի քաղաքագլուխ Մ. Մուսինյանը, քաղաքային խորհրդի անդամ Ա. Աստվածատրյանը, Վանի ինքնապաշտպանության ղեկավարներից Հ. Կոսոյանը, Սոցիալ-դեմոկրատական կուսակցության ղեկավար Բախշի Իշխանյանը և շատ ուրիշներ: Ձերբակալությունների և բռնությունների ալիքը երկրում սաստկանում է հատկապես Գ. Աթարբեկյանի ժամանումով, որը Ռուսաստանում արդեն հայտնի էր դարձել իր առանձնակի դաժանություններով: Փետրվարի 4-ին Ս. Վրացյանը Գ. Աթարբեկյանի հետ հանդիպումով մի վերջին փորձ է անում՝ նրան բացատրելու Հեղկոմի գործելակերպի ողջ վտանգավորությունը ժողովրդի և երկրի համար, սակայն համոզվում է, որ բոլշևիկներն ի վիճակի չեն սթափորեն գնահատելու դրությունը: Ավելին, սթափության կոչերը նրանք ընկալում են որպես իրենց ուժի և դիմացինի թուլության նշան:

Ընդհանուր գծերով այսպիսին էր պատկերը բոլշևիկների տիրապետության երկուսուկես ամիսների ընթացքում և հենց նշված հանգամանքները լցրին ժողովրդի համբերության բաժակը, որն այլևս չցանկացավ հանդուրժել բոլշևիկյան անարգ լուծը: Հայաստանի Հանրապետության առաջին վարչապետ Հ. Քաջազնունին, որը, ինչպես նշեցի նույնպես ձերբակալվածների մեջ էր, այդ օրերի մասին գրել

է. «... հաստատեց մի ռեժիմ, որին չի կարելի տալ ուրիշ անուն, քան սանձարձակ ու վայրագ բռնութիւն: .... Բոլշեւիկների բռնութիւնը ու Հայաստանում գործադրուած միջոցների դաժանութիւնը ունէին մի առանձնայատուկ գիծ, որ ամենից աւելի գրգռիչ ու անհանդուրժելի էին,- այն, որ անիմաստ էին բռնութիւնները, աւելորդ ու աննպատակ»[14]:

Փետրվարյան ապստամբությունը և քառասնօրյա գոյամարտերը

Այդ ընթացքում դեռևս չձերբակալված քաղաքական ու զինվորական գործիչները գտնվում էին թաքստոցներում: Բաշ-Գառնին խմբապետ Մարտիրոսի գլխավորությամբ առաջինը անհնազանդություն հայտնեց բոլշևիկյան իշխանություններին: Դեկտեմբերի սկզբներին նախկին ռազմական նախարար Ռուբեն Տեր-Մինասյանին Զանգեզուր ուղեկցելուց հետո խմբ. Մարտիրոսը դեկտեմբերի վերջերին արդեն Բաշ-Գառնիում էր և մոտից հետևում էր իրադարձությունների զարգացմանը՝ կապ պահելով ղեկավար ընկերների՝ Ս. Վրացյանի և Դրոյի հետ: 1921-ի հունվարի սկզբներին Բաշ-Գառնիում կյանքի է կոչվում առաջին Հայրենիքի փրկության կոմիտեն, որի գաղափարը Մարտիրոսին հուշել էր Գ. Նժդեհը Զանգեզուրից վերադարձի ճանապարհին՝ հնարավոր շարժմանը ապակուսակցական բնույթ հաղորդելու նպատակով: Հունվարի վերջերին, երբ սաստկանում է ձերբակալությունների ալիքը և հաճախակի են դառնում ձերբակալվածների, մասնավորապես՝ ղեկավար ընկերների նկատմամբ հաշվեհարդար տեսնելու մասին լուրերը, խմբ. Մարտիրոսը դիմում է գործնական քայլերի: Նա մարտական վիճակի է բերում Բաշ-Գառնիի ուժերը՝ հրամանատար նշանակելով իր օգնական և փորձառու խմբապետ Խնկո Ասատրյանին, ապա, անցնելով Կոտայքի մյուս գյուղերը, տեղի փորձառու մարտական գործիչների հետ հանդիպումների միջոցով նույն աշխատանքները կազմակերպում է նաև այդ գյուղերում: Հունվարին նա զենք ստանալու համար դիմում է Երևանում գտնվող պատասխանատու ընկերներին, բայց վերջիններս, վաղաժամ համարելով ապստամբություն բարձրացնելը, նրան մերժում են: Զենքի և զինամթերքի հայթայթման գործը Մարտիրոսը կազմակերպում է տեղական ուժերով[15]: Ապստամբության կազմակերպական աշխատանքները սկսում են թափ հավաքել միայն փետրվարի 10-ից հետո, երբ դրա անխուսափելիությունն այլևս փաստ էր բոլորի համար: Այդ փուլում Կոտայքի ապստամբներին է միանում նաև Կուռո Թարխանյանը: Փետրվարի 13-ին Կոտայքի Զառ գյուղում գումարվում է ապստամբության ղեկավարների ժողովը՝ ՀՅԴ Հայաստանի ԿԿ-ի անդամներ Հ. Տեր-Հակոբյանի և Ե. Սարգսյանի մասնակցությամբ: Ընտրվում են զինվորական ղեկավարները և ճշտվում է ապստամբության օրը: Խմբ. Մարտիրոսի առաջարկությամբ ապստամբ ուժերի ընդհանուր հրամանատար է ընտրվում Կուռո Թարխանյանը: Նույն ժողովի կողմից խմբ. Մարտիրոսը նշանակվում է Երևանի վրա արշավող ապստամբ ուժերի հրամանատար[16]: Այդ ժողովին մասնակցում են նաև Ախտայի ապստամբների ղեկավարները:

Զուգահեռաբար նմանօրինակ կազմակերպական աշխատանքներ իրականացվել են նաև Թալինի սասունցիների շրջանում՝ Կ. Սասունու, Մուշեղ Ավետիսյանի, Մորուք Կարոյի և Չոլոյի գլխավորությամբ:

Որքան էլ ապստամբության ղեկավարները գործել են քողարկված, նրանց գործողությունները չեն վրիպել հեղկոմականների աչքից: Մանավանդ որ վերջիններն արդեն տեղյակ էին Զանգեզուրից խմբ. Մարտիրոսի վերադարձի մասին: Հեղկոմը փորձում է Բաշ-Գառնիի վրա անակնկալ հարձակումով վիժեցնել ապստամբությունը, սակայն Բաշ-Գառնիի վրա արշավող բոլշևիկյան երկու զորամասերին փետրվարի 16-ին անակնկալ հարձակումներով և առանձին-առանձին ջարդում են խմբ. Խնկոյի հրամանատարությամբ գործող բաշգառնեցիները: Այդ լուրը ոգևորիչ մեծ նշանակություն է ունենում Երևանի վրա արշավող Կոտայքի ապստամբների համար: Մասնավորապես վերոհիշյալ դեպքերը նկատի ունենալով՝ Ե. Սարգսյանը գրել է. «Խնկօն մեզ հետ չէր: Մարտիրոսը նրան իր ուժերով (Գեառնիի եւ շրջանի) թողել էր Ողջաբերդի շրջանում: Բոլշեւիկները, ոչ մի տեղեկութիւն չունենալով ոչ Խնկոյի ուժերի եւ ոչ էլ Կոտայքի մասին, մտահոգուած էին Գեառնիով, ուր պիտի լինէին իրենց քունը կտրող Մարտիրոսն ու Խնկօն: Նրանք գիտէին, որ **այս երկու շատ վտանգաւոր խմբապետները եւ իրենց մեծ ու կռուի պատրաստ գիւղը** (ընդգծումն իմն է՝ Վ. Պ.) ամենակատաղի թշնամիներն են Սովետական սարք ու կարգի համար: Եվ ահա Փետրուարի 15ի գիշերը նրանք դեպի Գեառնի ճանապարհ են հանում երկու զօրամասեր, երկու ուղղութեամբ»[17]: Ապստամբության ծրագրի համաձայն Կոտայքի ուժերը դեպի Երևան պիտի շարժվեին Քանաքեռի կողմից, Բաշ-Գառնիի ուժերը՝ Նորքի և պիտի ազատեին Երևանի բանտում և Չեկայի նկուղներում գտնվող բանտարկյալներին, իսկ Թալինի սասունցիները Աշտարակի և Էջմիածնի կողմից պիտի փակեին փախչելու փորձ անող բոլշևիկների ճանապարհը: Երևանի ներսից այդ գործողություններին պիտի օժանդակեին ՀՅԴ ուսանողական և երիտասարդական կազմակերպությունները: Փետրվարի 16-ին սկսված ձյունամրրիկի պատճառով Երևանի վրա շարժվող ապստամբները կորցնում են ճանապարհը, որի պատճառով ապստամբության ժամանակացույցը խախտվում է մեկ օրով: Ապստամբ ուժերի առաջնորդների միջև ոչ կանոնավոր կապի պատճառով եղել են նաև որոշ թյուրըմբռնումներ, բայց դրանք վճռորոշ նշանակություն չեն ունեցել և չեն խանգարել ապստամբության հաղթական ելքին:Ս. Վրացյանը հետևյալ կերպ է ներկայացնում ապստամբների մուտքը Երևան. «Փետրուար 16-17-ին մայրաքաղաքը ամէն կողմից շրջապատուած էր ապստամբ ժողովուրդով: Յեղկոմը յուսահատական

դիմադրութեան փորձեր արաւ, բայց անյաջող: …. Փետրուար 18-ը յարութեան օր եղաւ Հայաստանի ժողովուրդի համար: Վաղ առաւօտեան ազատագրուած շրջաններից Երեւան իջան Ախտայի, Կոտայքի և Բաշ-Գառնիի ժողովրդական ապստամբ ուժերը Կուռո Թարխանեանի և խմբապետ Մարտիրոսի ղեկավարութեան տակ: Թաքստոցից դուրս եկան վերջին կառավարութեան անդամները …»[18]: Իհարկե, Փետրվարի 16-17-ի գիշերը բոլշևիկներն սկսել էին իրենց սև գործը. Երևանի բանտում և Չեկայի նկուղներում գազանաբար սպանվել ու կացնահարվել էր մոտ 60 մարդ, այդ թվում՝ խմբապետներ Համազասպը, Մակեդոնը, գնդ. Ղորղանյանը, բանվոր Սերգոն և ուրիշներ: Սպանություններն աննախադեպ չափերի կհասնեին, եթե Հեղկոմի իշխանությունը երկարեր ևս մի քանի օրով[19]: Բոլշևիկները, երկու զրահապատներով՝ «Ազատամարտ» և «Վարդան զորավար», Երևանից փախչելով Ղամարլուի ուղղությամբ, կազմակերպվում և շարունակում են իշխանության համար պայքարը: Փետրվարի 18-19-ին ձևավորվում է կառավարություն Ս. Վրացյանի գլխավորությամբ, որը կոչվում է Հայրենիքի փրկության կոմիտե: Ձևավորվում են ռազմաճակատներ բոլոր ուղղություններով: Բանակի ընդհանուր հրամանատար է նշանակվում գնդ. Կուռո Թարխանյանը՝ Սպարապետ Սուրեն անունով, իսկ խմբ. Մարտիրոսը նշանակվում է Ղամարլուի ռազմաճակատի հրամանատար: Հայաստանը թևակոխում է պարտադրված քաղաքացիական պատերազմի փուլ, որի մասին այնքան երազում էին հայ բոլշևիկները և որից խուսափել չհաջողվեց Առաջին հանրապետության ղեկավարներին: Քաղաքացիական պատերազմը փոփոխակի հաջողություններով տևեց շուրջ քառասուն օր՝ մինչև ապրիլի 2-ը: Ռուսաստանից ստացած ռազմական օժանդակության շնորհիվ բոլշևիկները, մարդուժի և ռազմական տեխնիկայի գերազանցություն ձեռք բերելով հյուսիսային ռազմաճակատներում՝ Ախտայի և Սպիտակի, կարողացան կոտրել ապստամբների դիմադրությունը, որին հետևեց ռազմաճակատների փլուզումը: Մյուս կողմից՝ սպառվեց ՀՓԿ-ի զինամթերքը և ժողովրդական ուժերը ստիպված եղան տեղի տալ այդ եղբայրասպան պատերազմում:

Փետրվարյան ապստամբության արժևորումը

Չնայած որ հայ հեղկոմականներն առերևույթ ՀՅ Դաշնակցությանը վերագրել են հակաբոլշևիկյան (իմա՝ Փետրվարյան-Վ.Պ.) ապստամբությունը նախապես պլանավորած լինելու մեղադրանք, իրականում, սակայն, նրանցից ոմանք նամակներում և զեկույցներում խոստովանել են, որ ապստամբությունն իրենց թույլ տված կոպիտ սխալների հետևանք էր[20]: Այդ առումով ուշագրավ են, մասնավորապես, Հեղկոմի անդամ և ՀԿ(բ)Կ կենտկոմի քարտուղար Ա. Հովհաննիսյանի հետևյալ խոսքերը. «Հակահեղափոխությունը (իմա՝ Փետրվարյան ապստամբությունը – Վ. Պ.) ստեղծվել է ոչ թե դաշնակների աշխատասենյակներում, այլ հանդիսացել է մեր քաղաքականության արդյունքը»[21]: Փետրվարի 21-ին Գ. Օրջոնիկիձեին նույնաբովանդակ խոստովանական հեռագիր է ուղարկել բոնությունների հիմնական կիրառող Գ. Աթարբեկյանը[22]: Մի՞թե այլ բան էին ասում դաշնակցական գործիչները. «Փետրուարեան ապստամբութիւնը – բոլշեւիկների գործն էր ամբողջովին, բնական հետեւանք նրանց բռնութիւնների ու՝ մանաւանդ՝ անվերջ բռնագրաւումների, որ քանդում էին ժողովրդական տնտեսութեան վերջի մնացորդները, զրկում էին սովահար մարդկանց վերջի կտոր հացից»[23]: Նույնն է ասում նաև ՀՓԿ-ի ղեկավարը. «…. Վայրկեանը ծայր աստիճան աննպաստ էր եւ դրսից դիտողի համար աններելի՝ որևէ խռովութիւն Հայաստանում: Մենք գիտակցում էինք այդ եւ ամէն կերպ խուսափում էինք քաղաքացիական կռիւներից: Բոլշեւիկների համար, ընդհակառակը, քաղաքացիական կռիւը ցանկալի էր»[24]: Ավելացնենք:- Ցանկալի էր, որովհետև բոլշևիկները գիտակցում էին, որ իրենք իշխանության հասել էին հանգամանքների բերումով, այլ ոչ թե սեփական ուժերով և իրենց չէին զգում դրության լիարժեք տերեր: Այսինքն՝ կար հավակնությունների բավարարման անհրաժեշտություն, և դա պիտի արվեր սեփական ժողովրդի արյան հաշվին:

Որ Փետրվարյան ապստամբությունը մի խումբ արկածախնդիրների գործ չէր, այլ կրում էր համաժողովրդական բնույթ, շատ արագ համոզվել է նաև Հ. Թումանյանը, որը մարտի 20-ին Օրջոնիկիձեի գիտությամբ Թբիլիսիից Հայաստան էր եկել՝ ապստամբներին զենքը վայր դնելու հորդորով. «…. էս խում ամբողջ ժողովուրդն է, որ ոտքի ելած է»[25]:

ՀՓԿ-ի գլխավորած քառասնօրյա գոյամարտերի պարտության մասին ևս շատերն են գրել՝ մատնանշելով մի շարք թերություններ: Օր., Հ. Քաջազնունու կարծիքով պարտության հիմնական պատճառներից է այն, որ Հայրենիքի փրկության շարժման ուժերը անհրաժեշտ նվիրվածությամբ ու հաղթանակի նկատմամբ հավատով չեն կռվել. «…. Ապստամբութիւնը իր իսկ ներսը կրում էր արդէն պարտութեան սաղմը, որովհետեւ յաւատ չունէր յաջողութեան»[26]: Ըստ մեկ այլ ժամանակակցի՝ քաղաքացիական կռիվների ընթացքում իրեն զգալ էր տալիս հմուտ հրամանատարական կազմի պակասը, երբեմն էլ՝ անկարգապահությունը զորամասերում, որովհետև հունվարի 24-ին աքսորվել էր բարձր սպայությունը, իսկ եղածների մի մասը, չնայած իրենց անձնական քաջությանը, ի վիճակի չէին մեծ մարտեր ղեկավարել[27]: Պատճառներից մեկն էլ կարող է համարվել այն, որ, գերազանցապես կազմված լինելով գյուղացիներից, ՀՓԿ-ի կռվող ուժերին մարտի կեսերից սկսած ձգում էին հողագործական աշխատանքները, որով գյուղացին ամբողջ տարին պիտի կերակրեր իր ընտանիքը: Ուստի ոչ հազվադեպ ապստամբ զորամասերի հրամանատարները բավարար ուժեր չունենալու պատճառով չէին կարողանում ժամանակին կատարել Գլխավոր շտաբի առաջադրանքները, որոնց ապահովումից հաճախ կախված էր ընդհանուր

գործի հաջողությունը[28]: Այսպես կարելի է թվարկել նաև այլ պատճառներ, բայց դրանք միայն ածանցյալ երևույթներ էին, որոնք գուցե և արագացրել են պարտությունը, սակայն դրանցից և ոչ մեկը չէր կարող ապստամբության պարտության հիմնական պատճառը լինելը:

Նախ, երբ խոսվում է Փետրվարյան համաժողովրդական ապստամբության մասին, միմյանցից պիտի տարանջատել երկու իրողություն. 1) բուն ապստամբությունը, որը տեղի ունեցավ փետրվարի 17-ի, լույս 18-ի գիշերը և 2) ՀՓԿ-ի՝ որպես ազգային իշխանության ձևավորումով սկիզբ առած քառասնօրյա գոյամարտերի շրջանը: Փետրվարյան ապստամբությունն իր խնդիրը կատարել է: Նա տապալել է բոլշևիկյան ատելի վարչակազմը, բանտերից ազատել է ստույգ մահվան դատապարտված հազարավոր քաղբանտարկյալների և հնարավորություն է տվել ձևավորելու ազգային իշխանության մարմիններ՝ ի դեմս ՀՓ հանրապետական և տեղական կոմիտեների: Պարտվել է երկրորդը: Իսկ ուներ չպարտվելու տարբերակ: Կարծում ենք՝ ի սկզբանե այս հարցի պատասխանը կանխորոշված էր. «Ո՛չ, չուներ»: 1920-1921 թթ. Հայաստանի Հանրապետության շուրջ ձևավորված աշխարհաքաղաքական իրավիճակում ՀՓԿ-ի ջանքերը չէին կարող ցանկալի արդյունք տալ, եթե նույնիսկ չլինեին վերը նշված և այլ բացթողումները: «Բոլշևիկեան մուրճի և թիւրքական սալի միջև» գտնվող Հայաստանն այլևս չէր կարող անկախ լինել: Սակայն բոլշևիկյան Հեղկոմի վարած տհաս և ազգակործան քաղաքականությունը ժողովրդին այլ ելք չթողեց, քան այդ ապօրինի վարչակարգի դեմ ընդվզելը և կռվով իր պատիվը պաշտպանելն էր: Քառասնօրյա գոյամարտերի ընթացքում երկու կողմերից զոհվեցին հազարավոր մարդիկ, գերազանցապես հայեր, բայց նաև ռուսներ[29]: Մարդիկ, որոնք միմյանց հետ կիսելու ոչինչ չունեին: Այդ եղբայրասպան պատերազմին հանգեցնող որոշ քայլեր, մասնավորապես՝ հայ սպայության աքսորը, Հայհեղկոմին թելադրվել էր բոլշևիկների մոսկովյան կենտրոնից[30] և իրագործվել էր ըստ խորհրդային հասարակարգի կառուցման գևորգաթարբեկյանական և ավիանուրիջանյանական կարճամիտ ըմբռնման: Ավելի քան քառասնօրյա կռիվների ընթացքում երկուստեք զոհվածների արյունը ծանրանում է հեղկոմականների չունեցած խղճին:

Փետրվարյան համաժողովրդական ապստամբությունը 20-րդ դարասկզբի հայոց ազգային-ազատագրական պայքարի ամենից հերոսական և միաժամանակ ամենից ողբերգական էջերից է: Հայոց ազատագրական պայքարի պատմության մեջ իր նշանակությամբ այն կարող է համեմատվել Մայիսյան հերոսամարտերի հետ, մի տարբերությամբ, որ եթե Սարդարապատի, Բաշ-Ապարանի և Ղարաքիլիսայի ճակատամարտերում հայ ժողովուրդը բռունցքվել էր իր դարավոր ոսոխի՝ թուրքի դեմ և գոյության պայքար էր մղում, ապա 1921 թ. նույն ժողովուրդը հանուն արժանապատվության ըմբոստացել էր իր ծոցից դուրս եկած «բոլշևիկ» կոչվող Օտարի դեմ, որն իրականում փոքրամասնություն էր Հայաստանում, բայց պարտադրվել էր ռուսական սվինի օժանդակությամբ՝ օգտվելով երկրի համար ստեղծված խիստ անմխիթար վիճակից:

Փետրվարյան ապստամբությունը բոլշևիզմի երեսին իջած մի շառաչուն ապտակ էր, որի ձայնը պիտի հնչի բոլոր ժամանակների՝ իշխանության մարմաջով տառապողների ականջներում, որպեսզի գիտակցեն, որ իշխանությունը միջոց է ժողովրդին ու հայրենիքին ծառայելու, այլ ոչ թե հանուն սեփական իշխանության պահպանման ժողովրդին ստրկության դատապարտելու և հայրենիքը վաճառքի առարկա դարձնելու համար:

Կարծում ենք՝ Փետրվարյան համաժողովրդական ապստամբության դասերն ավելի քան արդիական են նաև այսօր՝ հարյուր տարի անց:

Օգտագործված աղբյուրներ և գրականության ցանկ

1- Տես Մարտիրոս Աբրահամյան (Բաշգառնեցի Մարտիրոս), Իմ հիշելի հուշերը, Եր., 2016, էջ 370:

2- Այս առնչությամբ չենք կարող չնշել, որ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի նախաձեռնությամբ վերջին տարիներին լույս տեսնող «Հայոց պատմության» ակադեմիական նոր հրատարակության մեջ ևս Փետրվարյան ապստամբությունը լուսաբանվում է թվացյալ անաչառությամբ, իսկ իրականում՝ առավելապես բոլշևիկյան պատմագրության փաստաթղթային հենքի վրա, որը, բնական է, չի կարող անկողմնակալ կարծիք ձևավորել իրադարձություններից անտեղյակ ընթերցողի մոտ (տես «Հայոց պատմություն», հ. IV, գ. առաջին, Եր., 2010, էջ 295-312):

3- Յ. Իրազեկ, Մօտիկ անցեալից, Պէյրութ, 1956, էջ 92:

4- Տես Ս. Վրացեան, Կեանքի ուղիներով, հ. Ե, Պէյրութ, 2007, էջ 205:

5- Տես Գ. Գալոյան, Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Եր., էջ 374:

6- Տես Կարօ Սասունի, Փետրուարեան ապստամբութիւնը, Պէյրութ, 1970, էջ 118:

7- Տես «Ասլան Ստեփանյանի յուշերը», Թեհրան, 1966, էջ 374:

8- 1920-21 թթ. եղել է լուսավորության ժողովրդական կոմիսար, 1922-27 թթ. ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար: Մասնագիտությամբ պատմաբան: ՀԽՍՀ ԳԱ-ի ակադեմիկոս (1960):

9- Տես Ս. Վրացյան, նշվ. աշխ., հ. Զ, Պէյրութ, 2007, էջ 30:

10- Տես Ս. Վրացեան, նշվ. աշխ., հ. Ե, էջ 244-250:

11- Աքսորված սպաների թվաքանակի վերաբերյալ ժամանակակիցների տվյալները տատանվում են 1300-1600-ի սահմաններում (տես Ս. Վրացեան, Հայաստանի Հանրապետութիւն, Թեհրան, 1982, էջ 511,-Յ. Իրազեկ, նշվ. աշխ., էջ 100,-Եփրեմ Սարգսեան, Փետրուարեան յեղաշրջման օրերից // «Հայրենիք», 1959,№ 9, էջ 43,-Հայկակ Կոսոյան, Բանտի քարերն էին աղաղակում ... , Քալիֆորնիա, 2001, էջ 25,- Կ. Սասունի, նշվ. աշխ., էջ 53,-«Հայոց պատմություն», հ. IV, գ. առաջին, էջ 296):

12- Տես Ս. Վրացեան, Կեանքի ուղիներով, հ. Ե, էջ 217:

13- Տես Կարօ Սասունի, նշվ. աշխ., էջ 54:

14- Յովի. Քաջազնունի, Հ.Յ. Դաշնակցութիւնը անելիք չունի այլևս, Վիեննա, 1923, էջ 36:

15- Տես Մարտիրոս Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 390-392:

16- Տես Մարտիրոս Աբրահամյան, նշվ. աշխ.,էջ 417:

17- Եփրեմ Սարգսեան, նշվ. աշխ.,էջ 68-69:

18- Ս. Վրացեան, Հայաստանի Հանրապետութիւն, էջ 527:

19- Ս. Վրացեան, նշվ. աշխ., էջ 527:

20- Տես «Հայոց պատմություն», հ. IV, գ. առաջին, էջ 295-297:

21- Տես նշվ. աշխ., էջ 296:

22- Նույն տեղում:

23- Տես Յովի. Քաջազնունի, նշվ. աշխ.,էջ 37:

24- Ս. Վրացեան, Կյանքի ուղիներով, հ. Զ, էջ 195:

25- Կ. Սասունի, Յուշեր և վկայութիւններ, Պէյրութ, 1972, էջ 168: Հմմտ. նաև՝ Կ. Սասունի, Փետրուարեան ապստամբութիւնը, էջ 203-206,- Ս. Վրացեան, Կյանքի ուղիներով, հ. Զ, էջ 101-103,- Վարդգէս Աիսարոնեան, Յովհաննէս Թումանեան. Մարդը և բանաստեղծը, Եր., 2019, էջ 169-170:

26- Տես Յովի. Քաջազնունի,նշվ. աշխ.,էջ 37-38:

27- Տես «Համարձակում Տէրտէրեանի Յուշերը» // Ս. Վրացեան, Կյանքի ուղիներով, հ. Զ, էջ 295-301:

28- Տես Մարտիրոս Աբրահամյան, նշվ. աշխ.,էջ 535:

29- Ստույգ տվյալներ չկան, բայց, նկատի ունենալով մասնակիցների ընդհանուր թիվը երկու կողմերից և ռազմական գործողությունների տևողությունն ու բնույթը, կարող է խոսք լինել 3000-5000 սպանվածի մասին:

30- Տես «Հայոց պատմություն», հ. IV, գ. առաջին, էջ 296:

Փետրվարյան ապստամբության անհայտ հերոսը. Տիգրան Ծամուր (Ամսեյան)

Անի Մելքոնյան
Ավարտել է ԵՊՀ պատմության ֆակուլտետը, ՀՅԴ «Նիկոլ Աղբալյան» ուսանողական միության անդամ

Ինչպես գիտենք, 100 տարի առաջ այս օրերին, ընդամենը դեռ երկու ամիս խորհրդայնացված Հայաստանում խորհրդային իշխանությունների վարած քաղաքականության հետևանքով՝ բռնկվեց փետրվարյան ապստամբությունը:

Հայոց բանակի սպաների, ազգային ու պետական գործիչների նկատմամբ բռություններն ու հալածանքը, ինչպես նաև այսպես կոչված «ռազմական կոմունիզմի» քաղաքականությունը, ի վերջո հանգեցրին ժողովրդական ընդվզման:

Փետրվարյան ապստամբության սկզբի, ընթացքի ու ավարտի մասին իհարկե չենք խոսի, քանզի քննարկման այլ թեմա է, միայն նշենք, որ ապաստամբության ղեկավարությունը իր ձեռքը վերցրեց Սիմոն Վրացյանի ղեկավարած «Հայրենիքի փրկության կոմիտե»-ն, իսկ ապստամբության ղեկավարը, սպարապետ Կուռո Թարխանյանն էր:

Այդ օրերին, ապստամբների շարքերում, բազմաթիվ մտավորականների և ուսանողների կողքին էր, նաև ժամանակի հայտնի գործիչ՝ այսօր շատերին գրեթե անհայտ Տիգրան Ծամուրը, որը փետրվարի 18-ի՝ Երևանը բոլշևիկյան տիրապետությունից ազատագրելու՝ ըստ էության ապստամբության հաղթանակի օրվա միակ զոհն էր:

Տիգրան Ծամուրը (Տիգրան Հակոբի Ամսեյան) ծնվել է 1885 թ-ին Սղերդում, կրթությունը ստացել է Սանասարյան վարժարանում, եղել է Ռոստոմի և Աստվածատուր Խաչատրյանի ուսանող ու գաղափարակիցը:

ՀՅԴ «Կիլիկիա» թերթի խմբագիր, ուսուցիչ Տիգրան Ծամուրի գործունեության մեջ հատկապես առանձնանում է հայոց ցեղասպանության օրերին կատարած հայ երեխաներին ու գաղթականներին փրկելու մեծ գործը. «Մեծ Եղեռնի օրերին, Մարզպետի (Ղազարոս Ղազարոսյան), Սեմի Չավուշի (Սամվել Գորգիսյան), Խոսրով Բաբայանի և այլ դաշնակցական ընկերների հետ մասնակցել է ոչ միայն «Մի ոսկի՛ մի երեխա» ծրագրի իրագործմանը, այլև ընդհանրապես հայ գաղթականներին փրկելուն… »[1]:

Սանասարյան վարժարանից հետո Հայդելբերգում սովորած Ծամուրը գերազանց տիրապետում էր գերմաներենին, ինչի շնորհիվ էլ Կոնիայի աքսորից փախչելուց հետո դառնալով ավստրիացի սպա Լեոյթենկլրի թարգմանիչը՝ կարողանում է փրկել բազմաթիվ հայ գաղթականների, որոնք Ծամուրի շնորհիվ հնարավորություն էին ստանում աշխատել երկաթուղու շինարարությունում՝ այդպիսով փրկվելով անապատում տանջամահ լինելուց:

1918թ-ին մի շարք երիտասարդների հետ, Ծամուրը գալիս է հայրենի նորաստեղծ անկախ պետությանը ծառայելու, և Կիլիկիայից ընտրվում ՀՀ խորհրդարանի



պատգամավոր, այնուհետև «նշանակվում է Սևանի գավառապետ և, ի թիվս շատ այլ մտահոգող խնդիրների, նախաձեռնում է ռազմածովային նավատորմի կազմակերպում՝ այդ գործում ներգրավելով ծովային երիտասարդ սպա Թումանյանին: Նրանք նավերի վրա գնդացիրներ տեղադրելով՝ հակահարված են տալիս թշնամուն, դրանով զգալիորեն ապահովելով շրջակա հայկական գյուղերի անվտանգությունը, որոնք մինչ այդ թաթարների կողմից անընդհատ ենթարկվում էին գնդակոծությունների[2]»:

Հենց այս շրջանում էր, որ Արաքսի ծանծաղուտներում լքված «Сестрица Нюша» նավը տեղափոխվեց Սևանա լիճ «Ծամուրը նավը վերանվանում է «Գեղանույշ» (դա խորհրդային տարիներին Սևանում նավարկող «Միկոյան»-նէր)[3]»:

Ռազմածովային նավատորմի կազմակերպման ուղղությամբ կատարված եռանդուն աշխատանքն էր պատճառը, որ ընկերները նրան հումորով անվանում էին «Ծովակալ Սեյմուր»:

1919-ին Ծամուրը ընտրվում է ՀՅԴ 9-րդ ընդհանուր ժողովի պատգամավոր:

Հայաստանի Առաջին Հանրապետության խաղաղ-ստեղծագործ կյանքը սակայն ընդհատեց նախ 1920-ի սեպտեմբերին Թուրքիայի սանձազերծած պատերազմը, հետո բոլշևիկա-թուրքական դավադրությունը, որի պատճառով Հայաստանի Հանրապետությունն ընկավ, Վրացյանի կառավարությունը խաղաղ ճանապարհով՝ 1920թ-ի դեկտեմբերի 2-ին իշխանությունը հանձնեց բոլշևիկներին, որոնք մեկը մյուսի ետևից խախտելով դեկտեմբերի 2-ի երևանյան համաձայնագրի կետերը՝ իսկական տեռոր սկսեցին ազգային ու ռազմական գործիչների նկատմամբ:

Նախ 1921 թ-ի հունվարի 10-ին Դրոն իր զինակիցների հետ աքսորվեց Ռուսաստան, այնուհետև Ավիս Նուրիջանյանի ու Գևորգ Աթարբեկյանի գլխավորությամբ սկսվեցին սանձարձակ վայրագությունները բնակչության և բանակի սպայակազմի

նկատմամբ, բոլշևիկյան տեռորից խույս տալու համար, մի շարք ազգային ու պետական գործիչներ ստիպված լքում են Հայաստանը:

Կասյան-Նուրիջանյան-Աթաբեկյան եռյակի բռնությունները ի վերջո հանգեցրին ժողովրդական հուզումների, և պայթեց փետրվարյան ապստամբությունը. «Երկրում մնացած դաշնակցական գործիչները իրենց ձեռքն առան ապստամբության ղեկավարությունը, հնարավորինս խուսափելու համար անկանոն, քաոսային վիճակից և առավել մեծ արյունահեղությունից ու զոհերից[4]»:

Ապստամբության ղեկավարությունը ստանձնած դաշնակցական գործիչների շարքերում էր նաև՝ երկրում մնացած և Կոնդի այգիներում թաքնված Տիգրան Ծամիուրը, որը «փետրվարի 18-ին հակառակորդի նկատմամբ տարած անհավատալի հաղթանակից ոգևորված, Հայոց պետական եռագույնը վեր պարզած ու շրջապատված խանդավառ երիտասարդներով, հայտնվում է Արմյանսկայա փողոցում (այժմ՝ Մաշտոցի պողոտա) և շտապում Խորհրդարան…[5]»-որպիսի ՀՀ խորհրդանիշ Եռագույնը ծածանի Խորհրդարանի շենքի վրա, այդպիսով ազդարարելով Հայաստանի ազատագրումը բոլշևիկյան լծից:

Ճակատագրի հեգնանքով, սակայն Խորհրդարանի շենքի վրա դրոշը կանգնեցնելու պահին, Տիգրան Ծամիուրը զոհվում է.«ամբոխից իրեն 3 փամփուշտ է հասնում, մինչև տուն են հասցնում, մահացած է լինում, բայց դրոշը կանգնեցվում է և 40 օր ազդարարում մեր անկախությունը[6]»:

Ի լրումն ասենք, որ Տիգրան Ծամիուրի արյունով ներկված Եռագույն դրոշը պահվել է նախ Փարիզում, հետո Բոստոնում, իսկ այժմ հանգրվանել է Երևանում, ՀՅԴ պատմության թանգարանում:

Խոսելով Տիգրան Ծամիուրի մասին, կցանկանայինք մի հատկանշական փաստ ևս ընդգծել՝ հայոց գրերի գյուտի 1500 և տպագրության 400 ամյակների առթիվ՝ «Ամասիա քաղաքում, Ամենայն Հայոց սրբազնագույն Կաթողիկոս Տ.Տ. Գևորգ Ե-ի բարձր հովանավորությամբ և թույլտվությամբ կազմված կազմակերպական հանձնաժողովի կազմում ընդգրկվել է նաև Տիգրան Ծամիուրը, որը նաև առաջինն է բանախոսել «Համազգային հանդես»

թեմայով[7]»-կարծում ենք արդեն պարզ է, թե ինչպիսի հայտնի և տաղանդավոր մտավորական պետք է եղած լիներ Տիգրան Ծամիուրը, որ ընդգրկվեր հայ ժողովրդի համար չափազանց կարևոր այս երկու հոբելյանների կազմակերպական հանձնաժողովում:

Գերմաներեն լեզվի ու մշակույթի, ջութակ նվագելու և երգելու սիրահար, Գյոթեի ու Շիլլերի ստեղծագործություններից թարգմանած մտավորական Տիգրան Ծամիուրին՝ այսօր քանի՞սն են ճանաչում, ցավոք շատ քչերը և հիմնականում պատմաբանների շրջանակներում, մինչդեռ ծամիուրների մասին շարունակ պետք է խոսվի, նրանց կերպարը պետք է դրվի հայ սերունդների դաստիարակության հիմքում՝ Հայաստանին սպառնացող անվերջանալի մարտահրավերներին դեմ հանդիման ազգի, ազգային արժեքների, հայրենիքի ու պետականության գինը իմացող սերունդներ ունենալու համար:

Թվաքանակով փոքր ազգերը, մեծ են իրենց արժեքներով, և այդ արժեքներով էլ գոյատևում, հաղթում ու ի վերջո հզորանում են:

Մեր նոր և նորագույն պատմության հերոսական էջերում, Ծամիուրի նման հարյուրավոր պայծառ անուններ կան, որոնց մասին խոսելը, նրանց ստվերված կերպարները հայ հանրությանը ներկայացնելը օրվա հրամայականն է, պատմական անհրաժեշտություն, որովհետև իր պատմության ամենանվիրյալներին անծանոթ ժողովուրդը չի կարող ճիշտ արժևորել այդ նվիրյալների արյամբ ու կյանքով սրբագործված հայրենի պետականությունը… ■

Օգտագործված աղբյուրներ և գրականության ցանկ

1- «Մենք մեր մասին» ամսագիր 1(21) 2013., Ա. Ամսեյան., Տիգրան Ծամիուր., էջ 48

2- Նույն տեղում:

3- Նույն տեղում:

4- Նույնը էջ 49

5- Նույն տեղում

6- https://bit.ly/3tRdCRb

7- «Մենք մեր մասին» ամսագիր 1(21)2013., Ա. Ամսեյան., Տիգրան Ծամիուր., էջ 49:

ա) Աղբյուրներ

1.«Մենք մեր մասին» ամսագիր 1(21)2013., Ա. Ամսեյան., Տիգրան Ծամիուր.

Բ) Համացանցի նյութեր

https://anca.org

Փոլատ-Այրիի պատժական արշաւանքի գաղափարական խորհուրդը

Աւօ Գաթրճեան

Հայոց պատմութիւնը հարուստ է պատերազմներով, ճակատամարտերով, հայդուկային ու ինքնապաշտպանական կռիւներով, ինչպէս նաև պատժական արշաւանքներով: Անոնք տեղի ունեցած են հայ ժողովուրդի՝ թէ՛ օտար լուծի տակ գտնուելու ժամանակաշրջանին և թէ՛ պետականութիւն ունենալու շրջանին:

Պահպանուած են անուանի թէ անանուն բազմաթիւ տաղանդաւոր զօրավարներու և զինուորականներու հերոսական պատմութիւններ: Պահպանուած են նաև այդ պատերազմներու և ընդհարումներու նկարագրութիւններն ու հերոսապատումները, որոնք խօսուն վկայութիւններն են հայ ռազմագիտական տաղանդի և ուսուցանելի դասերու՝ իբրև փաստացի թղթածրար:

1906 թ. յունուար 6-ին՝ Ս. ծնունդի օրը, Ղարաքիլիսէի (այժմ՝ Վանաձոր) մէջ զինուորական պատիւներով հողին յանձնուեցան չորս ղարաքիլիսեցի ֆետայիներու մարմինները, որոնք մասնակցած էին երկու օր առաջ՝ յունուար 4-ին կազմակերպուած Փոլատ-Այրի (այժմ՝ Խաչարձան) թաթարաբնակ մեծ գիւղի պատժական արշաւանքին: Այս է սրտառուչ մէկ դրուագը այն արշաւանքին, որ տեղի ունեցած է Խանասորի արշաւանքէն ինը տարի ետք և եղած է աւելի բազմազինուոր, կազմակերպուած ու աւարտած է ընդամէնը 12 օրուան մէջ՝ 1905 թ. դեկտեմբեր 25-6 յունուար 1906 թ.:

Արշաւանքը կազմակերպուած է Ղազախի (այժմ՝ Իջևան) շրջանի հրամանատար Սևքարեցի Սագոյի խնդրանքին հիման վրայ, որն ուղղուած էր ընդհանուր հրամանատար Նիկոլ Դումանին (Նիկողայոս Տէր-Յովհաննիսեան): Դուման, խնդրանքը անմիջապէս նկատի առնելով, գլխաւոր դերակատարութիւն ունեցած է արշաւանքի կազմակերպման և անմիջական գործադրութեան ընթացքին մէջ՝ պատժելու համար Փոլատ-Այրի զուտ թաթարաբնակ մեծ գիւղի բնակչութիւնը. վերջինս հայ-թաթարական ընդհարումներու ընթացքին հարևան զուտ հայաբնակ Ղ(Գ)ոշավանք (այժմ՝ Գոշ) գիւղը թալանած, կոտորած և աւերած էր:

Անհրաժեշտ է նախ ներկայացնել Փոլատ-Այրիի աշխարհագրական դիրքն ու կլիմայական պայմանները:

Փոլատ-Այրի (ապա՝ Փոլատ, իսկ այժմ՝ Խաչարձան) կը գտնուի Հայաստանի Հանրապետութեան հիւսիսը (Տաւուշի մարզը)՝ Իջևանի շրջանը՝ Գոշ գիւղին հարաւը՝ խճճուած ճանապարհի վրայ, մակերեսը՝ 11.1 կմ, Երևանէն 124 կմ հեռու, Խաչարձան գէտի գետաբերանի մօտ, ծովի մակերևոյթէն բարձրութիւնը՝ 1050 մ: Շրջկեդրոնէն 18 կմ հարաւ-արևմուտք ինկած անտառային շրջան է: Գիւղի արևմուտքին կայ եկեղեցի մը: Խաչարձանէն դէպի արևմուտք անհարթ ճանապարհ մը կ'երկարի դէպի Ճերմակավանք (նախապէս՝ Աղքիլիսա) և Գեղաթափ (նախապէս՝ Չիչաքպուլաղ):

Այս ժամանակահատուածում Պաքուի թաթարներու մէջ արդէն իսկ տարածուած էր այն չարաշուք համոզումը, որ կրնան անպատիժ թալանել, կողոպտել ու կոտորել հայերը, և կառավարութիւնը իրենց կողքին է: Իսկ

հայկական հողատարածքի վրայ գտնուող թաթարները, քաջալերուելով և հովանաւորուելով Պաքուի իրենց առաջնորդներէն, համաիսլամական և համաթրքական գաղափարախօսութեամբ արդէն մոլեգնած, տարբեր տարածաշրջաններու մէջ զանազան յարձակումներ և բախումներ կը նախաձեռնէին՝ սկսելով Երևանէն և տարբեր տեսակի վնաս հասցնելով հայ բնակչութեան, ինչ որ պատճառ դարձած էր, որ երկու կողմերուն միջև թաղային բուռն բախումներ տեղի ունենան, և շրջանի բնակչութիւնը ահաբեկուի ու երբեմն նոյնիսկ փախուստի դիմէ: Այդ ժամանակաշրջանին Երևան կը գտնուէր հայդուկապետ Նիկոլ Դումանը և հոն զինուորական դասընթացքներ կը կազմակերպէր՝ ռազմագիտական և այլ վարժական դասընթացքներ ուսուցանելով, որպէսզի Երևանի ու շրջակայ գիւղերու պաշտպանութեան համար փորձառու մարտիկներ պատրաստէր:

Դումանի հրամանով բոլոր տուներու դարպասները միշտ բաց պէտք է մնային, որպէսզի հայ մարտիկները ամէնուրեք կարենային ամէնէն լայն ազատութեամբ մտնել և ելլել: Միւս կողմէ՝ մարտիկները պարտաւոր էին հսկել բնակչութեան անդորրը: Այդ օրերուն էր, որ Դուման տուեալ պայմաններուն մէջ կրաւորական ինքնապաշտպանութիւնը անհեթեթ կը նկատէր և զայն կը փոխարինէր յարձակողական ձեռնարկներու: Այստեղ խիստ անհրաժեշտ կը համարենք այդ օրերուն Դումանի յոյժ կարևոր հրահանգներէն մէկը, ուր կ'ըսէր. «Որտեղ որ թուրքերը մեզմէ զոհեր խլեն, հայկական ուժերը պարտաւոր են անմիջապէս եռապատիկը խլել անոնցմէ»:

Դումանի վերոնշեալ վրէժխնդրական ու բարոյահոգեբանական հրահանգը մեզի ցոյց կու տայ, որ հայ-թաթարական ընդհարումներուն ժամանակաշրջանին ան հայութեան ինքնապաշտպանութեան համար զինուորական շատ խիստ օրէնքներ որդեգրած էր, և եթէ կը կարծուի, կամ շատեր կը խորհին, թէ վրիժառութեան բանաձևում հանդիսացող «Ակն ընդ ական, ատամն ընդ ատաման» օրէնքը օգտագործուած է, ապա անոնք չարաչար կը սխալին, որովհետև հրահանգը յստակ էր՝ «մէկ հայու փոխարէն երեք թաթար»:

Հայ և թաթար ժողովուրդներու միջև տեղի ունեցած բախումները հետզհետէ պիտի զարգանային, և հետագային հայ-թաթարական ընդհարումներ անունով ծանօթ պիտի դառնար այն զարհուրելի մահափորձը, որ Պաքուի համաթուրանական օճախը կազմակերպեց 1905 թ. Կովկասի հայութեան կեանքին դէմ: Արդ, ցարական կառավարութեան հակահայկական դաւերուն համար Պաքուն էր ամէնէն պարարտ գետինը, ուր ռուս իշխանութիւնը ուղղակիօրէն կը քաջալերէր թաթարներու նախայարձակ ախորժակները, իսկ վրացիները իրենց չէզոքութեամբ և լռութեամբ զօրավիգ էին թաթարներուն: Սակայն հայ ժողովուրդը պիտի պատասխանէր առաջին շփոթութենէ ետք, ուշ, բայց արժանաւոր կերպով:

Գաւառներու ինքնապաշտպանութեան հրամանատարներուն հետ հաստատած անխափան կապը Դումանին հնարաւորութիւն կու տար հաստատակամօրէն ղեկավարելու անոնց գործողութիւնները և ժամանակին կազմակերպելու շրջաններ առաքուող ռազմական օգնութիւնը, նոյնիսկ ամէնէն հեռու Շամշատին-Ղազախ շրջանը, որուն ղեկավարն էր Սևքարեցի Սագօ:

Այսպէս, Խանասորի կամքը մարմնաւորող հերոսը՝ Ն. Դումանը, այս անգամ պիտի կազմակերպէր պատժական այլ արշաւանք մը, երբ «հակայարձակումը հրամայական» կը գտնէր՝ պատժելու և զսպելու համար թշնամիին զինեալ խուժանները, որոնք հարբած էին համաթրքական և համաիսլամական նկրտումներով: Ղազախի շրջանի ինքնապաշտպանութեան խումբերու ղեկավար Սևքարեցի Սագօ դումանեան փոխվրէժի պարտադիր սկզբունքներով կ'որոշէ պատժել թաթարաբնակ գիւղը՝ ծաւալելով մարտական գործողութիւն, հետևաբար իր հրամանատարութեան տակ գտնուող ուժերի անբաւարար ըլլալուն համար ան օգնութիւն կը խնդրէ Ն. Դումանէն: Ն. Դուման կ'ուղարկէ իր երկու խմբապետներէն Սեդրակ Ջալալեանը (Սէթօ) և Արտաշէս Մելքոնեանը, երկուքն ալ՝ Ն. Դումանի զինուորական «Բոյրազ» աշակերտական դպրոցէն վկայեալ, յատուկ յանձնարարութեամբ: Ռազմավարական ու մարտավարական պաշտպանողական ու յարձակողական կռիւներու մէջ մասնագիտացած հարիւրապետներ էին անոնք:

ՀՅ Դաշնակցութիւնը անվարանօրէն որոշեց և յանձն առաւ հայութեան պաշտպանութիւնը պատժական արշաւանքով՝ փորձառու խմբապետներու ղեկավարութեամբ, մանաւանդ հայդուկապետ Նիկոլ Դումանի ռազմական տաղանդի, արագ և սխրալի կարգադրութեամբ: Երկու խմբապետներ կը լծուին արշաւանքի կազմակերպման աշխատանքներուն:

Դեկտեմբեր 23-25-ին մինչև Դիլիջան համատարած ձիւն էր: Այնուհետև խմբապետները նախ կ'ուղղուին Քանաքեռ, հոն կը ստանան փամփուշտներ և այլ կարևոր մթերքներ ու, բեռնելով երկու սահնակներու վրայ, ճամբայ կ'ելլեն: Ապա, շրջելով Նոր Պայազիտ, Ղարաքիլիսէ և Դիլիջանի շրջանները, կը հաւաքեն արշաւախումբի մաս կազմող զինուորներ:

Շրջաններու կոմիտէները մեծ բծախնդրութեամբ կը կազմակերպեն վստահուած բոլոր աշխատանքները: Կ'ընտրուին լաւագոյն հրացաններն ու ռուսական բանակի մէջ ծառայած նախկին զինուորները: Կը կազմուին նաև լրացուցիչ ցանկեր՝ ըստ կարիքի կազմ ու պատրաստ ըլլալու համար:

Փոլատ-Այրիի պատժական արշաւանքին կը մասնակցին 300 զինեալ հայդուկներ, արշաւախումբը կը բաժնուի երկու խումբի, իւրաքանչիւրը՝ 150 մարտիկներէ բաղկացած, առաջինը՝ Սէթոյի, երկրորդը՝ Արտաշէս Մելքոնեանի հրամանատարութեամբ: Կային աւելի քան 50 շալակաւորներ՝ պարենաւորման համար, և Կարմիր խաչի՝ հինգ հոգանոց խմբակ մը՝ Թիֆլիսէն ղրկուած, որոնցմէ երեքը՝ օրիորդներ՝ իրենց դեղորայքով, զինուած ատրճանակներով և միաժամանակ բերելով երեք ծանր ռումբեր՝ ռազմիկներուն համար:

Ֆետայիները կը կեդրոնանան նախ Դիլիջան: Հոն Դիլիջանի Կարմիր խաչի ընկերուհիները երկու օրուան մէջ զարմանալի արագութեամբ իւրաքանչիւր զինուորի համար կը տրամադրեն բուրդէ հաստ գուլպաներ, ձեռնոցներ, տրեխներ, դեղորայք և մթերքի պայուսակ: Այսինքն՝ երկու օրուան մէջ զգեստաւորուած և պարենաւորուած է երկու վաշտ զինուոր:

Սևքարի մէջ ընդհանուր հրամանատար Սևքարեցի Սագոյի ներկայութեամբ տեղի կ'ունենայ արշաւախումբի երկու խմբապետներու և շրջանային խմբապետներու հրամանատարական ժողով մը, ուր մանրամասնօրէն կը քննարկուին և նոր դասաւորումներ կը կատարուին իրագործուելիք արշաւանքին համար: Արշաւանքը տեղի կ'ունենայ մթնոլորտային շատ անբարեբաստ պայմաններու մէջ, 1200-1500 մեթր բարձրութեամբ Միափոր (Մուրղուզ) լեռնաշղթային հիւսիս-արևմտեան սկզբնաւորութեան վրայ, մօտ մէկ մեթր ձիւնի մէջ և ձիւնամրրիկի ժամանակ:

Խմբապետները թաթարաբնակ գիւղին մօտ երկար հետախուզութենէ ու ուսումնասիրութենէ յետոյ կու գան այն եզրակացութեան, որ, առանց գիւղին մօտ գտնուող գոմերը գրաւելու, հնարաւոր չէ յարձակիլ Փոլատ-Այրիի վրայ: Գոմերը 6-ն էին, որոնց մէջ կը թաքնուէին 25-30 զինուած թուրք-թաթարներ: Անհրաժեշտ էր նախ յարձակիլ ու գրաւել գոմերը, որպէսզի կարելի ըլլար խուժել անտառապատ լեռներով շրջապատուած ընդարձակ դաշտին վրայ ինկած թաթարաբնակ Փոլատ-Այրին:

Այդ օրը անբարեբաստ էր յարձակումի համար, որովհետև ամբողջ գիշերը կը ձիւնէր հանդարտ ու առանց մրրիկի: Իսկ միւս կողմէ՝ Փոլատ-Այրին յաջող պաշարելու համար անհրաժեշտ կը նկատուի շրջանաձև բոլոր կողմերէն հաւասարապէս մուտք գործել գիւղ: Իսկ լեռներու լանջերուն վրայ՝ երկու տեղով, հեղեղներու ուժգնութեամբ յառաջացած էին խոր ձորեր, որոնք ձիւնով էին լեցուած և կը զրկէին հայդուկախումբերը իրար միանալու կարելիութենէն: Ուստի ռազմագիտական ճարտարութեամբ արշաւանքը կը բաժնուի երկու ինքնուրոյն մասերու, որոնցմէ մէկը կը ստանձնէ հարիւրապետ Սէթոն, որ պիտի մնար իր դիրքը, իսկ միւս խումբը կը ստանձնէ հարիւրապետ Արտաշէսը, որ, երկար ճամբայ կտրելով, պիտի անցնէր Սէթոյի հակառակ ուղղութեան, և այդպիսով յարձակումը սկիզբ պիտի առնէր: Պէտք է ըսել, որ օդն այնքան անբարեբաստ կ'ըլլա, որ լեռնական այդ հայդուկներն անգամ կ'ըսէին, որ «ասանկ օդին ալ մարդ իր կամքով կռուի կ'երթայ»: Սակայն ազգային պարտաւորութիւնը յստակ էր ու անյետաձգելի: Ձինավարժ, վրէժխնդիր ու գայլի պէս յանդուգն մարտիկները, յիշելով ցուրտ եղանակին

հայդուկային կռիւներու մասնակից ֆետայիներու նշանաւոր երգի բառերը՝ «Թիփի բորան մութ գիշերին պտտում է ֆետային»-ը, կ'անտեսեն բաւական ծանր ու աննպաստ պայմանները և, ձիւնը յաղթահարելով, արագօրէն կ'անցնին յարձակումի:

Յարձակումը տեղի կ'ունենայ յաջորդ օրը՝ արշալոյսին, ուժեղ համազարկերով թշնամին կողմէ, որ դիրքաւորուած էր գոմերուն մէջ և անոնց շրջակայքը: Իսկ հայ ռազմիկները մոլեգին արագութեամբ կը շտապէին ամէն ջանք թափելով գրաւելու գոմերը, ապա անոնց դիմաց պիտի բացուէր կաթսայաձև և սէգ լեռնաշղթայով շրջապատուած ընդարձակ դաշտի մը վրայ տարածուած մեծ գիւղը՝ Փոլատ-Այրին՝ հայդուկապետ Ն. Դումանին հրահանգած պատժական արշաւախումբին թիրախը: Տեղի կ'ունենայ զօրաւոր համազարկ, հայդուկները առանց կանգ առնելու, մարտունակ, բարձր ոգիով և ամէնայն կարգապահութեամբ ու արագութեամբ կը շտապին մօտենալու գոմերուն: Թշնամին ահաբեկուած էր մարտիկներու ինքնավստահ շարժումէն և բարոյալքուած կը լքէ դիրքն ու կը փախի դէպի Փոլատ-Այրի: Սակայն այն թաթարները, որոնք գոմերէն կը փախչէին, կը լեցուէին ժայռակոյտի մը մէջ, որ կը կոչուէր Ձաղացի դիրք: Առանց այս դիրքը գրաւելու՝ հնարաւոր չէր գիւղ մտնել: Բարեբախտութիւն էր, որ Ձաղացի դիրք տանող լերան լանջը անտառապատ էր: Ուստի երկար ընդհարումներէ ետք հայ ռազմիկներու մէկ յիսնակը ուժեղ կրակի տակ կը պահէ այդ դիրքը, մինչև որ երկու յիսնակներն ալ աջ ու ձախ կողմերէն՝ անտառի մէջէն, մօտենային դիրքին ու սկսէին գօտեմարտը, որմէ ետք առաջին յիսնակը, կրակը դադրեցնելով, խոր ձիւնով ծածկուած անտառը, որ շատ զառիվար էր մէկ ծառէն միւս ծառը, դէպի վար պիտի գլորուէր: Թշնամին առատօրէն հայդուկներու շարքերուն կը կրակէր ցանուցրիւ, սակայն ապարդիւն: Մարտիկներու շեշտակի կրակոցին թիրախ դարձած թշնամին կը լքէ այդ անառիկ ամրութիւնը և կը փախի դէպի գիւղ: Մարտիկները կը գրաւեն Ձաղացի դիրքը, յետոյ՝ կամաց-կամաց գիւղը ամբողջութեամբ: Պատմական կարևորութեան համար պէտք է նշել, որ հայ ֆետայիներու կողմէ Փոլատ-Այրիի արշաւանքին ալ դրսևորուած է բարոյական այն դասը, զոր Խանասորի արշաւանքին ընթացքին իրագործուած էր՝ կիներուն, մանուկներուն դէմ երբէք ուժ պէտք չէր կիրարկել: Քաջ գիտենք, որ վերոնշեալ հատկանիշը յատուկ է հայ մարտիկին միայն:

Հարիւրապետ Սէթոյի հմտութեամբ վերջ կը տրուի նաև դիմադրութեան գլխաւոր ղեկավար պէկին, այն պէկին, որ, օգտուելով ցարական կառավարութեան թողտուութենէն, բնաջինջ ըրած էր խաղաղ ու աշխատասէր հայկական Ղ(Գ)ոշավանք գիւղի բնակչութիւնը:

Արշաւախումբի մասնակիցները անխտիր՝ տասնեակներն ու յիսնակները, ձիւներու և անտառային դժուար ու ծանր պայմաններուն մէջ կը պաշարեն Փոլատ-Այրին, ուժգին ընդհարումներ կ'ունենան թշնամիին հետ: Անոնք ցոյց կու տան մարտական մեծ կորով, հմտութիւն, պատրաստակամութիւն ու մանաւանդ քաջութիւն: Աննպաստ պայմաններու մէջ դիրքէ դիրք կը մարտնչեն, մինչև որ թշնամին պարտութեան մատնեն: Փոլատ-Այրին կը գրաւուի, և պատիժը կ'ամբողջանայ՝ թաթար բնակչութիւնը՝ կիները, տարեցներն ու մանուկները

Փոլատ-Այրի՝ ներկայիս Խաչարձան գիւղը

տեղափոխելով և մնացած տուներն ալ կրակի տալով...

Մինչ այդ Սնքարեցի Սագօ սուրհանդակի միջոցաւ հրահանգած էր արշաւախումբի հրամանատարներուն, որ թուրք-թաթարները դիմած են փոխարքային և օգնութիւն խնդրած՝ զիրենք պաշտպանելու համար ընդդէմ հայ ֆետայիներու, որոնք մեծ բազմութեամբ կ'արշաւեն Փոլատ-Այրիի ուղղութեամբ: Ատոր հետևանքով հրամայուած է Ղազախ գտնուող ռուս հեծելազօրքին 250 զինուորներ ղրկել, ֆետայիները բռնել, զինաթափել և բանտարկել, դիմադրութեան պարագային՝ կոտորել: Ուստի, համաձայն հայկական վերին հրամանատարութեան հրահանգին, հարկ էր ամէն կերպ խոյս տալ ռուսական ուժերու հետ ընդհարումէ: Առ այդ արշաւախումբի հրամանատարները ծրագրուած նահանջով, առանց խուճապի կը դիմեն անմիջական և մանրամասնօրէն նախագծուած վերադարձի դէպի Դիլիջան: Ճամբու ընթացքին տեղի կ'ունենայ չորս հայդուկներու դիակներու և եօթը վիրաւորներու փոխադրութիւնը նախ Ղ(Գ)ոշավանք, ապա Դիլիջան: Նշենք, որ բոլորն ալ ղարաքիլիսեցի և ունևոր ընտանիքի զաւակներ էին: Ինչպէս նաև կը փոխադրուին թշնամիէն հաւաքուած արժէքաւոր զէնքերը, նոյնիսկ թշնամիէն վերցուած կենդանիները, որ համրանքով Դիլիջանի մէջ կը յանձնուին տեղական կոմիտէին ստացագրերու փոխարէն:

Փոլատ-Այրիի պատժական արշաւանքը վերջ կը գտնէ արշաւախումբի ամբողջական ցրուումով՝ Նիկոլ Դումանի վերջնական որոշումով, որ աւարտած էր հարիւրապետ Սէթոյի զեկուցագրի ու Սնքարեցի Սագոյի նամակին հիման վրայ:

Փոլատ-Այրիի արշաւանքի իրականացման ընթացքին ցայտուն կը դառնան զինուորական արհեստավարժութեան հմտութիւնն ու բարձր մակարդակը, անոր նպատակաուղղուածութիւնը և թողած բարոյական աւանդը:

Փոլատ-Այրիի արշաւանքին հիմնական բնոյթն ու շարժառիթը անկասկած պատժականն էր: Պատժականը՝ ոչ միայն զուտ վրէժխնդրական մղումներէ թելադրուած, այլև հիմնականին մէջ ժողովուրդի բարոյահոգեբանական պատրաստուածութեան աստիճանի բարձրացման առաջադրանքով: Եթէ մէկ կողմէ հայաբնակ գիւղի բնակչութեան կեանքին սպառնալիք դարձած թաթարներու սաստումն էր, անոնց զգաստացնելու կարծր ոճն ու պատասխանը, միւս կողմէ՝ նաև թալանի, կոտորածի և աւերածութեան հետևանքով ստեղծուած համընդհանուր յուսալքման պատկերը

շրջելու յեղափոխական կամքի դրսևորումը:

Փոլատ-Այրիի արշաւանքը թէև խորքային իմաստով պատժական վրէժխնդրական գործողութիւն է, կազմակերպուածութեամբ և ընթացքով յար և նման է Խանասորի արշաւանքին, սակայն տարողութեամբ կը տարբերի անկէ, որմէ պէտք է հետևցնել.

ա.- Փոլատ-Այրիի արշաւախումբը, մէկուկէս տարուան փոխարէն, 12 օրուան մէջ ծրագրուած ու ձևաւորուած է:

բ.- Արշաւանքը կատարուած է ձիւնոտ վատ ժամանակաշրջանին:

գ.- Արշաւախումբին մաս կազմած են 350 ֆետայիներ:

դ.- Կռիւի ընթացքին արշաւախումբը ընդամէնը չորս նահատակ ունեցած է:

Դաշնակցական մարտիկները, որոնք ուխտած էին հայ ժողովուրդին կեանքը և ունեցուածքը պաշտպանել, ազդու հակադարձումներով պատուհասեցին նախայարձակ թաթարաբնակ գիւղի՝ Փոլատ-Այրիի զինեալներն ու բնակչութիւնը:

Բնականաբար, արշաւանքին նպատակը մէկն էր՝ զօրաւոր պատգամ մը հասցնել թաթար ղեկավարներուն և անոնց նեցուկ կանգնողներուն, որոնք ահ ու սարսափ կը տարածէին հայկական հողատարածքին վրայ գտնուող գիւղերուն ու քաղաքներուն մէջ: Պատգամը հասաւ Փոլատ-Այրիի թաթար տղամարդոց վերջնական բնաջնջումով, որոնք իրենց արիւնալի դերակատարութիւնը ունեցած էին հայաբնակ գիւղի թալանին և կոտորածներուն մէջ:

Կարևորելով Փոլատ-Այրիի արշաւանքի ռազմավարութեան և մարտունակութեան հոլովոյթը՝ կը շեշտադրուի հիմնական սկզբունք մը՝ կարգապահութեան սկզբունքը, որ իւրայատուկ է յեղափոխական աշխատանքին մէջ: Ատիկա յեղափոխական կազմակերպութեան, այս պարագային՝ ՀՅ Դաշնակցութեան ընդունած որոշումը գործադրելն է, ինչպէս որ է՝ կանգ չառնելով որևէ դժուարութեան և խոչընդոտի առջև: Գլխաւորաբար այս սկզբունքն էր որ գործադրուեցաւ Փոլատ-Այրիի արշաւանքին՝ անտեսելով բնութեան, աշխարհագրական և բարբարոս թշնամիի յարուցած բոլոր դժուարութիւնները:

Յոյժ կարևոր պատժական այս արշաւանքին մասին, ցաւով սրտի, ոչ մէկ յիշատակութիւն կայ մեր յեղափոխական գրականութեան մէջ, ոչ մէկ անդրադարձ թուղթին է յանձնուած օրուան հերոսական մարտին ձեռք բերուած յաղթանակի մանրամասնութիւններու մասին՝ բացի արշաւանքի տեղանունէն: Դժբախտութիւն պիտի ըլլար, եթէ մեր պատմութեան այս փառաւոր հերոսական աքթի մասին Կարօ Գէորգեանի «Ամէնուն տարեգիրքը» աշխատութեան մէջ տեղ չգտնէր այս արշաւանքի հարիւրապետներէն Սեդրակ Ջալալեանի (ՍԷԹՕ ծածկանունով) յուշագրութիւնը (1957 և 1958 թթ. տարեգիրքերուն մէջ), և չըլլար անոր շուրջ մեր կատարած արխիւային ու հետազօտական աշխատանքը, որուն արգասիքն է այս համեստ յօդուածը:

Հայ ազատագրական պայքարի մէջ տեղ գտած պատժիչ հերոսական այս արշաւանքը, բնականաբար, իր մէջ կը խտացնէ ռազմագիտական շարք մը հմտութիւններ և խորհուրդներ, որոնք ուսանելի են մեզի և մեր հայոց զոյգ բանակներուն համար: Իբրև այդ քննութեան արդիւնք կ՚ընդգծենք հետևեալ պատգամները.

ա.- բարձր պահել հայ մարտիկին ու հրամանատարին նախաձեռնող ոգին,

բ.- հայ մարտիկին ու հրամանատարին նոյնպէս վերապահել հակահարուած տալու կորովն ու առիթը,

գ.- ուժ տալ զինուորական կազմակերպչական աշխատանքներու, ըստ կարիքի՝ յարձակողական մարտավարութիւն կիրարկել առանց երկմտանքի, անակնկալի բերել ոսոխը,

դ.- տիրութիւն ընել ազգային արժանապատուութեան նուիրական զգացումին և հայութեան շնորհել նորօրեայ յաղթանակներու հրայրքը:

Իբրև եզրակացութիւն կը հաստատենք, որ Փոլատ-Այրիի արշաւանքը անհրաժեշտութիւն էր, խիստ կարևոր և անյետաձգելի հրամայական: Այս իմաստով ալ, եթէ պիտի արժևորենք Փոլատ-Այրիի արշաւանքը, ապա կը տեսնենք, որ անիկա հայ ազգային-ազատագրական պայքարի անուանացանկին մէջ չէ գտած իր արդար տեղը, յեղափոխական գրականութեան ու Դաշնակցութեան յուշատետրին մէջ չէ ներառուած՝ հակառակ իր ունեցած փայլուն արդիւնքին՝ ռազմավարական, մարտունակութեան և մասնակիցներու պատկառելի թուաքանակին ու կարգապահութեան առումով յեղափոխական աշխատանքին բարոյական վեհութեամբ արժանաւորման իմաստով:

Վերոնշեալ կարևոր յատկութիւնները իբրև ամբողջական նկարագիր առնելով՝ կարելի է ըսել, որ հայ ֆետայիները գրեցին ժամանակակից հայոց պատմութեան մէջ փայլուն էջ մը ևս: Արդարև, 1905-1906 թուականներուն ժամանակահատուածին մէջ ինկած՝ թաթարներու կողմէ հայերու դէմ շղթայազերծուած ռազմական բախումները յայտնի դարձան հայ-թաթարական ընդհարումներ անուանումով: Վերոնշեալ ընդհարումները կոչուած են նաև հայ-թուրքական կռիւներ կամ պատերազմ:

Շուրջ մէկուկէս տարի տևած հայ-թաթարական ընդհարումներէն հայութիւնը դուրս եկաւ յաղթական՝ շնորհիւ ՀՅ Դաշնակցութեան, որն իր ռազմիկ ու ղեկավար մարտական ուժերու մասնակցութեամբ յաջողեցաւ կազմակերպել կովկասահայութեան ինքնապաշտպանութեան ծանր գործը: Շնորհիւ յարձակումը պաշտպանութեան լաւագոյն միջոցի վերածելու արուեստին՝ ոչ միայն կովկասահայութիւնը փրկուեցաւ ընդհանուր կոտորածէ, այլև հատու հարուածներ տրուեցան համաթրքական շարժումներուն:

Դաշնակցութիւնը հիմնադրութենէն ի վեր արդէն ձեռք առած էր համայն հայութեան կեանքն ու ազատութիւնը պաշտպանելու գործը և որդեգրած ինքնապաշտպանութեան լաւագոյն ձևը՝ յարձակումը:

Հայ-թաթարական ընդհարումներէն ետք ինքնապաշտպանական մեծ փորձառութիւն ձեռք ձգած ՀՅ Դաշնակցութիւն կուսակցութիւնը, իր անզուգական մարտական տեսաբանին՝ Նիկոլ Դումանին բանաձևումով, հայ ժողովուրդին սեփականութիւնը կը դարձնէր այն անփոխարինելի և անժամանցելի ճշմարտութիւնը, թէ «Եւ մի ազգ, եթէ ուզում է մնալ յարգուած, եթէ չի ուզում կորչել, պէտք է լինի զէնքի ընդունակ, միշտ պէտք է լինի կազմ ու պատրաստ՝ ինքնապաշտպանութեան համար, մանաւանդ

քաղաքական ցնցումների վայրկեաններում»:

Կասկածէ վեր է, որ անհետ կորուստէ կը փրկենք այս յոյժ արժէքաւոր դիւցազնապատումը՝ ՀՅ Դաշնակցութեան յանդուգն ծրագիրներէն մէկուն՝ Փոլատ-Այրիի արշաւանքին գործադրութեան մանրամասնութիւնները, որ տեղի ունեցած է հայ-թաթարական ընդհարումներու նախօրեակին: Հակառակ իր բացառիկ յաջողութեան՝ շատերուն համար անակնկալ պիտի թուի Փոլատ-Այրիի արշաւանքին մասին տեղեկանալը 115 տարի անց: Իսկ միւս կողմէ՝ պատժիչ այս գործողութիւնը անկասկած կը համալրէ և կը հարստացնէ յեղափոխական գրականութիւնը:

Վերջապէս, խիստ անհրաժեշտ է, որ հայ ազգի իղձերուն իրագործման համար այս դէպքէն ուղղութիւն ստանանք, ինչպէս նաև յիշենք վերոնշեալ բարոյական բոլոր յաւերժական դասերը, զորս հայ ֆեդայական շարժումը ժառանգ ձգեց սերունդէ սերունդ՝ հարստացնելով հայ ազգային բարոյական արժէքային համակարգը:

ՓՈԼԱՏ-ԱՅՐԻԻ ԱՐՇԱՒԱՆՔԸ

Երգ՝ նուիրուած Փոլատ-Այրիի պատժական արշաւանքին

Խօսք՝ Աւօ Գաթրճեանի

Երաժշտ.՝ Ռաֆֆի Ապէճեանի



Հայդուկապետ Նիկոլ Դուման
Հրահանգեց. «Դէպ Դիլիջան,
Սևքարեցի Սագոյի օգնել,
Ղոշավանքի վրէժ լուծել»:

Կորիւ «Սէթօ» և Արտաշէս,
Խմբապետներ՝ վեհ, արագեա,
Վրէժխնդիր ու բոցածին,
Արշալոյսին արշաւեցին:

Կրկ.-
Երեք հարիւր յիսուն քաջերով,
Խրոխտ ու անյաղթ կորովով
Պաշարեցին Փոլատ-Այրին,
Ձիւնոտ լեռներ թրթռացին:
Դաշնակցական դիրքերէն բաց
Կարկուտի պէս գնդակ տեղաց,
Գրաւուեցան Ձաղացի դիրք
Եւ գումերը հուրով սաստիկ:

Թաթար ամբոխը զարհուրած
Կը փախչէր աջ, ձախ մոլորած,
Բայց անհնար, փախուստ չունէր.
Փոլատ-Այրին հրկիզուած էր:

Կրկ.-
Երեք հարիւր յիսուն քաջերով,
Խրոխտ ու անյաղթ կորովով ...

Պիտանին եւ «անպիտանին»

Վրէժ-Արմէն

«Ինչի՞ պէտք ունինք» (De quoi avons-nous besoin?) վերնագրուած հետաքրքրական յօդուած մը ստորագրած է Մուսթաֆա Ֆահիմի (Mustapha Fahmi)՝ Շիգութիմիի մէջ Քեպէգի համալսարանի անգլիական գրականութեան դասախօսը, «Լը Տվուար» (Le Devoir) օրաթերթի 2020 դեկտեմբեր 24ի թիւին մէջ:

Ինչի՞ պէտք ունինք...

Հարցը կը ծագի համաճարակի շրջանին նուազագոյն կարիքներու բաւարարման խնդիրէն. ո՞ւր պէտք է դրուի շեշտը, մեր ո՞ր կարիքները կենսական պիտի նկատուին ու անպայման գոհացուին պետական յատուկ նախաձեռնութիւններով, և ո՞ր կարիքները կրնան սպասել կամ անտեսուիլ գէթ այս օրերուն: Ինչ բաներէ կախում ունին մեր վերապրումը, համավարակի յաղթահարումը: Խիստ այժմէական այս հարցին պատասխանը գրողը կը գտնէ Շէյքսփիրի «Լիր արքայ» գործին մէջ: Ծեր արքան իր թագաւորութիւնը և հարստութիւնը կը բաժնէ երկուքի ու կը յանձնէ իր երկու դուստրերուն՝ պայմանաւ, որ տարուան կէսը ապրի անոնցմէ առաջինին, իսկ միւս կէսը՝ երկրորդին քով՝ իրեն վերապահելով արքայի տիտղոսը և հարիւր ասպետ պահելու իրաւունքը, ասպետներ, որոնք իրեն պիտի ընկերանան իր ճամբորդութիւններուն և ելոյթներուն ընթացքին:

Դուստրերը, սակայն, շուտով կ՚անդրադառնան, թէ այնքան ալ դիւրին չէ իրենց շուրջ այդքան ասպետ պահելը: «Ինչ պէտք ունիս այդքան ասպետի»,- կ՚ըսեն անոնք իրենց հօր: «Արդէն այնքան մեծ թիւով սպասաւորներ ու պահակներ ունինք, ինչ պէտք կայ 100 ասպետի, նոյնիսկ 50 ասպետի կամ 25 ասպետի»:

Թագաւորի պատասխանին մէջ Ֆահիմի կը տեսնէ գրականութեան բարձրակէտերէն մին, ուր Շէյքսփիր կու տայ կեանքի ամբողջ իմաստասիրութիւն մը: «Ո՜հ,- կ՚ըսէ Լիր,- մի՛ կշռադատէք կամ մի՛ հաշուէք կարիքը, և այդ՝ պարզ այն պատճառաւ, որ եթէ մարդ արարածները սահմանափակուէին միմիայն իրենց պէտք ունեցածով, անոնց կեանքը պիտի նմանէր անասուններու կեանքին»:

Այո՛, դիտել կու տայ յօդուածագիրը, «Իրապէս ինչի՞ պէտք ունինք ապրելու համար՝ ուտել, խմել, ցուրտէն ու շոգէն պաշտպանուիլ ու սերնդագործել՝ մեր տեսակը շարունակելու համար: Ասոնք ճիշտ այն բաներն են, որոնց պէտք ունին անասուններն ալ: Ուրիշ ի՞նչ կը մնայ զանազանելու համար մեզ անոնցմէ. երաժշտութիւնը, գրականութիւնը, արուեստները, մարզախաղերը, որոնք կենսական չեն մեր վերապրումին համար, բայց որոնք կը նպաստեն՝ հարստացնելու մեր կեանքը ու բարձրացնելու մեզ մակարդակի մը, որուն չեն կրնար հասնիլ անասունները»:

Աւելի չեմ ուզեր անդրադառնալ այս յօդուածին, որուն շարժառիթը, ինչպէս ըսի, համավարակն է ու պետութեան ցոյց տուած աջակցութիւնը՝ զայն յաղթահարելու համար: Պահանջքը, իհարկէ, այն է, որ կարևորութիւն տրուի նաև արուեստներուն, արուեստի գործիչներուն ու տուներուն և այլ հասարակական միաւորներու, որպէսզի անոնք ալ կարենան շարունակել գործել, ստեղծագործել ու հարստացնել մեր կեանքը:

Յօդուածը, սակայն, զիս կը տանի այլ մտորումներու՝ մեր անցեալի բաւիղներէն անցընելով զիս:

Ի վերջոյ, եթէ մեր պատմութեան ակունքներուն դրուած է Հայկի ու Բելի առասպելը, այդ նշանակութիւն մը պէտք է ունենայ մեզի համար: Չէ՞ որ Բելը Հայկին ու իր ժողովուրդին կը խոստանար հանգիստ կեանք ու կարիքներու ամբողջական գոհացում բարեբեր հողատարածքի մը վրայ՝ պայմանաւ, որ ան յօժարէր ապրիլ ի՛ր մականին տակ, ի՛ր ուզած ձևով: Իսկ Հայկ կը նախընտրէր երթալ վե՛ր՝ լեռները՝ գուցէ ժայռոտ-տատասկոտ, բայց ըլլալ ազատ, ըլլալ սեփական կենցաղին ու հաւատալիքներուն տէրը:

Այդ երևոյթը կը կրկնուի մեր պատմութեան ամբողջ ընթացքին: Ո՛չ պարսից արքայից արքաներու, ո՛չ արաբ նուաճողներու սպառնալից կեցուածքներն ու վայրագ յարձակումները կրցան մեզի պարտադրել իրենց կրօնն ու ապրելակերպը, հակառակ որ ենթարկուելու պարագային պիտի ապրէինք ու վստահաբար նաև բազմանայինք, ինչպէս այլ ժողովուրդներ, որ ենթարկուեցան, մինչ մենք որդեգրեր էինք քրիստոնէութիւնը, որովհետև ան հարազատ էր մեր բնութեան, թէկուզ ան ալ դուրսէն կու գար մեր երկիրը: Եւ այսպէս՝ մինչև մեր օրերը:

Վերջին հաշուով, ինչ է ինքնորոշման իրաւունքը, եթէ ոչ վերապրելու այդ անմիջական կարիքներէն անդին ապրելու, գործելու և ստեղծագործելու իրաւունքը՝ մեր էութեան հարազատ ըլլալու ու մնալու վճռականութեամբ:

Ինչ է, այո՛, մեր սեփական հողին վրայ մեր սեփական կեանքը ապրելու մեր երազը, եթէ ոչ մարդը անասունէն տարանջատող այդ ամենէն մարդկային, ամենէն տարրական իրաւունքին պահպանումը:

Ամեն անգամ, երբ այս բաներուն մասին կը գրեմ, չեմ կրնար չվերադառնալ մեր գաղափարախօս մեծ ընկերոջ՝ Նաւասարդեան Վահանի այսպէս կոչուած «Քաղաքական կտակ»ին, որուն հետևեալ բառերը յաւերժ դրոշմուած կը մնան մտքիս մէջ.

-«Արիւն և արցունք չտեսնել հայ ժողովուրդի աչքերուն մէջ:

-Հայ շինականը տէր դարձնել իր արդար վաստակին:

-Հաւատացեալը ազատ ձգել՝ անվախօրէն իր Աստծուն աղօթելու:

-Խորտակել հայ մտածումին վրայ ծանրացած շղթաները:

-Հայ լեզուն ազատել զինք կաշկանդող կապանքներէն:

-Թոյլ տալ, որ հայ հանճարը ազատօրէն ծաղկի ու ստեղծագործէ իր ազատ հայրենիքին մէջ:

-Ազատ տեսնել հայ քաղաքացին ազատ Հայաստանի մէջ»:

Իրաւունք չունէ՞ր Լիր արքան: ■

Քաղաքացիներ.

Բոլշևիկյան իշխանությունը Հայաստանի աշխատավորության համար եղավ տնաքանդության և սարսափի շրջան։ Հայ իրականության հետ ոչ մի կապ չունեցող այդ ցնորամիտները մորեխի նման անցան մեր երկրի վրայով, սրբեցին-տարան ամեն ինչ։ Եվ հայ գյուղացին ու բանվորը, որբն ու զինվորը, որ հազիվ մի քիչ շունչ էին քաշել և իրենց մի կտոր չոր հաց ապահովել, նորից մնացին ձեռնունայն ու սոված։

Հայրենիքի փրկության կոմիտեն, տապալելով բոլշևիկյան բռնապետությունը, ամենից առաջ մտահոգված է հաց չունեցող քաղաքացիներին, զորքին ու որբերին հաց հասցնելու գործով։ Եվ որովհետև Հայաստանի սահմանները դեռ փակ են դրսի աշխարհից պարեն ստանալու համար, առայժմ հացը պետք է ստացվի միայն երկրի ներսից։ Որքան էլ թալանված լինի Հայաստանը, գյուղերում և քաղաքներում դեռ կա որոշ քանակությամբ հացի ավելցուկ, որը պետք է տրամադրվի կառավարությանը, իհարկե վարձատրությամբ։

Այդ նպատակով Հայրենիքի փրկության կոմիտեն հանձնարարել է տեղական Հայր. փրկ. կոմիտեներին պարենավորման նախարարության վարիչի անմիջական ղեկավարության ներքո շտապով կազմակերպել հացի գնումը։ Նմանապես հանձնարարել է նաև կամավոր նվերներ հավաքել ժողովրդից՝ պետական կարիքների համար։ Գնելիք հացահատիկի գները և այլ պայմանները պետք է որոշվեն տեղում Հայր. փրկ. տեղական կոմիտեի կողմից, պարենավորման նախարարության վարիչի հավանությամբ։

Կազմակերպելով հացի գնումն ու հավաքումը՝ Հայր. փրկ. կոմիտեն խորապես համոզված է, որ այն ժողովուրդը, որը հանուն ազատության թնդանոթների դեմ դուրս եկավ և ահագին զոհեր տվեց, չի խնայի և նյութական միջոցը և կտա կառավարությանը իր հացի ավելորդ մասը։ Հայաստանի ազատության ամրացումն ու ապահովությունը ամենից շատ կախված է պարենավորման հարցի լուծումից և առաջին հերթին՝ չունևոր ժողովրդին հաց հասցնելուց։

Հայր. փրկության կոմիտեն կոչ է անում բոլոր քաղաքացիներին և գյուղացիներին օգնելու իրեն՝ պարենավորման ճգնաժամից էլ պատվով դուրս գալու։
Տվեք ձեր ավելորդ հացը Հայրենիքի փրկության կոմիտեներին։

Կեցցե՛ Ազատ Հայաստանը։

Հայր. փրկ. կոմիտեի նախագահ՝ Ս. Վրացյան
Պարենավորման գործերի վարիչ՝ Վ. Մինախորյան

22-ը փետրվարի 1921 թ.

Զարթնե՛ք: Մեր հայրենիքը մեր աչքի առջև կործանում են: Այսպիսի բան մեր հազարավոր տարիների պատմության մեջ տեղի չի ունեցել: Պարտվել ենք պատերազմներում, հաղթել ենք, երբեմն երկիր ենք կորցրել, բայց այսպիսի դավաճանություն մինչ օրս չէինք տեսել:
Գլուխներդ բա՛րձր պահեք. դուք հաղթող ժողովուրդ եք: Մենք նորից պետք է վերականգնենք հաղթողի հպարտությունը, զգացմունքն ու բոցը:
Մեր ժողովուրդը մեծ ապագա է ունենալու: Ժպտացե՛ք ու պայքարե՛ք...

Վազգեն Մանուկյան
Ազատության հրապարակ, 12.02.2021 թ.

ԴՐՕՇԱԿ